

Հ. ԻՆՃԻԿՅԱՆ

ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
ԴԱՏԵՑ



3K111(052)


h-58

Հ. ԻՆՃԻԿՅԱՆ



# ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԵՑ

823



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1978

10302 (55)

Ի \_\_\_\_\_ «Տ» 78

701 (01)

Գրքույկում պատմվում է բուլղար-լեհիկյան Բողդան Միրզաչանի կենտ-  
յանցի կյանքի ու հեղափոխական գործունեության մասին:  
Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Գ.Ա. Արևի ազգերը նշան է ինքն-  
գույնի գրադարանի, սխոլ  
և պարզապես բանագրության  
մշտ ապրանքները զրա ֆունկցիո-  
նալիտի և կոնտակտ:

Մարտի 1979

3.1.1979

Բոգդան Միրզաչանի Կնունյանցը 1978 թ. նոյեմբերի 26-ին կդառնար 100 տարեկան: Կդառնար... Սակայն նա չապրեց այդ տարիների անգամ մեկ երրորդը: Նա պատանի էր, երբ զինվորագրվեց հեղափոխությանը և երիտասարդ էր, երբ որպես հեղափոխական բանտարկվեց ու մահացավ բանտում:

«Նա դեռ 20 տարեկան էլ չկար,— գրել է Ստեփան Շահումյանը,— երբ հարեց մեր կուսակցությանը և այդ ժամանակվանից էլ նրա ամենահավատարիմ ու ամենաազնիվ անդամներից մեկն էր: Նա չէր ապրում, այլ վառվում էր իր գեղեցիկ կյանքի այդ տասը տարիների ընթացքում, որը նա ամբողջությամբ, առանց մնացորդի նվիրեց սոցիալիզմի և դեմոկրատիայի համար մղվող պայքարին»<sup>1</sup>:

Բ. Կնունյանցի կյանքի ուղին իրապես եղել է նվիրումի ցայտուն օրինակ:

Կնունյանցների ընտանիքը տվել է շորս հեղափոխական գործիչներ, որոնցից ամեն մեկը քաղաքական պայքարի մեջ

<sup>1</sup> Ստ. Շահումյան, Հողվածներ և ճառեր, Երևան, 1953, էջ 141:

էր տեսնում իր կյանքի նպատակը և ապրում էր հանուն այդ նպատակի: Ինչպես նշում է իր հուշերում տասնմեկ հղբայրների միակ քույրը՝ Փառանձեմ (Յարո) Կնունյանցը, հազվագյուտ էին այն դեպքերը, երբ ընտանիքի բոլոր անդամները հավաքվում էին մեկ սեղանի շուրջը: «Որպես մեծ տոն էին նշվում այդ օրերը, — ասում է նա, — երբ հնարավոր էր լինում ի մի հավաքվել մեծ ու համերաշխ ընտանիքի բոլոր զավակներին»<sup>1</sup>: Բայց այդ տոները հղել են այնքան հազվադեպ, որ նրանց չի հաջողվել անգամ լուսանկարվել միասին և ունենալ ընտանիքի լուսանկարը: Մեր հարցմանը Փ. Կնունյանցը 20.1.1958 թ. գրած իր նամակում պատասխանեց. «Մենք երբեք միասին չենք նկարվել, նույնիսկ մեր ծնողների հետ: Այդ ջէր արվում նաև կոնսպիրատիվ նպատակներով»: Ահա այդ պատճառով էլ ոչ մի գրքում չի զետեղվել Կնունյանցների ընտանիքի լուսանկարը:

Ապագա հեղափոխականների դաստիարակության մեջ վճռական է հղել ընտանիքի ազդեցությունը: Ինչպես նշել է նրանց բարեկամն ու հարևանը՝ վաստակավոր ուսուցիչ Ռուբեն Զիլֆյանը, Կնունյանցների ընտանիքում մշտապես իշխում էին սերը դեպի կրթությունը, ձգտումը դեպի ճշմարիտը, հանուն ժողովրդի ազատագրական պայքարի նպատակների անվախության և անձնազոհության փառաբանման<sup>2</sup>: Ընտանիքի հայրը՝ Միրզաջան Հովհաննեսի Կնունյանցը ինքնակրթության միջոցով հասել էր իր միջավայրի ամենազարգացած մարդկանց մակարդակին: Մոտ 25 տարի նա վարել է գյուղական ոստուցչի պատվավոր պաշտոնը: Իր առաջադեմ

1 Տե՛ս «Неделя», 14 XI 1976, № 45, էջ 12:

2 Տե՛ս газета «Вышка», орган ЦК КП Азерб., 15 IX 1963,

հայացքների համար այդ գործից հեռացվելուց հետո նա դառնում է մասնավոր հավատարմատար և ավելի քան 35 տարի պաշտպանում շքավոր և իրավազուրկ աշխատավորների շահերը:

Ընտանիքի մայրը՝ Սոնա Օհանջանի Զիլֆյանը, բավական կարդացած անձնավորություն էր, լավ տնտեսուհի, սիրագործ մայր, ու դաստիարակուհի: Նա զոհվել է 1929 թ. սեպտեմբերին Շուշիում տեղի ունեցած ջարդերի ժամանակ, ուր և այրվել են Կնունյանցների տունն ու արխիվը: Այս պատճառով էլ շատ բան հնարավոր չէ վերականգնել այդ փառապանծ ընտանիքի անցյալից: Հետևապես շահագանց կարևոր նշանակություն են ստանում այն հուշերը, սակավաթիվ փաստաթղթերը և մամուլում ու գրականության մեջ եղած նյութերը, որոնք օգնում են լրացնելու նշված կորստի պատճառով դեռևս թերի ներկայացված հարազատ կերպարները: Կնունյանցների ընտանիքի ամեն մի անդամը, զրկված լինելով ընտանեկան հարկի տակ հաճախ գտնվելու հնարավորությունից, ջերմության ու սիրո պակասը լրացրել է աշխատանքի ու պայքարի ընկերների շրջանում, տիրվել ու հարգվել նրանց կողմից: Բոգդանը բնորոշվել է որպես անկեղծ, անմիջական, ազնիվ, հետևողական ու հավատարիմ անձնավորություն, որը, Ստ. Շահումյանի խոսքերով, բուրբին «սիրելի է իր անձնական բարձր բարոյական մաքրությունից»: Քիչ չեն պատմական փաստաթղթերը, որոնցում Բոգդանին կոչել են «Բոգդանչիկ», «Ջանիկ», «Սիրելի բարեկամ» և այլն:

Կնունյանց հեղափոխականներին (Լյուդվիգին, Բոգդանին, Տիգրանին և Փառանձեմին) բնութագրող հատկանիշներից են եղել կազմակերպվածությունն ու նպատակասլացությունը: Հեղափոխական գործչին այնքան անհրաժեշտ այդ գծերը

նրանց մեջ դաստիարակվել ու ամրապնդվել էին ընդհատակ-  
յա աշխատանքի բովում: Մեծ եղբոր՝ Լյուդվիգի մասին,  
օրինակ, քույրը գրել է, որ նա եղել է Բաքվի ընդհատակյա  
տպարանների կազմակերպիչներից ու ղեկավարներից, 1903 թ.  
ընդհանուր գործադուլի ղեկավարներից մեկը: Լյուդվիգ Կնուն-  
յանցը շնորհալի լրագրող էր և անփոխարինելի կոնսպիրա-  
տոր: Նա երիտասարդներին խորհուրդներ էր տալիս, թե ինչ-  
պիսին պետք է լինի հեղափոխականի վարքագիծը մանավանդ  
հասարակական վայրերում: Իր քրոջը սովորեցնում էր՝ լավ  
հագնվել, լինել պատկառազու, մոտը դրամ ունենալ և ան-  
հրաժեշտովսյան դեպքում այն տալ հենց ոստիկանին, խընդ-  
րելով՝ վառք հրավիրել, միշտ ամբոխի մեջ լինել, քայլեր  
մարդաշատ փողոցներով, երբեք չցուցաբերել հուսահատու-  
թյուն, չկորցնել ինքնատիրապետումը և այլն: «Իմ եղբայր-  
ները, — գրել է Ֆ. Մ. Կնունյանց-Ռիզելը, — որոնք ինտերնա-  
ցիոնալ դաստիարակովթյուն էին ստացել, առաջին հայ մտա-  
վորականներից էին, որ անցյալ դարի 90-ական թվականնե-  
րին մտան հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շարքերը»<sup>1</sup>:

Կնունյանց եղբայրներից որպես հեղափոխական ամենից  
ավելի աչքի է ընկել Բոգդանը:

Ուսման ծարավի, ուշիմ և հետաքրքրասեր Բոգդանը Շու-  
շիի ուսուցչական դպրոցում սովորելիս ցուցաբերել է մեծ ջա-  
նասիրովթյուն և ավարտել այն «գերազանց» գնահատական-  
ներով: Այնուհետև, մոտ 4 տարի սովորել է Պետերբուրգի  
տեխնոլոգիական ինստիտուտում և եղել է լավագույն ուսա-  
նողներից մեկը: Հեղափոխական գործունեության համար նա

<sup>1</sup> Газета «Коммунист», орган ЦК КПА, 2 XI 1977 г.



երկու անգամ վտարվել է ինստիտուտից, սակայն չի վհատվել, երբ ուսանողական իրավունքները վերականգնելու համար տրված իր երեք դիմումներն էլ մերժվել են: Նա Շուշիից անկոտրում հաստատակամությամբ մեկնում է Պետերբուրգ և 1899 թ. դեկտեմբերի 14-ին ներկայացնում իր շորրորդ դիմումը: Վերջապես Բոգդանին իրավունք է տրվում հանձնելու երրորդ կուրսի քննությունները և նստելու շորրորդ կուրս: Սակայն 1901 թ. սկզբին ուսանողական ցույցերին մասնակցելու համար նա նորից վտարվում և աքսորվում է: Աքսորի ժամկետը լրանալուց հետո, 1903 թ. մարտի 31-ին, նա նորից դիմում է ներկայացնում ինստիտուտի դիրեկտորին. «Խնդրում եմ... թույլատրեք ինձ հանձնել գործարանի անավարտ նախագիծը և 4-րդ կուրսից 5-րդը փոխադրվելու քննությունները: Շոգեկաթսայի նախագիծը և լաբորատոր աշխատանքները կատարել եմ դեռևս 1900—1901 ակադեմիական տարում»<sup>1</sup>:

Երբ որպես ՌՍԴԲԿ 2-րդ համագումարի պատգամավոր ուղևորվում էր արտասահման, նա կրկին գալիս է Պետերբուրգ, հաջողությամբ հանձնում շորրորդ կուրսի քննությունները, փոխադրվում հինգերորդ կուրս և մայիս ամսին մեկնում արտասահման: Հետագայում նրան այլևս չի հաջողվում վերադառնալ ինստիտուտ կամ ավարտել այն՝ պրոֆեսիոնալ հեղափոխականի համար այնքան բնական և անխուսափելի հետապնդումների, ոստիկանական հսկողության, ընդհատակյա պայքարի և այլ հանգամանքների հետևանքով: Նույն հանգամանքները ստիպեցին նրան ուսման պակասը լրացնել կյանքի դպրոցում, յուրացնել մարքս-լենինյան ուսմունքը.

<sup>1</sup> Ленинград. обл. ист. архив, ф. 492, д. 5116, св. 289, оп. 1, л. 20.

դառնալ նրա անշեղ կենսագործողներից մեկը հեղափոխական պայքարում: Իր ամբողջ ազատ ժամանակը նա նվիրեց նաև լեզուներ սովորելուն: Հրաշալի տիրապետելով ռուսերենին, Ֆարո կնունյանցի ասելով, Բոգդանը ազատ խոսում էր ֆրանսերեն և գերմաներեն: Նա լավ տիրապետում էր նաև հայերենին, որը դեպքերի բերումով ավելի քիչ էր գործածում: Ինչպես նշել է իր հուշերում Ասատուր Կախոյանը, Բոգդանը «խոսում էր Ղարաբաղի բարբառով: Նա թեև հայերեն գիտեր, բայց խմբի հետ պարապեց ռուսերեն»<sup>1</sup>: Ընդհանուր պատրաստականությունը, գիտելիքների լուրջ պաշարը, մարքսիզմի և համաշխարհային գրականության դասականների գործերին ծանոթ լինելը և բնատուր ձիրքը Բ. Կնունյանցին դարձրել էին կուսակցության գաղափարների կրակոտ ու լավագույն ագիտատորներից ու պրոպագանդիստներից մեկը: Իր անձնվեր գործունեության ու հեղափոխական պայքարի շնորհիվ Բ. Մ. Կնունյանցը Վ. Ի. Լենինի և նրա զինակիցների կողմից արժանացել էր ամենաբարձր դրվատանքի: Եվ պատահական չէ, որ Ստ. Շահումյանը պայքարի իր ընկերոջը, որին լավ ճանաչել ու սիրել է, անվանել է «փայլուն դեմք կուսակցության մեջ»:

\* \* \*

Կոմունիստական կուսակցության պատմության, հեղափոխական գրականության և մամուլի էջերում Բ. Կնունյանցը հայտնի է հետևյալ ծածկանուններով՝ Ռուսով, Ռուբեն, Բակի-ճեց, Կավկազեց, Բ. Պետրով-Ռադիև, Բ. Ռադիև, Բ. Ռուդիև:

<sup>1</sup> Բաևվար Խեչո, Հիշողություններ, Քիֆլիս, 1930, էջ 40:

Այդ ծածկանունները, ինչպես նաև դրանց կամ իր անվան առաջին տառերը նա օգտագործել է վաղ շրջանի Թղթակցություն-ինֆորմացիաներում, որոնք ուղարկվել են Շուշիից և ղետեղվել «Մշակ» լրագրում: Նրա «Մի քանի խոսք «Մշակի» մասին» քննադատական հոդվածը, որը տպագրվել է «Բակինսկիե իզվեստիա» թերթում, ունի «Բ. Կ.» ստորագրությունը: Ընդհատակյա գործչի այս սովորությունը նա պահպանեց ամբողջ կյանքում, համարյա բոլոր աշխատություններն ու հոդվածները ստորագրելով ծածկանուններով: Հավանաբար իր իսկական անունով են ստորագրվել միայն նրա բնագիտական թեմաներով հոդվածները, որոնք, ըստ որոշ տվյալների, ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով տպագրում էր համապատասխան պարբերականներում:

Իր հեղափոխական գործունեությունը Բոգդան Կնունյանցը սկսել էր դեռևս Շուշիի ռեալական ուսումնարանում, երբ մասնակցում էր ուսանողական մարքսիստական խմբի պարամունքներին և ավելի ուշ ղեկավարում դրանք:

1895 թ., միջնակարգ կրթություն ստանալուց հետո, Բոգդանը և Լյուդվիգը մեկնում են Թիֆլիս: Լյուդվիգը հիվանդություն պատճառով եղբորից մեկ տարով ետ էր մնացել: Նա էքստենս կարգով ավարտեց Թիֆլիսի ռեալական ուսումնարանը: Բոգդանը դասեր էր տալիս և միջոցներ հայթայթում բարձրագույն կրթություն ստանալու և եղբորն օգնելու նպատակով:

Անցյալ դարի 90-ական թվականներին, ինչպես պրոլետարական մյուս կենտրոններում, Թիֆլիսում և Բաքվում ևս ձևավորվում են առաջին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները: Այդ տարիներին մարքսիզմի գաղափարների պրո-

պագանդայով զբաղվում էին գլխավորապես Կովկաս արքայ-  
ված ռուս սոցիալ-դեմոկրատները:

Թիֆլիսում գաղափարական և ընդհանուր զարգացման  
այսպիսի նպաստավոր պայմաններում Բոգդան և Լյուդվիգ  
Կնունյանցները ծանոթանում են մարքսիստական գրականու-  
թյանը: Բոգդանը, մասնավորապես, ուսումնասիրում է Մարք-  
սի «Կապիտալը» և Մարքսի ու էնգելսի «Կոմունիստական  
կուսակցության մանիֆեստը»: Հաջորդ տարվա օգոստոսին  
Բոգդանը մեկնում է Պետերբուրգ: Մայրաքաղաքում նրա  
ուսումնառության տարիները համընկան բանվորական և  
ապա՝ ուսանողական շարժումների վերելքի շրջանի հետ: Տա-  
րեցտարի ուսանողական ելույթների և դրանց մասնակիցների  
թիվն աճում էր, և հետզհետե նրանց ղեկավարությունն անց-  
նում էր ռուս հեղափոխական սոցիալ-դեմոկրատների ձեռքը:  
Դրա լավագույն ապացույցը ուսանողական կազմակերպու-  
թյունների սկզբում թույլ, ապա ավելի սերտ և վերջում՝ մըշ-  
տական կապն է սոցիալ-դեմոկրատ բանվորների և սոցիալ-  
դեմոկրատական կազմակերպությունների հետ: Իր հողվածնե-  
րից մեկում Բ. Կնունյանցը վերհիշում է, որ ուսանողական  
տարիներին, իննսունական թվականների կեսերին, իրենք մեծ  
ակնածանքով և սրտի թրթիռով էին վերաբերվում ուսանողա-  
կան առաջին խմբակների պարապմունքներին մասնակից  
բանվորներին:

Մայրաքաղաքի ուսանողական առաջին քաղաքական ելույ-  
թը տեղի ունեցավ 1897 թ. փետրվարին՝ կանանց բարձրա-  
գույն դասընթացների ունկնդիր Մ. Ֆ. Վետրովայի ողբերգա-  
կան մահվան առթիվ:

1897 թ. մարտի 4-ին Կազանսկի հրապարակում բողոքի  
ցույցի էր հավաքվել մի քանի հազար ուսանող: Նրանք կա-

ուսվարութեան հասցեին մեղադրական ճառեր արտասանեցին, երգեցին հեղափոխական երգեր: Ոստիկանութեան և զորքի միջամտութեամբ ցույցը ցրվեց: Ցույցի ակտիվ մասնակիցներին շատերը, այդ թվում նաև Բ. Կնունյանցը, ձերբակալվեցին: Դա Բոգդանի առաջին ձերբակալութունն էր, նրա առաջին բացահայտ ընդհարումը ինքնակալութեան և նրա կարգերի հետ:

Այդ նույն թվականին նա ընդգրկվում է «Բանվոր դասակարգի ազատագրութեան պայքարի միութեան» շարքերը, որը նրա համար դարձավ քաղաքական պայքարի առաջին լուրջ դպրոցը: Հայ իրականութեան մեջ մարքսիզմի գաղափարները տարածման խնդիրներին իր ամբողջ կյանքը նվիրաբերած՝ Վարդան Ավետիսյանը շափազանց հետաքրքիր իր ուսումնասիրութեան մեջ այդ մասին գրել է հետևյալը. «Վ. Ի. Լենինի հիմնադրած Պետերբուրգի «Պայքարի միութեան» շարքերում 1896—1897 թվականներին իրենց հեղափոխական գործունեութունը սկսեցին մայրաքաղաքի ուսումնական հաստատութիւնների ուսանողներ Արշակ Գերասիմի Զուրաբյանը, Սիմոն Հարությունի Ավետիսյանը, Բոգդան Միրզաչանի Կնունյանցը, Հովհաննես Հարությունի Մելիք-Հովսեփյանը, որոնք տարբեր ժամանակներում վերադարձան Անդրկովկաս, իրենց հետ բերելով «Պայքարի միութեան» ավանդները»<sup>1</sup>: Բոգդան Կնունյանցը այնուհետև ընտրվում է նաև մայրաքաղաքի հեղափոխական ուսանողութեան կազմակերպութիւնները միավորող բյուրոյի անդամ: 1899 թվականի փետրվար և մարտ ամիսներին ծայր առած ուսանողական նոր ու մասսայական

1 Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 289—290:

շարժումներին Բոգդանն արդեն ղեկավար մասնակցութիւն էր ցուցաբերում: Ինչպես նշեցինք, այդ կապակցութեամբ նա նորից ձերբակալվում ու ինստիտուտից վտարվում է: Ազատ լինելով ուսանողական պարտականութիւններէ, նա ավելի ակտիվորեն է նետվում քաղաքական գործունեութեան մեջ: Իր ամբողջ ժամանակը նա նվիրում է խմբակների և ուսանողական բյուրոյի աշխատանքներին:

1901 թվականի մարտի 4-ին տեղի ունենալիք ցույցը նախապատրաստելու նպատակով փետրվարի 27-ին մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատութիւններում կայացան մասսայական ժողովներ: Նշանակված օրը՝ մարտի 4-ին, ցերեկվա ժամը 12-ին Կազանսկի հրապարակում դրոշակներով և պլակատներով հավաքվեց բազմահազար ուսանողութիւն, որը պայթարի էր կոչում ընդդեմ միապետութեան, հանուն քաղաքական ազատութեան:

Կառավարական օրգաններին վաղօրոք հայտնի էր նախապատրաստվող ցույցի մասին: Պետերբուրգի քաղաքազուլս Կլեյգելսի հրամանով շտաով հրապարակը շրջապատվեց զինվորներով և ոստիկաններով: Սկսվեց հաշվահարդարը:

Ցույցի մասին ավելի ուշ իմացած բանվորները շտապում էին դեպի Կազանսկի հրապարակը, սակայն քչերին հաջողվեց հասնել, որովհետև բանվորական շրջանները արգելափակված էին զինվորներով:

Սրբ ոստիկանութիւնը և զորքը հարձակվեցին ցուցարարների վրա, բանվորները հերոսութեան օրինակներ ցույց տվին: Նրանք շարդեցին տաճարի փայտե նստարանները և դրանց կտորներով սկսեցին մարտնչել ոտից զուլս զինված ոստիկանների և զինվորների դեմ: Ուսանողների մեծ մասը նույնպես հերոսաբար կռվեց: Սակայն կառավարութիւնը դաժան

հաշվեհարդար տեսավ անդեն ցուցարարների հետ, որոնց շարքերում կային նաև կանայք: Կառավարական-պաշտոնական տվյալներով, այդ օրը ցուցարարներից վիրավորվել էին 18 տղամարդ, 14 կին, իսկ մյուս կողմից՝ 20 ոստիկան, 4 կողակ, 1 ոստիկանական վերակացու և կողակային զորամասի 1 սպա:

Այդ մասսայական ցույցին մասնակցելու համար շատ ուսանողներ հեռացվեցին բարձրագույն ուսումնական հաստատություններից և տրվեցին դատի: Մի քանի օր հետո ոստիկանական վարչությունը ինստիտուտների դիրեկցիաներից պահանջեց ուսանողների բնութագրերը:

1901 թ. մարտի 9-ի բնութագրում համառոտակի նշված էին Բ. Կնունյանցի «հանցագործությունները». «Կնունյանց Բոգդան—4-րդ (կուրս)—ձերբակալված է Կազանսկի հրապարակում 1897 թ. մարտի 4-ին: Մասնակցել է 1899 թ. փետրվար և մարտ ամիսներին տեղի ունեցած անկարգություններին: Ներկա է եղել ս.թ. փետրվարի 27-ի հավաքույթին»<sup>1</sup>:

Կիրառվող պատժիչ միջոցառումները բողոքի ալիք բարձրացրին: Ահաբեկված կառավարությունը բանտարկվածներից շատերին ազատեց: Մակայն 394 ուսանողի, «Պետական պաշտպանության մասին» օրենքի 34-րդ հոդվածի համաձայն, սկսած 1901 թ. մարտի 28-ից, երկու տարի ժամանակով արգելեցին «ապրել համալսարանական քաղաքներում, ինչպես նաև՝ Ռիգայում և Յարոսլավլում»<sup>2</sup>:

Տեխնոլոգիական ինստիտուտի ձերբակալված 57 ուսանողներից միայն հինգը, այդ թվում նաև Բոգդանը, դատապարտ-

<sup>1</sup> Ленинград. обл. ист. архив, ф. 492, д. 6866, св. 341, оп. I, л. 1.

<sup>2</sup> ЦГИА, ф. 63, д. 209, 1904, л. 1.

վեցին աքսորի: Այս որոշման մասին ապրիլի 5-ին հայտնեցին ինստիտուտ, և Բոգդանը երրորդ անգամ վտարվեց ինստիտուտից:

Այսպես ավարտվեց երիտասարդ Բոգդան Կնունյանցի քաղաքական և կուսակցական գործունեության առաջին շրջանը, որից հետո նա անձնազոհության պատրաստակամությամբ և պատասխանատվության զգացումով համակված ոտք դրեց պրոֆեսիոնալ հեղափոխականին արժանավայել հասուն գործունեության փուլը: Նա իրապես ցուցաբերեց բոլոր այն վեհ հատկությունները, որոնց մասին Լ. Ի. Բրեժնևն ասել է. «...միայն իրոք համարձակ և սկզբունքային մարդիկ, միայն նրանք, ում չէին վախեցնում ոչ անձնվեր, ծանր աշխատանքը, ոչ ոստիկանական հետապնդումները, նրանք, ովքեր ամեն ինչից բարձր էին դասում աշխատավոր ժողովրդի երջանկությունը, միայն այդ մարդիկ էին ընդունակ այն սրխրանքին, որը կատարեց մեր երկրի կոմունիստների առաջին, լենինյան սերունդը»<sup>1</sup>:

\* \* \*

1901 թ. ապրիլին Կնունյանցը Պետերբուրգից, որպես աքսորական, եկավ Բաքու այն զորամասը (Սալյանսկի գունդը), ուր որպես պատիժ ուղարկված էր զինվորական ծառայության: Սակայն քիչ ժամանակ անց, որոշ միջամտությունների շնորհիվ, նկատի ունենալով Բոգդանի վատառողջ վիճակը, նրան թույլ տրվեց բնակվել քաղաքում:

1901 թ. գարնանը ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի կազմակերպումից հետո առավել նպատակասլաց դարձավ պրոլետարիատի

<sup>1</sup> «Սովետական Հայաստան», 10.9.1977:



պայքարի ղեկավարութիւնը, և ընդհատակյա կուսակցական աշխատանքը ստացավ նոր ծավալ ու թափ: Սիստեմատիկ ղեկավարութեան ապահովումը կոմիտեի կողմից աշխուժացրեց նաև բանվորական ու երիտասարդական մարքսիստական խմբակների գործունեութիւնը: Ակտիվ գործիչներից մեկը հանդիսանում էր Բ. Կնունյանցը, որը ամեն օր զինծառայութիւնից տուն վերադառնալով գնում էր պրոպագանդիստական աշխատանքի, ժողովի կամ նոր խմբակներ կազմակերպելու: Մասնավորապես նա խմբակ կազմակերպեց Միրզաբեկյանի ծխախոտի գործարանում և, մոտ կանգնած լինելով երիտասարդութեանը, մի շարք խմբակներ կազմակերպեց զանազան ուսումնական հաստատութիւններում:

Քաղաքական կյանքի ամենակտիվ տարրերից մեկի՝ երիտասարդութեան շրջանում տարվող աշխատանքը կուսակցական կազմակերպութիւնները միշտ համարել են շափազանց անհրաժեշտ ու կարևոր: Բաքվի կազմակերպութիւնները այն դարձրել էին հատուկ ուշադրութեան առարկա, որի շնորհիվ քաղաքում ստեղծվել էր երիտասարդական, մասնավորապես աշակերտական մեծ ակտիվ:

1901 թ. սեպտեմբերին, Բոգդանի ղեկավարութեամբ, արդեն գործում էր 25 հոգուց բաղկացած բարձր տիպի ուսանողական մի խմբակ, որի պարապմունքներին մասնակցում էին զանազան ուսումնական հաստատութիւնների աշակերտներ:

Սիստեմատիկ պարապմունքները, հեղափոխական գրականութեան ուսումնասիրութիւնը տալիս էին իրենց դրական արդյունքները: Շուտով Բոգդանի խմբակի և այլ կազմակերպութիւնների ներկայացուցիչներից ՌՄԴԲԿ Բաքվի կազմակերպութեանը կից ստեղծվում է աշակերտական կոմիտե՝

բաղկացած ինը հոգուց: 1902—1903 թթ. այդ կոմիտեում աշխատող գործիչներից մի քանիսը դեռևս աշակերտներ էին: Սակայն նրանցից շատերը հետագայում իրենց ամբողջ կյանքը նվիրեցին բանվոր դասակարգի գործին: Կոմիտեի մեջ մտնում էին՝ Եգոր Մամուլովը, Թևան Գրիգորյանը, Յաշա Ցիպինը, Լիզա Կաֆիևան, Տրդատ Տրդատյանը, Միհրան Խոջամիրյանը, Ֆարո Կնունյանցը, Ռյուշա Բանովիչը, Դավիթ Եղիազարյանը: Այդ մասին ուսանողական խմբի անդամներից մեկը՝ Ռ. Ռանևիչ-Ցիպինան իր հուշերում գրել է. «Քաղաքատնտեսութուն ուսումնասիրող մեր խմբակից Յա. Ցիպինը և ես 1902 թ. միացանք Բոգդան Կնունյանցի խմբին, և նրա գլխավորութամբ կազմակերպվեց ուսանողների սոցիալ-դեմոկրատական Բաքվի կոմիտեն»<sup>1</sup>: Ուսանողական կոմիտեն քանավոր և գրավոր պրոպագանդա էր մղում, հեղափոխական աշխատանք էր տանում երիտասարդության մեջ: Բոգդան Կնունյանցը, ղեկավարելով այդ կոմիտեի աշխատանքը, այն օգտագործում էր նաև ընդհանուր քաղաքական խնդիրներ կատարելու համար:

Բանվորական շարժման հետագա ծավալման շնորհիվ աճեց սոցիալ-դեմոկրատական խմբակների թիվը, և արդեն 1901 թ. կեսերին Բաքվի հինգ շրջաններում գոյութուն ունեւր 15 խմբակ, ուր ընդգրկված էին 150 հոգի:

Պրոպագանդիստական աշխատանքներին մասնակցում էին Բաքվի և շրջանային կոմիտեների անդամները, աքսորված սոցիալ-դեմոկրատներ, ուսանողներ և առաջավոր բանվորներ: Հայտնի է, որ Բաքվի խմբակներում պարապմունքները ղեկավարում էին փորձված հեղափոխականներ Լ. Կրասինը,

<sup>1</sup> ՄՄԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Ազրբեջանի բաժանմունքի արխիվ, ֆ. 456, ցուցակ 16, դ. 32, թերթ 5:

Կ. Գալպերինը, Ն. Կոզերենկոն, Ս. Գորբաչենկոն, Ա. Բեգազա-  
յանը, Ա. Ենուկիձեն, Մ. Պոզները, Կնունյանցները (Բոգդանը,  
Լյուդվիգը, Ֆարոն), Ե. Գուլիգովան (Բոգդանի կինը) և սո-  
ցիալ-դեմոկրատական շարժման մի շարք այլ գործիչներ։  
Հաճախ հարկ էր լինում ձերբակալությունների, տեղափոխու-  
թյունների և այլ պատճառներով պրոպագանդիստներից մե-  
կին փոխարինել մյուսով։ Խմբակներում տիրում էր իդեալա-  
կան կարգապահություն։ Չնայած ծանր աշխատանքին, ծան-  
րաբեռնվածությանը, հոգնած, ուժասպառ լինելուն, բանվոր-  
ներն ու ուսանողները ակտիվորեն մասնակցում էին պարապ-  
մունքներին։

Այս բոլորը Բաքվի կոմիտեի ղեկավարութայն, նրա ժա-  
վալած աշխատանքի ու բարենպաստ ազդեցութայն հետևան-  
քըն էր։ Պաշտոնական ձևով Բաքվի կոմիտեն իր գոյության  
մասին ազդարարեց միայն 1902 թ. մարտին, երբ հանդես  
եկավ բանվորների մասսայական ձերբակալությունների դեմ՝  
և տարածեց առաջին թռուցիկները՝ «ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտե»  
ստորագրութայամբ<sup>1</sup>։

1 Որպես հետաքրքրական մանրամասնություն նշենք, որ 1901 թ. վեր-  
ջին Բաքվի կոմիտեն պատրաստել տվեց իր առաջին կնիքը։ Բոգդանի,  
կրտսեր եղբայրը՝ Տիգրան Կնունյանցը (Գնունի—1881—1956), իր մահից մի  
քանի ամիս առաջ մի շարք հետաքրքրական դեպքեր պատմեց կուսակցական-  
ընդհատակի պատմությունից։ Նա հիշեց նաև այն մասին, թե ինչպես ինքը,  
Բոգդանի հանձնարարութայամբ, պատրաստել է տվել Բաքվի կոմիտեի ալդ-  
առաջին կնիքը։ Այդ նպատակով նա գնում է մի ժամազործի մոտ, որ  
գտնվում էր Պարապետ հրապարակից ոչ հեռու և, ցույց տալով դժգոհությու-  
նը, խնդրում է պատրաստել կնիքը։ Սակայն ժամազործը հրաժարվում է։ Տիգ-  
րանը երկար ժամանակ նրան համոզում է, երզվելով խիստ դադոնապա-  
լիկնել։ Վերջապես վարպետը համաձայնում է հինգ ուսուրով պատրաստել  
կոմիտեի կլոր կնիքը, որի վրա գրված էր «ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտե» բոլոր  
երկրներին, 17:



Այդ տարիների բանվորական ելույթների մեջ, ինչպես  
ամենուր, Բաքվի կոմիտեն ևս հատուկ ուշադրություն էր նա-  
խապատրաստում մայիսամեկյան տոնը: 1901 թ. առաջին ան-  
գամ Բաքվի բանվորները նշեցին այդ տոնը քաղաքից դուրս,  
150 հոգու մասնակցությամբ: Հաջորդ տարին ծավալվեց նա-  
խապատրաստական լուրջ աշխատանք, որպեսզի շքերթը կազ-  
մակերպվի քաղաքում, լայն մասսաների ընդգրկումով: Տեղի  
ունեցան բանվորական փնջային ժողովներ, տպագրվեցին կո-  
չեր ու թուղթիկներ: Գործը ստացավ այնպիսի ընթացք, որ  
կառավարական օրգանները և ոստիկանությունը որոշեցին  
կանխել ցույցը:

1902 թ. մարտի 14-ին Բաքվի կոմիտեի անդամներից շա-  
տերը ձերբակալվեցին: Բողոքներ ազատ մնաց և մի քանի  
ընկերների հետ շարունակեց աշխատանքները: Կազմակեր-  
պիչների և ղեկավարների դերերն ու ֆունկցիաները բաժան-  
վեցին բանվորական ակտիվի համաքաղաքային խորհրդակ-  
ցություններում: «Իսկրա»-ն այդ նախապատրաստական աշ-  
խատանքի մասին «Բանվորական շարժման խրոնիկա» բաժ-  
նում գրում է. «Բաքվի սոցիալ-դեմոկրատական կոմիտեն  
որոշեց հանդես գալ բացահայտ ձևով: Աշնանը և ձմռանը նա  
նույնպես կերպով ձեռքից-ձեռք տարածում էր անլեզալ գրա-  
կանություն (գրքույկներ, «Իսկրա» և «Յուժնի ուբոչի» թեր-  
թեր), համառուսական կոչեր (փետրվարի 19-ի մասին և  
այլն): Բաքվում մարտի ձերբակալությունների առթիվ նա

---

միացեք»: «ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտե»: Եվ իրապես, արխիվային մի փաստա-  
թղթում, Բաքվի օկրուգային դատարանի վավերագրերից մեկում նշված է, թե  
«ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի դրամարկղի հաշվետվությունը 1902 թ. հոկտեմ-  
բերի 15-ից առ դեկտեմբերի 15-ը կնքված է «ձեռքով պատրաստված կնի-  
քով, կարմիր թանաքով»: ՏԵՎ ԱԳՄԱ ԱՅ.ՍՍՐ, ֆ. 185, Դ. 290, յ. 29.

բաց թողեց թռուցիկ՝ արդեն իր ստորագրութեամբ: Ապրիլի վերջին կոմիտեն տարածեց «Իսկրա»-ի թերթիկը (տպագրութեամբ), հասարակութեանը ուղղված կոչը (հեկտոգրաֆ): Բացի դրանից, ձեռքից-ձեռք էր անցնում «Կովկասյան ինտելիգենցիային» (հեկտոգրաֆ) կոչը, որ բաց էր թողել սոցիալ-դեմոկրատների խումբը»<sup>1</sup>:

Վանո Ստուրուան «Ընդհատակյա հին գործչի հիշողութիւններ»-ում<sup>2</sup> այդ մասին պատմում է հետևյալը. «Յուլյի հարցը լուծելու համար վերջին ժողովը կազմակերպված էր դաշտում՝ Քիշլիում: Այդ ժողովին, ուրիշների թվում, ներկա էին Բոգդան Կնունյանցը (Ռադին, հին «Իսկրա»-ում հոդվածներ էր տպագրում «Կավկասացի» կեղծանունով), Նիկոլայ Վիշնևսկին՝ պետրոգրադցի բանվոր, Իոսատին Գոգոձեն՝ Լենսոնի գործարանի ձուլող-բանվոր, Յանուշևսկայան՝ մանկաբարձուհի... և ուրիշներ»: Յուլյի ժամանակ տեղական իշխանութիւնները ի վիճակի չեղան միջամտել, և այն անցավ փայլուն հաշտութեամբ: Յուլյի մասին «Իսկրա»-ն գրեց հետևյալը. «Նպատակն իրագործված է: Ամենուրեք խոսում են միայնցուլյի մասին, նրանք, ովքեր թռուցիկներ դեռ չեն կարդացել, սկսում են եռանդով փնտրել...: Բանվորական միջավայրում ցուլյը հրաշալի տպավորութիւն թողեց: Նա բարձրացրեց բանվորների ոգին և հավատ ներշնչեց իրենց ուժերի նկատմամբ: Բաքվի բանվորները միանգամից բարձրացան թե իրենց և թե հասարակութեան աչքում, և այդ առաջընթացը կյանքը հաշվի առավ անմիջապես:

<sup>1</sup> «Искра», 1902, № 24: Հոդվածն անստորագիր է, բայց, ըստ բովանդակութեան և շարադրման եղանակի, նրա հեղինակը Բ. Կնունյանցն է:

<sup>2</sup> «Пролетарская революция», 1923, № 2.

Մայիսի մեկին մի քանի գործարանների և նավթահանքերի բանվորներ վարչությանն իրենց պահանջները ներկայացրին և բավարարություն ստացան: Շատ գործարաններում բանվորները վարչությանը հայտարարեցին, որ մայիսի մեկին շեն աշխատելու<sup>1</sup>:

Ցուլցը վերջանալուն պես ոստիկանությունը դիմեց պատ-  
ժիշ միջոցների: Որպես կազմակերպիչներ ու ղեկավարներ ձերբակալվեցին 31 տղամարդ և 3 կին: Ձերբակալվածների մեջ էր Կնունյանցների գրեթե ամբողջ ընտանիքը՝ Բոգդանը, որը, շնայած բոլոր նախազգուշացումներին, զինվորի շինելով էր դուրս եկել, նրա կինը՝ Ծ. Գոլիկովան, Լյուդվիգը և նրա կի-  
նը՝ Բաբիկովան, Տիգրանը, այնուհետև՝ Ա. Բեգզադյանը, Ն. Կոզերենկոն, Ինոկիձեն (տեխնիկ) և ուրիշներ: Ձերբակալվե-  
ցին նաև մի խումբ երիտասարդներ, որոնց մեջ էր և Ֆարոն: Նրանց պահեցին ընդամենը 2—3 օր և ազատ արձակեցին, իսկ Բոգդանը բանտում մնաց 24 օր:

1902 թ. հոկտեմբերին ավարտելով զինվորական ծառա-  
յությունը, Կնունյանցը ամբողջովին նվիրվեց կուսակցական գործունեությանը:

Անդրկովկասի բանվորական շարժման պատմության մեջ աչքի են ընկնում 1903 թ. մարտի 2-ի և ապրիլի 27-ի մասսա-  
յական ցույցերը և հատկապես Բաքվի հուլիսյան ընդհանուր գործադուլը: Դրանք նախապատրաստվում էին կուսակցական կոմիտեների և մասնավորապես Բաքվի կոմիտեի ղեկավարու-  
թյամբ ու կրում էին արտահայտված քաղաքական բնույթ: Այս-  
պես, մարտի 2-ի ցույցը նվիրված էր գյուղացիական ռեֆորմի տարեդարձին: Տպագրվել էին ցույցի նշանաբանը բացահայտող

<sup>1</sup> «Искра», 1902, № 24.

համապատասխան թուղթիկներ և կոշեր, խմբակների հատուկ պարամունքներ էին տեղի ունեցել հիշյալ հարցով: Մարտի 2-ի ցույցը սկսվեց բավական կազմակերպված: Քաղաքի մի շարք շրջաններում միաժամանակ եղան երթեր ու հավաքույթներ: Երբ մյուս շրջաններում դրանք դադարեցին, երեկոյան ժամը 5-ին տեղի ունեցավ Բալախանի-Սաբունչի նավթահանքերի երկու հազար բանվորների ցույցը: Կուսակցական մամուլը լայնորեն լուսաբանեց այն<sup>1</sup>: Իսկ օկրուգային դատարանի դատախազին ուղղված ոստիկանության զեկուցագրի մեջ մանրամասնորեն ներկայացված էին և՛ ցույցը, և՛ նրա հետ կապված դեպքերը, որոնք ճշտում էին այն հսկայական նախապատրաստական աշխատանքի մանրամասները, որ տարել էին Բաքվի կոմիտեն և մյուս կուսակցական կազմակերպությունները: Զեկուցագրում կարդում ենք. «Կեսօրին մոտ «Մալականսկի» այգում հավաքվեցին մի խումբ քանվորներ, որոնց մեջ կային նաև ուսանողներ: Այդ խումբը հետըզհետե մեծացավ և շուտով անջրպետեց կից փողոցը, լվեցին «ուռնա՛», «կորչի՛ միապետությունը» և այլ բացականչություններ: Հավաքվածներից շատերը փողոցներում ցրում էին թուղթիկներ, գունավոր թղթից ու-մեծ թերթիկներ՝ «Կորչի՛ միապետությունը», «Կեցցե՛ քաղաքական ազատությունը», «Կեցցե՛ սոցիալիզմը», «ՌՍԴԲԿ-ի Բաքվի կոմիտե...» ուսերեն և հայերեն մակագրություններով:

Պետրովսկու հրապարակում «...երբ սկսեցին ամբոխը ցրել, բանվորների մի մասը, քարերով և փայտերով զինված, պատրաստվեց դիմադրել, սակայն նրանց ևս ցրեցին...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Գալեսարիաի կոփը», 1903, № 2—3.

<sup>2</sup> ЦГИА Аз. ССР, ф. 185, оп. I, д. 290, л. л. 45—46.

Ցուլցի ընթացքում եղան վիրավորներ: «...Բացի փոխ-  
նահանգապետից, վիրավորված էր մի կողակ, իսկ ոստիկա-  
նության աստիճանավորներից մի քանիսը թեթև ջարդվածք-  
ներ էին ստացել, այնինչ հասարակութունից ոչ մի վիրավոր  
չկար...»:

Ցուլցից հետո ուրիշ հայերի թվում ձերբակալվեց նաև  
Շուշի քաղաքի բնակիչ Բագրատ Գալուստի Ավագյանցը\*, որի  
մոտ գտնվեց վիմատիպ կոշերի մի կապոց. թուղցիկները թեր-  
թի 1/8-ի շափ էին և պարունակում էին հետևյալ նկարը. թեր-  
թի մեջտեղում պատկերված էր կայսերական գահը, որի տակ  
մակագրված էր՝ «բռնակալ». կայսրից վերև նկարված էր ձախ  
ոտքով նրան կոխ տվող բանվոր՝ մի ձեռքին մուրճ, մյուսին՝  
դրոշ: Դրոշի վրա գրված էր՝ 1903 թվականի մարտի 2», «Պրո-  
լետարիատ». նկարի աջ կողմում մակագրված էր՝ «Պրոլե-  
տարներ բոլոր երկրների, միացե՛ք», «Կորչի՛ միապետութուն-  
նը», «Կեցցե՛ քաղաքական ազատութունը», «Կեցցե՛ սոցիա-  
լիզմը», «ՌՄԴԲԿ Բ. Կ.»<sup>1</sup>:

Այնուհետև զեկուցագրում նշված էր, որ նույն օրը երե-  
կոյան, Քաղիւկի թատրոնում, ներկայացման ժամանակ ևս  
նման թուղցիկներ ցրվեցին: «Մինչև Բաքվի ցուլցը, — ասված  
է զեկուցագրի վերջում, — պետական պաշտպանության կար-  
գով ձերբակալված են մոտ 30 հոգի... ինչպես նաև ցուլցի  
նախօրյակին կատարվել են խուզարկութուններ...»:

Այդ ձերբակալվածների թվում էին Բ. Կնունյանցը, Գ.  
Խունդաձեն, Ն. Կոզերենկոն, Ծ. Գուլիկովան և ուրիշներ:

\* Պրոֆեսիոնալ հեղափոխական, հետագայում Բաքվի կոմիսարներից,  
զնդակահարված 1918 թ.: Բ. Կնունյանցի մանկության և աշխատանքի  
ընկերներից է:

<sup>1</sup> Նույն տեղը:



Բաքվի պրոլետարիատի մայիսմեկյան ցույցը, որ տեղի ունեցավ ապրիլի 27-ին, ամենամասսայական և կազմակերպված ելույթներից մեկն էր: Նրան մասնակցեց ավելի քան 5000 մարդ: Այն ցույց տվեց, որ կառավարութանը չի հաջողվել ոչնչացնել ղեկավար կենտրոնները, մասնավանդ Բաքվի և շրջանային կոմիտեները, որոնք մնացին համարյա անձեռնմխելի:

Հիշյալ երկու բանվորական ելույթներն էլ ունեցան կարևոր նշանակություն ու նախապատրաստեցին Բաքվի պրոլետարիատի հուլիսյան ընդհանուր գործադուլը, որին մասնակցեց մոտ 50 հազար մարդ:

Բանվոր դասակարգի պայքարի պատմության այս փայլուն էջերի կազմակերպիչների ու մասնակիցների շարքում առաջնակարգ դեր կատարեցին Կնունյանց ընտանիքի բոլոր անդամները: Լ. Մ. Կնունյանցը (1876—1951)<sup>1</sup> սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Իվան Լյուդվիգի Կնունյանցի հայրը, իր ինքնակենսագրության մեջ գրել է. «Ակտիվ կերպով մասնակցելով ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի աշխատանքներին, 1903 թ. հուլիս ամսին բռնկված Բաքվի պրոլետարիատի ընդհանուր գործադուլի ժամանակ ես նշանակվեցի գործադուլային կոմիտեի նախագահ»<sup>1</sup>:

Հեղափոխական գործունեության բաղկացուցիչ մասն էր կազմում ընդհատակյա տպարանների ստեղծման և նրանց կանոնավոր աշխատանքի կազմակերպման քարդ ու դժվարին խնդիրը: Սկզբնական շրջանում այն իրագործվում էր Վափազանց պարզունակ արհեստավորական մակարդակով: Սակայն աճող պահանջները տեղական կուսակցական կազմակերպու-

<sup>1</sup> Մանրամասնությունը տե՛ս Հովհ. Ինճիկյան, Բողոան Կնունյանց, էջ 41:

թյուններին ստիպեցին լրջորեն մտածել հրատարակչական գործի մասին: Այս և այլ աշխատանքների ղեկավարման համար Բաքվի կոմիտեին կից 1902 թ. ստեղծվում է տեխնիկական հանձնաժողով, որի ակտիվ անդամներն էին Կնունյանց հղբայրները:

Լադո Կեցխովելու և Աբել Ծնուկիձեի կազմակերպած տպարանը, որտեղ տպագրվել են կուսակցական գրականութուն, «Իսկրա»-ի № 11-ը՝ մատրիցայից<sup>1</sup> և այլ նյութեր, գտնվում էր կոմիտեների ուղադրության կենտրոնում:

«Նինա»-ի տաղանդավոր ղեկավար Լադո Կեցխովելուն Բաքվում 1902 թ. սեպտեմբերի 2-ին ձերբակալելուց հետո այնտեղ աշխատել են Լ. Կնունյանցը, Ի. Թողրիան, Ա. Խուսիսյանը և ուրիշներ: Հիշյալ կենտրոնական տպարանից բացի Բաքվում, տարբեր ժամանակներում, ստեղծվել են փոքր տպարաններ ու խմորատիպներ, որոնք, սակայն կարճատև կյանք են ունեցել: Բ. Կնունյանցի ջանքերով նրա բնակարանում նույն տարվա դեկտեմբերին ստեղծվում է Բաքվի կոմիտեի առաջին տպարանը, որտեղ տպագրվող նյութերը շարվում էին ձեռքով: Շուտով ոստիկանութունը գտնում է տպարանի հետքը: Դեկտեմբերի 22-ի գիշերը ոստիկանները ներխուժում են Կնունյանցների բնակարանը: Խուզարկելիս գրտնում են ընդհատակյա տպարանի որոշ մասեր, ինչպես նաև՝ ՌՄԴԲԿ Բիբի -Հեյբաթի և Աև քաղաքի շրջանների կոմիտեիների հեկտոգրաֆով տպած երկու հաշվետվութունը, որոնցից առաջինը ներկայացնում էր հոկտեմբերի կեսի, իսկ երկրորդը՝ նույն տարվա հոկտեմբեր ամսում կատարած աշխատանքները, ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի դրամարկղի հեկտոգրաֆով

<sup>1</sup> См. Второй съезд РСДРП, протоколы, М., 1950, к 2 567—568.

տպագրած հաշվետվութեան օրինակը և 40 դարակներով փայտյա մի արկղ, որ տպարաններում գործածվում էր տառեր պահելու համար, անլիգալ տպագրված մի գրքուկ՝ Տ. Յ. Ալիքսեկի և Վաուենի երկու ճառերը:

«Մեղադրյալներից Բոգդան Կնունյանցը ցուցմունք տվեց, — ասված է ոստիկանութեան արձանագրութեան մեջ, — որ շրջանային կոմիտեաների իր մոտ գտնված հաշվետվութունները իրեն են ուղարկված փոստով, շփտե ում կողմից, բայց ինքը պահել է դրանք (բնորոշ ապացույցն այն բանի, որ մեզանում ընդհանրապես որևէ բանվորական կազմակերպութեան համար հող չի նախապատրաստված) թախտի մեջ, քանի որ վախենում է ամենադատարկ առիթներով հաճախակի իր մոտ տեղի ունեցող խուզարկութուններից: Մամուլի և նրա հետ հղած հղկված տախտակի մասին մեղադրյալը բացատրեց, որ ինքը, ըստ մասնագիտութեան տեխնիկ-քիմիկոս լինելով, զանազան փորձեր է կատարում և, փ միջի այլոց, փորձում էր պատրաստել յուղի մամլիչ (ճզմիչ)...»: Այնուհետև վավերագրում նշվում է, թե նա (Կնունյանցը) հրաժարվեց իր համար մամլիչ պատրաստող վարպետի անունը տալուց:

«Բացի ընդհանուր բնույթ կրող այս բացատրութուններից, մեղադրյալից ոչ մի ուրիշ բացատրութուն չկարողացանք ստանալ, որովհետև իր անձնավորութեանը և իր մոտ գտնված գրութուններին վերաբերող բոլոր հարցերին Բոգդան Կնունյանցը պատասխանում էր, որ չի ցանկանում ցուցմունք տալ:

Տիգրան Կնունյանցը, ինչպես և Բոգդանը, իրեն հանցավոր չճանաչեց, իսկ իր մոտ գտնված իրերի վերաբերյալ տա-

լիս էր Բոգդանի բացատրություններին համապատասխան բացատրություններ»:

Մասնագիտական փորձաքննությունը ցույց տվեց, որ գտնված այդ բոլոր իրերը կարող էին օգտագործված լինել ընդհատակյա տպարանի համար:

Խուզարկության ժամանակ Բոգդան Կնունյանցի թղթերում գտնվեցին 52 լեզալ և անլեզալ հրատարակությունների ցուցակներ, ինչպես օրինակ՝ «Իսկրա», «Զարյա», «Յուժնի ուբոչի», «Խորտակված պատնեշ», «Մարտյան գործադուլների պաշտպանության համար», որոնց դիմաց նշանակված օրինակների թիվը, երևի գրադարանի համար է»<sup>1</sup>:

Մինչև հետաքննության ավարտը Կնունյանց եղբայրները գտնվում էին ոստիկանության հսկողության տակ: Նրանց մի քանի այլ անձնավորությունների հետ ձերբակալեցին միայն 1903 թ. հունվարի 21-ին՝ բոլորին կասկածելով ընդհատակյա տպարանների հետ կապեր ունենալու մեջ: Սակայն հարցաքննության ժամանակ նրանց տված հետևողական պատասխաններն ու իրեղեն ապացույցների բացակայությունը քննչական մարմիններին հնարավորություն չտվեցին լրջորեն մեղադրել ձերբակալվածներին, և մեկ շաբաթից հետո նրանք ազատվեցին: Այդ դեպքերից հետո այլևս հնարավոր չեղավ վերսկսել տպարանի աշխատանքները Արմյանսկայա փողոցի № 55 տանը (այժմ Մ. Գորկու փողոց)՝ Կնունյանցների բնակարանում: Խուզարկության ժամանակ չհայտնաբերված տաներն ու տպարանային գույքը նրանց տան սպասուհու՝ Մարիայի և գրաշար Մեխակ Առաքելյանի ջանքերով տեղափոխվեցին այլ տեղ:

<sup>1</sup> ЦГИА Аз. ССР, ф. 185, оп. I, д. 290, л.л. 29—32.

Շատ շուտով քաղաքային բերդի շրջանում գործի դրվեց Բաքվի կոմիտեի նոր տպարանը, որը արդեն ունեւր նոր տպագրիչ մեքենա<sup>1</sup>։

Հիշյալ տպարանների միջոցով, միայն 1902 թ. դեկտեմբեր—1903 թ. հունիս ամիսներին, հեկտոգրաֆի վրա տպագրել էին ավելի քան 33 հազար թուղթիկ, որից 26 հազարից ավելին ուսանողներին, մոտ 7 հազարը հայերեն և 250 օրինակ ադրբեջաներեն<sup>2</sup>։

Հեղափոխական շարժումների ծավալումը և կուսակցական աշխատանքների ընդլայնումը Անդրկովկասում տրամաբանորեն հանգեցրին սոցիալ-դեմոկրատական կոմիտեիների և նրանց ղեկավար գործիչների անբոտ կապերին և նրանց համագործակցությանը՝ հանուն ցարիզմի դեմ մղվող քաղաքական պայքարի միասնական ճակատի։ Այդ կապերը հետզհետե դարձան համատեղ աշխատանքի անհրաժեշտ նախապայման։ Այսպես օրինակ, ղեկավարներից մեկը՝ Բոգդան Կնունյանցը մշտական կապեր էր պահպանում Թիֆլիսի, Գյանջայի, Շուշիի և Երևանի կազմակերպությունների հետ։ Երևանում այդ տարիներին ապրում էր նրա ավագ եղբայր Տարսայր, որին այցելելու պատրվակով նա կատարում էր կուսակցական հանձնարարություններ։ Բաքվի ժանդարմական վարչությունն արձանագրել է, որ Բոգդանը 1901 թ. «հունիսի 27-ին մեկնեց Շուշի քաղաքը, որտեղ ապրելու է հարազատների մոտ»<sup>3</sup>։ Պետք է ենթադրել, որ այդ այցելություններն ունեցել են իրենց դրական արդյունքը, և Շուշիի սոցիալ-դեմոկրատական, հե-

<sup>1</sup> См. Протоколы II съезда РСДРП, т. 2 527.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 523։

<sup>3</sup> ЦГИА Груз. ССР, ф. 7, д. 3392, 1901, л. 162.

տագայում՝ բուշեիկյան, խմբի կազմակերպիչներից մեկը եղել է Բոգդան Կնունյանցը:

Նույն թվականի օգոստոսի վերջին նա մի քանի օր գտնվել է Թիֆլիսում, մասնակցել խորհրդակցութունների, պայմանավորվել տեղի ընկերների հետ և վերադարձել Բաքու: Նման համագործակցության արդյունքը հանդիսացավ 1902 թ. ամռանը Թիֆլիսում կազմակերպված «Հայ սոցիալ-դեմոկրատների միութունը», որին ողջունեց Վ. Ի. Լենինը որպես ՌՍԴԲԿ նոր անդամի<sup>2</sup>: Այդ տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Լենինը ծանոթացավ միության ծրագրային հոդվածներին՝ միության հրատարակած «Պրոլետարիատ» թերթի առաջին համարի էջերում:

Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Արշ. Զուրաբյանի, Ս. Խանոյանի, Աշ. Խումարյանի և ուրիշների ղեկավարությամբ կազմակերպված այդ «Միութունը», ինչպես ասված է նրա մանիֆեստում, նպատակ էր դրել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական, բանվորական կուսակցության հետ միասին, որպես վերջինիս ճյուղերից մեկը, պայքարել «Ռուսաստանի պրոլետարիատի շահերի համար ընդհանրապես և հայ պրոլետարիատի համար՝ մասնավորապես»:

Հստակ շարադրված ինտերնացիոնալ և դասակարգային նպատակադրումը որոշում էր նաև «Միության» տպագիր օրգանի՝ «Պրոլետարիատ»-ի ուղղութունը, որը լույս տեսավ 1902 թ. հոկտեմբերին 24 էջից, 240 օրինակով: Դա հայերեն առաջին մարքսիստական թերթն էր: Թերթի կազմակերպման մասին «Միության» ղեկավարներից մեկը՝ Աշոտ Խումարյանը

1 Նույն տեղը, թերթ 164:

2 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 133:

պատմում է, որ այն հրատարակելու համար անհրաժեշտ դրամն ու տառերը ճարել էին Թիֆլիսում, իսկ մի քանի այլ անհրաժեշտ մասեր ձեռք բերելու համար ինքը գնացել էր Բարու «Ես առաջուց ունեի ինձ մոտ Շահումյանի մի նամակը Բոգդան Գնունյանցի հասցեով: Բաքվում Բոգդան Կնունյանցը մեծ հավանություն ցույց տվեց մեր ձեռնարկությունը, աջակցեց ինձ ձեռք բերել անհրաժեշտ պարագաները»<sup>1</sup>:

Մի ուրիշ տեղ, հիշելով Բոգդանի հետ ունեցած իր այդ առաջին հանդիպման մասին, Աշոտ Խումարյանը գրում է, որ թերթը հրատարակելու նպատակով անհրաժեշտ տպարանական սարքավորումը ձեռք բերելու համար Կնունյանցը իրեն ցույց է տվել ամենայն օգնություն: Հենց նա էլ «առաջարկեց մեր ապագա թերթը անվանել «Պրոլետարիատ»<sup>2</sup>:

Կնունյանցի առաջարկությունն ընդունվեց, և թերթը շուտով լույս տեսավ: Թերթում անստորագիր նյութեր էին զետեղել «Միություն» բոլոր ղեկավարները, այդ թվում նաև Բոգդանը:

1903 թ. սկզբներին Անդրկովկասում կային տեղական կազմակերպությունները միավորելու բոլոր նպաստավոր պայմանները: Վաղուց ի վեր գործում էին Բաքվի, Թիֆլիսի և Բաթումի կոմիտեները, սոցիալ-դեմոկրատական խմբակներ էին կազմակերպվել Քութաիսում, Գորիում, Ճիաթուրայում, Խաշուրում, Գուրիայում: Մեծ կարիք էր զգացվում համատեղ տպարաններ ունենալու, տեղական լեզուներով գրականություն հրատարակելու և միմյանց միջև փոխանակելու, քա-

1 Ա. Խումարյան, Անցած օրերից, Մարտակոչ, 4 հունվարի 1924:

2 Двадцать пять лет бакинской организации большевиков, Баку, 1924, л. 144.

ղաքական ու ֆինանսական փոխօգնութիւնն ցույց տալու, աշխատանքային փորձի փոխանակում կազմակերպելու համար և այլն: Հրամայական պահանջ էր դարձել միասնական ղեկավար կենտրոն ստեղծելը, կենտրոն, որի գլուխ կանգնած լինեին տեսական ու գործնական պատրաստութիւնն ունեցող ղեկավարներ և փորձառու կազմակերպիչներ:

Մի շարք ղեկավար գործիչներ դեռևս 1902 թ. վերջերին որոշակի քայլեր էին կատարում այս ուղղութիւնմբ: Աշ. Խումարյանը պատմում է, որ իր և Բոգդան Կնունյանցի համարկման ժամանակ վերջինս ասաց, որ, իր կարծիքով, ժամանակն է միավորել Անդրկովկասի բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնները<sup>1</sup>: Դրանից հետո էր, որ Բաքվի կոմիտեն, նրա անդամները, մասնավորապես Կնունյանցը, եռանդուն կերպով ձեռնամուխ եղան այդ գաղափարի կենսագործմանը:

1903 թ. հունվարին Բաքվի, Թիֆլիսի կոմիտեների, «Բըրձոլա» և «Պրոլետարիատ» թերթերի ներկայացուցիչների խորհրդակցութիւնում ստեղծվեց համագումարի հրավիրման բյուրո: Նրա ջանքերի շնորհիվ նույն թվականի մարտին Թիֆլիսում տեղի ունեցավ Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների առաջին համագումարը:

Համագումարին ՌՍԴԲԿ Անդրկովկասի բոլոր կազմակերպութիւններից և կոմիտեներից ներկա էին 15 պատգամավոր: Համագումարում ընտրվեց ՌՍԴԲԿ Կովկասյան միացյալ կոմիտե՝ 9 հոգուց: Կոմիտեի կազմում ընտրվեցին՝ Մ. Յխակայան, Ա. Մուլուկիձեան, Մ. Բոշորիձեան, Արշ. Զուրաբյանը, Դ. Թոփու-

<sup>1</sup> «Մարտակոչ», 4 հունվարի 1924:



րիձեն, Ն. Ժորդանիան, Յ. Մախարաձեն և Ս. Զիրլաձեն<sup>1</sup>։  
Բաքվի կազմակերպությունից Կովկասյան միացյալ կոմիտեի  
մեջ մտավ Բոգդան Կնունյանցը։

Հետագայում կոմիտեի կազմի մեջ մտան՝ Ստ. Շահում-  
յանը, Ի. Ստալինը, Ա. Զափարիձեն, Մ. Դավիթաշվիլին, Ն.  
Ալաջալովան, Դ. Պոստոլովսկին, Վ. Բոբրովսկին, Ս. Խանո-  
յանը, Ա. Խումարյանը, Պ. Զափարիձեն և ուրիշներ։

Համագումարը որոշեց նախկին երկու օրգանի՝ վրացական  
«Բրձոլա»-ի և հայկական «Պրոլետարիատ»-ի փոխարեն հրա-  
տարակել Կովկասյան միացյալ կոմիտեի միասնական օրգան  
մի թերթ։ Որոշվեց այդ օրգանը կոչել «Պրոլետարիատի կռի-  
վը» և հրատարակել ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներ-  
ով։ Թերթի առաջին կազմակերպիչներից, խմբագիրներից և  
աշխատակիցներից էր Բոգդան Կնունյանցը։ Թերթի աշխա-  
տանքներին մասնակցում էին Կովկասյան կոմիտեի բոլոր  
անդամները, ինչպես նաև՝ Կովկասի հետ կապված կուսակ-  
ցական աշխատողները։

Այս դեպքերին նախորդեց կենսական կարևորություն ունե-  
ցող մի կամպանիա։ 1902 թ. հունիսի 1-ին «Իսկրայի»  
№ 21-ում տպագրվել էր թերթի խմբագրության կողմից մշակ-  
ված և կուսակցական կազմակերպությունների քննարկմանը  
ներկայացվող կուսակցության ծրագրի նախագիծը։ Աշնանը  
բոլոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում  
ծավալվել էր դրա քննարկումը։ Քննարկումն ուներ վճռական  
նշանակություն կուսակցության ապագայի համար, քանի որ  
տեղական ամեն մի կազմակերպություն պետք է որոշեր իր  
վերաբերմունքը դեպի լենինյան-իսկրայական ուղղությունը,

<sup>1</sup> Նույն տեղը։

որով և պետք է կանխորոշվեր այդ ուղղութիւնի բախտը ՌՍԴԲԿ առաջիկա 2-րդ համագումարում: Կուսակցութիւնի տեղական 26 կազմակերպութիւններին միայն երեքը չպաշտպանեցին առաջարկված նախագծի բոլոր դրույթները: Մնացածները, ի թիվս նաև Բաքվի ու Կովկասի կոմիտեները, արտահայտվեցին հօգուտ իսկրայական ծրագրի նախագծի:

ՌՍԴԲԿ հնագույն անդամներից մեկը՝ Վ. Շելգունովը, որն այդ շրջանում կուսակցական ակտիվ աշխատանք էր տանում Բաքվում, պատմում է. «Հենց այդ ժամանակ Բաքվում ստացվել էր կուսակցութիւնի ծրագրի նախագիծը: Այդ նախագծի քննարկմանը Լեոնիդ Բորիսովիչը (Կրասինը—Ն. Ի.) հրավիրել էր նաև ինձ: Ժողովը քաղաքում, ինչ-որ տեղ էր... Հիշում եմ, որ այդ ժողովում ներկա էին Բոգդան Կնունյանցը, Լեոնիդ Բորիսովիչը և էլի շորս հոգի, ընդամենը յոթ հոգի: Բոլորն էլ հավանութիւն տվին նախագծին»<sup>1</sup>: Կուսակցութիւնի ծրագրի նախագծի քննարկումը կուսակցական կազմակերպութիւններում ղեկավարում էին Բաքվի կոմիտեի անդամները, այդ թվում նաև՝ Կնունյանցը:

Նախագիծը քննարկվեց և հավանութիւն գտավ նաև ՌՍԴԲԿ Կովկասյան առաջին համագումարում: Համագումարը ընտրեց Անդրկովկասի կոմիտեների ներկայացրած թեկնածուներին կուսակցութիւնի երկրորդ համագումարի պատգամավորներ: Բաքվի՝ Անդրկովկասի խոշորագույն կոմիտեի կողմից ընտրվեց Բ. Կնունյանցը: Պատգամավորներ ընտրվեցին նաև Թիֆլիսի կոմիտեից՝ Իսարի Թոփուրիձեն և Բաթումի կոմիտեից՝ Արշակ Զուրաբյանը:

<sup>1</sup> Л. Б. Красин, Сборник воспоминаний, статей и документов, М.—Л., 1928, стр. 178.

Վ. Ի. Լենինը կազմկոմիտեին առաջարկել էր ՌՍԴԲԿ 2-րդ համագումարին տեղական ամեն մի կազմակերպությունից կամ կոմիտեից ուղարկել կուսակցության կենտրոնների կողմից ճանաչված մեկ կամ երկու պատգամավոր, «այն ընկերներից, որոնք հայտնի են իրենց անցյալ աշխատանքով...»<sup>1</sup>։ Անդրկովկասի երեք կազմակերպություններն էլ ծանր պայմանների, կոնսպիրացիայի և ալ նկատառումներով ուղարկեցին միայն մեկական պատգամավոր, որոնք սակայն ստացան երկու ձայնի իրավունք։

Բ. Կնունյանցը Կովկասյան կազմակերպության համագումարից հետո մեկնեց նախ Պետերբուրգ և ապա նույն թվականի մայիսին ուղևորվեց արտասահման։

Բոգդանին կրեկակոխ հետևող ցարական ոստիկանությանը չհաջողվեց ձերբակալել նրան։ Նա ընկավ ոստիկանական դեպարտամենտի՝ ցարական կարգերի համար վտանգավոր ու որոնման ենթակա անձանց ցուցակի մեջ։

Ավելորդ շնք համարում բերել այդ փաստաթղթի որոշ տվյալները։ № 1800 շրջաբերականում, ըստ որի տարվում էր հետախուզությունը և որը բազմացված ու ուղարկված էր երկրի բոլոր կողմերը, 85 հերթական համարով նշված էր Կնունյանցի անունը։ Մենդյան, կրթության, ընտանեկան դրության, ընտանիքի կազմի և մոտիկ ազգականների մասին տրված ընդհանուր տեղեկություններից բացի, նշված էին նրա արտաքին ու ֆիզիկական հատկանիշները.

«Հասակը՝ 1 մետր 66 սանտիմետր, կազմվածքը ամուր, գլխի մազերը՝ սև, սանրվածքը՝ աչից ձախ, հրեսը չի սափրում, աչքերը մուգ շագանակագույն, գլուխը՝ ձվաձև, ճակա-

<sup>1</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 160։

տը՝ միջակ, քիթը՝ միջին մեծության, դեմքի մաշկը՝ թխավուն, բոլոր ատամները տեղն են, ականջները սովորական մեծության, քայլվածքը սովորական»:

Շրջաբերականի վրա տպագրված էր նաև Կնունյանցի լուսանկարը:

«Գտնելուց հետո ինչպե՞ս վարվել...» հարցի դիմաց նըշված էր.

«Զերբակալել և հսկողության տակ ուղարկել Իրկուտսկի գեներալ-նահանգապետի տրամադրության տակ՝ 1903 թվականի հուլիսի 23-ի բարձրագույն հրամանը կատարելու համար: Այդ մասին տեղեկացնել ոստիկանական վարչությանը»<sup>1</sup>:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Բ. Կնունյանցի մասին եղած մի քանի հոդվածներում և հիշողություններում, վերոհիշյալ վավերագրի վրա հենվելով, սխալմամբ գրվել է, թե իբր Կնունյանցը շորս տարով աքսորված է եղել Սիբիր, որտեղից փախչելով, գնացել է կուսակցության 2-րդ համագումար: Այդ պնդումը, որ կրկնվում է մի քանի տպագիր աշխատություններում, ինչպես նաև Ս. Խանոյանի, Ա. Խումարյանի և ուրիշների հիշողություններում, իրականությունը չի համապատասխանում: Դրանում համոզվելու համար բավական է համադրել վերևում նշված փաստաթղթի և համագումարի ամսաթվերը և փաստական տվյալները:

\* \* \*

Բողոքան Կնունյանցը 1903 թ. հուլիսի 8-ին ժամանեց Ժնև, որտեղ հավաքվում էին համագումարի 43 պատգամա-

<sup>1</sup> ЦГИА, ф. 63, д. 209, 1904.

վորները: Այստեղից, փոքրիկ խմբերով, նրանք տեղափոխվեցին Բրյուսել և ապա Լոնդոն, որտեղ համագումարը շարունակեց և ավարտեց իր նիստերը:

ՌՍԴԲԿ 2-րդ համագումարում (17/30.7—10/23.8) օպորտունիստների դեմ Վ. Ի. Լենինի և նրա կողմնակիցների մղած ակտիվ պայքարում իր պատվավոր տեղն ունի Բ. Կնունյանցը (համագումարում նրա կեղծանուններն էին Բակիճեց և Ռուրեն, ըստ արձանագրությունների՝ Ռուսով): Համագումարի 37 նիստերից 23-ում նա 55<sup>+</sup> անգամ ելույթ է ունեցել, տեղեկանքներ է տվել կամ բանաձևեր է առաջարկել: Նա եղել է նաև համագումարի որոշ նիստերի քարտուղար: Նրա պայքարը Լենինյան գծի հաղթանակի համար բավական հանգամանալից ներկայացվել է գրականության մեջ: Այստեղ հարկ ենք համարում հիշատակել միայն ամենակարևոր հարցերում Ռուսովի դիրքորոշումը, նրա սկզբունքային, Լենինյան վարքագիծը:

Համագումարի ղեկավար օրգաններն ընտրելուց և կազմկոմիտեի ղեկուցումը լսելուց հետո, Վ. Ի. Լենինի առաջարկով, քննարկման ներկայացվեց «Բունդի տեղը ՌՍԴԲ կուսակցության մեջ» հարցը: Դրա կարևորությունը կայանում էր նրանում, որ կուսակցության առաջին համագումարը Մինսկում 1898 թ. օրինականացրել էր Բունդի գոյությունը որպես հրեա պրոլետարիատի շահերը ներկայացնող միակ կազմակերպություն: Հիմա, երբ երկրորդ համագումարը իր առջև խընդիր էր դրել ատեղծել միասնական կուսակցություն, անհրաժեշտ էր հենց սկզբից որոշել կուսակցության կազմակերպական սկզբունքներին վերաբերող կարևորագույն մի հարց՝ կարո՞ղ են, արդյոք, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ մնալ այնպիսի ինքնուրույն

կազմակերպություններ, որոնք ձևավորվել են ոչ թե տերիտորիալ, այլ ազգային կամ այլ հատկանիշներով: Իսկ Բունդը, ինչպես հայտնի է, ձգտում էր դրան: Համագումարին ներկայացված Բունդի կանոնադրության նախագծում ժխտվում էր կուսակցության կազմակերպությունների գոյության տերիտորիալ սկզբունքը, որը նրանց գործունեության մեջ արդեն արդարացված էր:

Համագումարի շորս նիստում քննարկվեց այդ հարցը: Տեղի էին ունենում տարբեր տեսակետների խիստ բախումներ: Ամփոփելով համագումարում եղած վեճերը և գնահատելով Բունդի աշխատանքն ու նրա դիրքավորումը, Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» աշխատության մեջ գրել է. «...եթե Բունդը չէր ուզում մեզ հետ միասին ընթանալ և ընդունել այն կազմակերպական սկզբունքները, որ «Իսկրա»-ի հետ միասին ընդունում էր կուսակցության մեծամասնությունը, ապա անօգուտ և անիմաստ էր «այնպես ձևացնել», թե մենք միասին ենք ընթանում, և միայն ձգձգել համագումարը (ինչպես ձգձգում էին բունդականները): Հարցն արդեն լիովին պարզված էր գրականության մեջ, և կուսակցության ամեն մի փոքրիշատե խոհուն անդամի համար ակներև էր, որ մնում է միայն հարցը դնել բացահայտորեն և ուղղակի, ազնվորեն ընտրություն անել՝ ավտոնոմիա (միասին ենք ընթանում), թե՞ ֆեդերացիա (բաժանվում ենք)»<sup>1</sup>:

Համագումարում ունեցած իր ելույթում Լենինը ավտոնոմիան համարում է միակ ճիշտ ելքը ստեղծված դրություններից:

«Բունդի տեղը կուսակցության մեջ» հարցի առթիվ

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 244—245:

Բ. Կնունյանցը ելույթ ունեցավ երեք անգամ: Պաշտպանելով լե-  
նինյան դիրքորոշումը՝ նա Անդրկովկասի կազմակերպություն-  
ների աշխատանքի փորձի հիման վրա ցույց տվեց Բունդի  
անջատողական (սեպարատիստական) քաղաքականության ան-  
հեթեթությունն ու անհիմն լինելը: «Ես հաճույքով եմ ընդգծում  
այն փաստը, որ մեզանում միանգամայն բացակայում է  
կազմակերպական սեպարատիզմը, — ասում էր նա, — որ վեր-  
ջին ժամանակներս այնքան ուժեղ է արտահայտվում Բունդի  
մեջ: Մեր քաղաքներից յուրաքանչյուրում գոյություն ունեն  
կուսակցական կոմիտեներ, որոնք գործում են մի քանի լե-  
զուներով, մինչև այժմ միայն երեք (ռուսերեն, վրացերեն և  
հայերեն), իսկ եթե հարկ լինի նաև շորս լեզվով (նաև թա-  
թարերեն\*): Եվ շնայած դրան, մինչև այժմ դրանից ոչ մի ան-  
հարմարություն առաջ չի եկել, և շարժման հաջողությունը  
կովկասում չի թուլացել: Ըստ իս, ներկայումս Բունդում տի-  
րապետող տենդենցը սոցիալիզմի հետ ոչ մի ընդհանուր բան  
չունի»<sup>1</sup>:

Այնուհետև, հատուկ հրեական կազմակերպության գոյու-  
թյունը, որ թույլ է տվել կուսակցության առաջին համագու-  
մարը, նա համարում է սխալ: Նա արտահայտում է այն կար-  
ծիքը, որ երկրի արևմտյան շրջաններում միայն Բունդի կազ-  
մակերպությունների գոյությունը, որ մինչև հիմա եղել է,  
այլևս չի կարելի արդարացնել, քանի որ այնտեղ հրեաներից  
բացի ապրում են ռուս, լեհ, լիտվացի, լատիշ և այլազգի  
բանվորներ: Իսկ առանձին կազմակերպության գոյությունը,  
շարունակում է Կնունյանցը, անհրաժեշտ է կապել միայն տե-

\* Ադրբեջաներեն:

<sup>1</sup> Протоколы съезда, стр. 61.

դական լեզվի կամ միատարր բնակչության առկայութեան հետ: Մինչդեռ հայտնի է, որ հրեաները տարբեր վայրերում խոսում են տարբեր լեզուներով և ոչ մի տեղ համախմբված չեն ապրում, այլ, ընդհակառակը, ցրված են տեղական բնակչության մեջ ամբողջ կայսրութիւնում:

Քննադատելով Բունդի ղեկավարների հարցադրման անընդունելի սկզբունքը Բոգդան Կնունյանցը իրավացիորեն նշում էր, որ «բացառիկ օրենքներ գոյութիւն ունեն ոչ միայն հրեաների, այլև Ռուսաստանի ուրիշ ժողովուրդների համար, որ այդ օրենքները խստորեն կիրառվում են նաև աղանդավորների և այլոց հանդեպ: Դրա համար էլ «բացառիկ օրենքները» ագիտացիայի համար «հսկայական նյութ տալով, բավականաչափ հիմք չեն տալիս ինքնուրույն կազմակերպութիւն ստեղծելու համար»: Իսկ քաղաքական աշխատանքի նպատակը լինելու է կուսակցական կազմակերպութիւն ստեղծելու և ամրապնդելու գործը, ոչ թե կազմակերպութեան քայքայումը:

«Սահմանափակող օրենքների ոչնչացմամբ, — ասում է Կնունյանցը, — Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատը նույնքան է շահագրգռված, որքան և հրեա պրոլետարիատը: Ահա ինչու, այդ պահանջը համապրոլետարական և ոչ թե հատկապես հրեական պահանջ է»: Իբրև ամփոփում, Կնունյանցը նշում է, որ միևնույն քաղաքում երկու կազմակերպութեան առկայութիւնը, «որքան էլ որ նրանք սերտ կապված լինեն, պայքարի ընդհանր կհանգեցնի անցանկալի դանդաղեցման և բարդութիւնների», ինչպես նաև՝ «կվնասի պրոպագանդային, պայքարի դասակարգային բնույթը փոխելով ազգայինի»<sup>1</sup>:

<sup>1</sup> Протоколы съезда, стр. 62.



Այս հարցի առթիվ իր առաջին ճառը նա ավարտում է համոզիչ կերպով, ցույց տալով, որ ինչպես հրեա, այնպես էլ բոլոր մյուս ազգութիւններին պատկանող պրոլետարներին շահերը միևնույնն են, հետևապես դրանք պետք է պաշտպանի դասակարգային մի կազմակերպութիւն:

«Ես գտնում եմ, որ կուսակցութեան յուրաքանչյուր անդամ հանդիսանում է ամբողջ Ռուսաստանի, ամբողջ պրոլետարիատի ներկայացուցիչը»<sup>1</sup>, — հպարտորեն հայտարարում է Կնունյանցը:

Իր երկրորդ ելույթում, պատասխանելով բունդականներին, նա քննադատում է նրանց կազմակերպական սեպարատիզմն ու դատողութիւններն այն մասին, թե իբր մյուս ազգութիւններին ներկայացուցիչները «փաստորեն չեն կարող» հրեա պրոլետարիատի մեջ աշխատանք տանել: Առարկելով նրանց, Կնունյանցը նշում է, որ աշխատանք տանելու համար պետք է լինել «նախ և առաջ սոցիալ-դեմոկրատ, երկրորդ՝ իմանալ տեղական լեզուն», իսկ չիմանալու դեպքում ունենալ թարգմանիչ: Այդ աշխատանքի համար հատուկ կազմակերպութեան հարկ չկա, որովհետև նա (տվյալ դեպքում՝ Բունդը) կհանգեցնի սեպարատիզմի:

Իր երրորդ ելույթում Կնունյանցը, բացառելով բունդականների հիմնական պահանջը, առաջարկում էր այնուամենայնիվ ըստ կետերի նայել նրանց կանոնադրութեան նախագիծը, բայց «Բունդի տեղը կուսակցութեան մեջ» հարցի առթիվ ընդհանուր բանաձև չընդունել: Իր առաջարկը բանաձևի մասին նա հիմնավորում է նրանով, որ Բունդի կանոնադրութեան նախագիծը ամբողջապես սկզբունքորեն չի կարելի քրն-

<sup>1</sup> Նույն տեղը:

Նարկել, որովհետև այն լի է կուսակցության համար անընդունելի դրույթներով: Որպես օրինակ նա բերում է կանոնադրության երկրորդ կետը, որը պահանջում է հրեա պրոլետարիատի պահանջները առանձնակի ներկայացնել: Նա գտնում է, որ դա հակասում է «միջազգային սոցիալիզմի՝ պրոլետարիատի դասակարգային շահերի համերաշխության մասին հիմնական դրույթին»: Եվ Կնունյանցը, որպես ինտերնացիոնալիստ, հայտարարում է, որ այդ բանը «իմաստ կունենար, եթե հրեա և ռուս պրոլետարիատի շահերը որևէ բանում հակասեին միմյանց»<sup>1</sup>: Վերջում նա եզրակացնում էր, որ «կուսակցության իդեալական կազմակերպության ձևը կլիներ բոլոր քաղաքներում կուսակցական միասնական կոմիտեաների գոյությունը, որոնք աշխատեին այն լեզվով, որի պահանջը կզգացվեր»<sup>2</sup>:

Համագումարի բանաձևին, որը ընդունվեց 46 ձայնով, դեմ դուրս եկան միայն 5 բունդականներ: Եվ վերջիններիս դիրքը միանգամայն հասկանալի էր, քանի որ բանաձևը ժխտում էր Բունդի պահանջը՝ նրան, որպես հրեա պրոլետարիատի միակ կազմակերպության, ֆեդերացիայի սկզբունքով, ՌՍԴԲԿ-ի մեջ ընդունելու մասին:

Բունդից բացի եղան նաև ուրիշ կազմակերպություններ, որոնք ցանկացան շարունակել իրենց գոյությունը որպես ամբողջություն և չձուլվել կուսակցական տեղական կազմակերպությունների մեջ: Համագումարի երեք նիստ պահանջվեց այդ հարցը լուծելու համար: Պատճառն այն էր, որ եթե «Աշխատանքի ազատագրության» խմբակը, «Իսկրա» թերթի

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 103:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 104:

կազմակերպությունն ու մի քանի ուրիշ տեղական կազմակերպություններ հայտարարեցին իրենց ինքնալիկվիդացման կամ արձակման մասին, ապա էկոնոմիզմի դիրքերի վրա կանգնած «Ռուս սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան միությունը» և «Յուժնի ռաբոչին» չէին ցանկանում այդ կատարել: Վ. Ի. Լենինի բազմաթիվ կողմնակիցներ ելույթ ունեցան հօգուտ մեծամասնության բանաձևի, որը արձանագրեց. «Ձ-րդ համագումարը ավելորդ է համարում «Յուժնի ռաբոչի» խմբի, որպես կոլեկտիվ միավորի, գոյությունը, հայտարարում է այն արձակված և նրա անդամներին առաջարկում է մտնել համապատասխան կուսակցական կազմակերպությունների մեջ»<sup>1</sup>:

Ելույթ ունենալով տվյալ բանաձևի օգտին և հաշվի առնելով ժամանակի պայմաններն ու պահանջները, Բ. Կնունյանցը ասաց. «Առկա կուսակցական բոլոր ուժերը պետք է կենտրոնացվեն կուսակցական օրգանում: Բոլոր անկուսակցական և տեղական օրգաններն ավելորդ են: Տարբեր է հրեական, հայկական, վրացական, տեղական հրատարակությունների հարցը, առանց դրանց անկարելի է յուրա գնալ: «Յուժնի ռաբոչին» եղել է օգտակար, սակայն այստեղ հարկ չկա հաշվի նստել կուսակցական համակրանքների հետ»<sup>2</sup>:

Հարցի նման դրվածքը Վ. Ի. Լենինը համարում է շփարհանց սկզբունքային, կուսակցության շահերից բխող:

Պատգամավորների մեծամասնությունը, նշում է Լենինը, նրանց թվում նաև ապագա մենշևիկները, միացան առաջարկված բանաձևին, «...ողջունելով «ուղղակի հարցադրումը» հենց իրեն՝ ընկ. Ռուսովի, որը այդ նույն նխառում հանդրգ-

1 Նույն տեղը, էջ 439:

2 Նույն տեղը, էջ 350:

նություն ունեցավ, օ՛ սարսափ, հին խմբագրութեան (այսինքրն՝ «Իսկրա»-ի կազմակերպութեան— Ն. Ի.) հարցը ևս «ուղղակի դնելու» զուտ կուսակցական հողի վրա»<sup>1</sup>:

Այսպիսով «կուսակցութիւն, թե՛ խմբակայնութիւն» հարցը համագումարը որոշում է լենինյան-խկրայական կազմակերպական սկզբունքների ոգով:

Համագումարի երրորդ, կարևորագույն հարցերից մեկը ծրագրի ընդունումն էր: Վերևում նշվեց, որ ծրագրի նախագիծը մինչև համագումարը քննարկվել էր բոլոր տեղական կազմակերպութիւններում: Հայտնի է նաև, որ ծրագրի նախագիծը նախապատրաստված էր «Իսկրա»-ի խմբագրութեան կողմից և ներկայացված համագումարին: Երկար քննարկումից հետո ծրագիրն ամբողջութեամբ ընդունվեց՝ շահելով համագումարի բոլոր ձայները: Դեմ քվեարկեց միայն Ակիմովը:

Այդ առթիվ Ռուսովը ելույթ ունեցավ և որոշակի հեզնանքով առաջարկեց «Ընկ. Ակիմովի բոլոր ուղղումներից կազմել մի ծրագիր, քանի որ դրանք, ըստ էութեան, կազմում են «Իսկրա»-ի ծրագրից սկզբունքորեն տարբեր ծրագիր»<sup>2</sup>:

Զնայած կուսակցութեան ծրագիրն ամբողջութեամբ ընդունվեց միաձայն, սակայն ծրագրի առանձին հարցերը համագումարում առաջ բերին բուռն վեճեր:

Լենինի կողմնակիցների համախմբվածութեան և հաստատակամութեան շնորհիվ, համագումարի օպորտունիստական թևին չհաջողվեց մերժել ծրագրի Լենինի առաջարկած կարևորագույն կետը՝ պրոլետարիատի դիկտատուրայի մասին:

1 Վ. Ի. Լենին, Երկրի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 257:

2 Протоколы съезда, стр. 175.

Ռուսն վեճեր առաջ բերեց ազրարային հարցը: Այն մշակ-վել էր Վ. Ի. Լենինի կողմից, կազմել կուսակցության ազ-րարային ծրագրի հիմքը և մտել իսկրայական ծրագրի մեջ, որպես նրա կարևոր մասը: Քննարկման ընթացքում բոլոր օպորտունիստները, էկոնոմիստների լիդեր Ա. Ս. Մարտինովի գլխավորությամբ, հանդես եկան ազրարային ծրագրի դեմ: Նրանք գտնում էին, որ հողային հարցը բուրժուազիայի և բուրժուական հեղափոխության խնդիրն է, հետևապես սո-ցիալ-դեմոկրատների գործը չէ դրանով զբաղվելը:

Առարկելով բոլոր օպորտունիստներին, Վ. Ի. Լենինը բազ-մաթիվ անգամներ ասել է, որ սոցիալ-դեմոկրատիան, իր պայքարի ընթացքում, պարտավոր է ավարտել այն, ինչ բուր-ժուազիան թերի է թողել: Այդ խնդիրների մեջ ամենա-հրատապներից մեկը Լենինը համարում էր ազրարային խնդիրը:

Վ. Ի. Լենինին պաշտպանում էին նրա բոլոր կողմնակից-ները, նշելով, որ ճորտատիրության մնացորդների ոչնչացու-մը, ազրարային «ռեֆորմի» ավարտումն անհրաժեշտ է եր-կիրը դեմոկրատական հիմունքներով վերափոխելու, ինչպես նաև գյուղացիներին, որպես պրոլետարիատի դաշնակիցների, լուսավորելու տեսակետից՝ միապետության դեմ ուղղված հա-մադեմոկրատական շարժմանը մասնակից դարձնելու համար: Մարքսիզմի ընդհանուր դրույթների և տեղական վիճակը վեր-լուծելու հիման վրա իրենց մոտեցումն էին ցուցաբերում համազումարի պատգամավորները:

Ռուսովը, որ ակտիվորեն մասնակցում էր ազրարային հարցի քննարկմանը, պաշտպանեց Լենինի տեսակետը՝ Ռու-սաստանի բոլոր մասերում գոյություն ունեցող ճորտատիրու-թյան մնացորդների դեմ պայքարելու անհրաժեշտության մա-

սին: Նա առաջարկեց վանքապատկան և կալվածատիրական գույքը բռնագրավելու պահանջն ընդունել որպէս առանձին կետ, որը համագումարում շքնդունվեց, շնայած լենինյան նախագծում այդ չէր բացառվում: Հետագայում այդ պահանջը կազմեց կոռակցութեան ագրարային ծրագրի բաղկացուցիչ մասերից մեկը:

Ագրարային ծրագրի նախագծում լենինը նույնպէս նախատեսել էր գյուղացիական կոմիտեաների ստեղծումը, որոնք պետք է ղեկավարեին գյուղացիների պայքարը իրենց իրավունքների համար: Լենինյան նախագծի հակառակորդները դուրս եկան նաև այդ կետի դեմ: Պաշտպանելով լենինյան դրույթները, Ռուսովն առաջարկեց ամենուրեք ստեղծել գյուղացիական կոմիտեաներ՝ թե՛ ճորտատիրութեան մնացորդների դեմ պայքարելու և թե՛ հողակտորները վերադարձնելու համար:

«Անհրաժեշտ է ավելացնել,— ասում էր նա,— որ գյուղացիական կոմիտեաները կոչնչացնեն ոչ միայն հողակտորները, այլև ճորտացման բոլոր պայմաններն ընդհանրապէս: Ինչո՞ւ կապել գյուղացիական կոմիտեաների ձեռները: Թերևս նրանք ստիպված կլինեն բռնագրավել առանձին կալվածներ»<sup>1</sup>:

Քվեարկելիս լենինյան ագրարային ծրագրի նախագիծն անցավ ձայների մեծամասնութեամբ (31 ձայն):

«Կովկասյան պատգամավորներն այստեղ միանգամայն ճիշտ դիրք էին գրավել,— գրել է լենինը,— զգալի շարժում, հավանորեն, շնորհիվ այն բանի, որ ճորտատիրութեան բազմաթիվ մնացորդների տեղական ձևերին մոտիկից ծանոթ լինելը նրանց նախազգուշացրել է արստրակտ աշակերտական

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 246:

մերկ հակադրումներից, որոնք բավարարում էին Մախով-  
ներին»<sup>1</sup>:

Համագումարի օրակարգի հինգերորդ հարցը տեղական  
կազմակերպությունների ղեկուցումների քննարկումն էր:  
Պրանք գրված էին Վ. Ի. Լենինի կազմած հարցաթերթիկի հի-  
ման վրա, որը համագումարի նախօրյակին ուղարկվել էր  
տեղերը: Սակայն 26 կազմակերպություններից իրենց գործու-  
նեռության մասին միայն 15-ն էին ներկայացրել հաշվետվու-  
թյուններ<sup>2</sup>: Առաջինը ղեկուցումով հանդես եկավ Ռուսաստանի  
խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Բաքվի կոմիտեի  
պատվիրակ Բ. Կնունյանցը<sup>3</sup>: Նա երեք քառորդ ժամ ղեկուցում  
էր հեղափոխական շարժումների և Բաքվի կոմիտեի աշխա-  
տանքների մասին: Նա նշում էր այն ծանր պայմանները,  
որոնցում Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատները սկսել էին  
իրենց գործունեությունը, որի ընթացքում նրանք կարողացել  
են հաղթահարել թե՛ ազգային ու կրոնական և թե՛ քաղաքա-  
կան ու կազմակերպական խնդիրների հետ կապված դժվա-  
րությունները: Բ. Կնունյանցը, որպես մասնակից և ղեկավար,  
ամենայն մանրամասնությամբ է նկարագրել գործերի վիճակը  
Բաքվում և նրա 5 առանձին շրջաններում (բանվորական  
առանձին հիւլյթները, ագիտացիայի և պրոպագանդայի, հրա-  
տարակչական հնարավորությունների հարցը, կուսակցական  
ֆինանսները, կազմակերպական խնդիրները Բաքվի և Կով-  
կասի կոմիտեներում և այլն):

Կուսակցական աշխատանքների բարձր մակարդակի մա-  
սին է խոսում ղեկուցողի այն կարևոր միտքը, թե իսկրայա-

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 274:

2 Տե՛ս Протоколы, էջ 480—694:

3 Նույն տեղը, էջ 514—532:

կան ազդեցութիւնը «մեզ մոտ տիրապետող էր սկզբունքային իմաստով: «Ի՞նչ անել» գրքի երեւան գալը մեզ մոտ շառաջացրեց ոչ մի պառակտում և տարածայնութիւններ: Կոմիտեն իր հիմնական սկզբունքներում համաձայն էր նրա հետ և ուժերը ներածի սահմաններում իրագործում էր առաջադրած ծրագիրը»<sup>1</sup>: Այս զեկուցումը (երկար տարիներ այն համարվում էր կորած և միայն մոտ 20 տարի առաջ գտնվեց ու զետեղվեց երկրորդ համագումարի նյութերի ստվարածավալ հատորում) հանդիսանում է շափազանց կարևոր աղբյուր Անդրկովկասում և Ռուսաստանի հարավում հեղափոխական շարժումների պատմութեան համար:

Պատվիրակների զեկուցումները քննարկելուց հետո համագումարն անցավ իր հիմնական հարցերից մեկի՝ կուսակցութեան կանոնադրութեան նախագծի քննարկմանը:

Նախագծի 13 կետերից միայն առաջինի շուրջը անողոք պայքար ծավալվեց Լենինի կողմնակիցների և նրա հակառակորդների միջև: Կուսակցութեան կանոնադրութեան առաջին կետի վերաբերյալ, ինչպես հայտնի է, համագումարում կար երկու ձևակերպում՝ Լենինի և Մարտովի:

Այդ երկու ձևակերպումների շուրջը ծավալված պայքարը կազմակերպչական հարցի նկատմամբ դրսևորում էր երկու տարբեր մոտեցում, երկու տարբեր տեսակետ:

Կուսակցութեան ամբողջ ապագայի և հետագա գործունեութեան համար կենսական կարևորութիւն էր ներկայացնում այն հարցը, թե ով կարող է կուսակցութեան անդամ լինել, և կուսակցական կազմակերպութիւնները գոգծնականում կա-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 518—519:



րո՞ղ են արդյոք ղեկավարել կուսակցութեան անդամներին աշխատանքները: •

Վ. Ի. Լենինը ձգտում էր ամեն կերպ ապացուցել կուսակցական կազմակերպութիւնների հսկողութեան և ղեկավարութեան անհրաժեշտութիւնը իրենց անդամի աշխատանքի նկատմամբ, պարզաբանում էր, որ ընդունել Մարտովի սխալ ձեւակերպումը, նշանակում է կուսակցութեան դռները բացել պատահական մարդկանց առաջ, նշանակում է կազմալուծել կուսակցութիւնը, քայքայել նրա շարքերը:

Կանոնադրութեան առաջին կետի քննարկման ժամանակ Ռուսովը բռնեց սխալ դիրք: Այդ հարցի առթիվ ունեցած իր ելույթում նա կանգնեց Մարտովի տեսակետի վրա:

«Այստեղ ներկա եղող յուրաքանչյուր գործնական մարդ,— ասում էր նա,— եթե միայն փորձի հիշել տեղերում բոլոր աշխատողներին, կհամաձայնի, որ այդպիսիները շատ են հատկապես բանվորների մեջ: Նրանց կուսակցութեանը կցելը, բնավ չվնասելով կուսակցութեան աշխատանքին և գաղափարական մաքրութեանը, դրա հետ մեկտեղ հնարավորութիւն կտա յուրաքանչյուր ընդհանրապես իմանալ, թե մենք նվազագույն ինչ ուժի վրա կարող ենք հույս դնել: Բացի դրանից, այդ կցումը հնարավորութիւն կտա պահանջել այդ բոլոր մարդկանցից, որ նրանք անվերապահորեն կատարեն այն պարտականութիւնները, որ կուսակցութիւնը դնում է իր անդամների վրա»<sup>1</sup>:

Այստեղ գոյութիւն ունի հարցի ոչ հստակ պատկերացում: Ռուսովը գտնում էր, որ կուսակցութեան առաջադրանքով ակտիվ աշխատող ամեն մի բանվոր կամ մտավորական կարող

<sup>1</sup> Протоколы, стр. 272—273. Ընդգծումները մերն են:

է արդեն կուսակցութեան անդամ համարվել: Ռուսովի և մի շարք այլ իսկրայականների սխալը այս հարցում Վ. Ի. Լենինը համարել է խիստ բնորոշ «շատ պատգամավորների վերաբերմունքին, որոնց համար հեշտ չէր հասկանալ իրոք նոր, բավական բարդ և մանրակրկիտ հարցը»<sup>1</sup>:

Ինքը՝ Բ. Կնունյանցը, վերլուծելով վերոհիշյալ հարցի առթիվ եղած տարածայնությունները, համագումարի արդյունքների մասին Բաքվի կոմիտեին գրած նամակում նշում է. «Կարծիքները բավականին երկնեբանց և պատահական կերպով խմբավորվեցին կազմակերպութեան երկու տարբեր սխեմաների ներկայացուցիչներին՝ Լենինի և Մարտովի շուրջը...»<sup>2</sup>:

Քվեարկութեան արդյունքը եղավ 28 կողմ, 22 դեմ, և ժամանակավորապես հաղթեց Մարտովի տեսակետը:

Նախկինում այս բանը բացատրելու համար ընդունված էր ասել, որ կազմակերպական հարցերում համագումարը չգրտնըվեց իր բարձրութեան վրա: Այնուհետև տիրապետող դարձավ հետևյալ ձևակերպումը, որ Մարտովի հաղթանակը բացատրվում էր Լենինի դեմ բոլոր օպորտունիստների համախըմբումով: Իսկ իրականութունը այլ էր: Հայտնի է, որ Լենինի ձևակերպման օգտին քվեարկող ձայներից 4-ը պատկանում էին օպորտունիզմի այնպիսի պարագլուխների, ինչպիսիք էին՝ Բրուկերը (Մախնովեց), Եգորովը (Լևին), Յարևը (Լոկմերան), Նիկոլաևը (Մեդվեդև): Իսկ Մարտովը ստացավ իսկրայական մեծամասնականներից 5 ձայն: Վ. Ի. Լենինը հիշյալ քվեարկութեան արդյունքներին տվել է հետևյալ գնահատականը. «Իհարկե, այստեղ ևս կան առանձին ձայներ,

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 299—300:

<sup>2</sup> Б. М. Кнунянц, Избр. произв. стр. 58: Հնդգծումը մերն է:

որոնք խախտում են պատկերի լիակատար ներդաշնակու-  
թյունը,— մի այնպիսի մեծ ժողովում, ինչպես մեր համագու-  
մարն է, անխուսափելիորեն մի մասը կազմում են «վայրե-  
նիները», որոնք պատահաբար մերթ մի կողմն են ընկնում,  
մերթ մյուս կողմը, մանավանդ մի այնպիսի հարցում, ինչպես  
Տ առաջինն է, որտեղ տարածայնության իսկական բնույթը  
դեռևս ուրվագծվում էր միայն, և շատերն ուղղակի ժամանակ  
չունեցան հասկանալու (հարցը գրականության մեջ նախապես  
քննարկված չլինելու պատճառով): Մեծամասնության իսկ-  
րայականներից բաժանվեց հինգ ձայն (Ռուսովը և Կարսկին  
երկուական ձայնով, Լենսկին մեկ ձայնով)...»<sup>1</sup>:

Համագումարի մթնոլորտը հետզհետե շիկանում էր, և  
տարվող սուր պայքարը բնականաբար պետք է հանգեր մի  
հարցի, որտեղ խմբավորումները վերջնականապես պետք է  
տարբերագատվեին:

Պառակտումը տեղի ունեցավ կուսակցության կենտրոնա-  
կան օրգանների ընտրության ժամանակ: Մինչ այդ համագու-  
մարից հեռացան Բունդի հինգ ներկայացուցիչները և երկու  
էկոնոմիստներ՝ արտասահմանի ուս սոցիալ-դեմոկրատների  
միության պատգամավորները: Համագումարում մնացին 36  
պատգամավոր՝ 44 վճռական ձայնով: Լենինյան իսկրայա-  
կանների համար ստեղծվեց բարենպաստ դրություն: Սակայն  
կենտրոնական օրգանների ընտրությունները հանգեցրին նոր  
բախումների ու անհամաձայնությունների: Ստեղծվել էր ջղա-  
գրգիռ և ծանր վիճակ: Հարցը բարդանում էր նաև նրանով, որ  
պատգամավորների մեծ մասը ծանոթ չէր համագումարի  
մասնակիցների ծածկանուններին և թեկնածուներ առաջար-

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 326—327:

Այելիս պետք է հենվեր «Իսկրա»-ի խմբագիրների կարծիքի վրա, քանի որ նրանց ճանաչում էին բոլորը: Առաջարկություններով հանդես եկան Լենինը և Մարտովը: Կենտրոնական մարմինների՝ «Իսկրա» թերթի խմբագրության և Կենտրոնական կոմիտեի կազմում Վ. Ի. Լենինը առաջարկում էր ընտրել երեքական հոգի: Նա գտնում էր, որ «Իսկրա»-ի խմբագրական հին կազմը, ինչպես ցույց տվեց մոտ երեք տարվա նրա գործունեությունը, չպետք է վերականգնվեր կամ վերընտրվեր, քանի որ տարբեր վայրերում բնակվող 6 խմբագիրներից փաստորեն աշխատում էին միայն 3-ը՝ Լենինը, Մարտովը և Պլեխանովը: Վ. Ի. Լենինը առաջարկում էր ընտրել միայն այն խմբագիրներին, որոնք կկարողանային հավասարապես կիսել թե՛ ծանրաբեռնվածությունը և թե՛ պատասխանատվությունը: Այնուհետև Վ. Ի. Լենինը ցանկանում էր, որ կուսակցության Կենտրոնական կոմիտեում լինեին իսկրայական ուղղության երեք այնպիսի ներկայացուցիչներ, որոնք կապված էին հեղափոխական պրակտիկայի, Ռուսաստանի հեղափոխական շարժման հետ, որպեսզի կենտրոնական մարմինները մշտապես գտնվեին նրանց բարերար ներգործության ներքո: Երկու կենտրոնական օրգանների գործունեությունը համաձայնեցնելու նպատակով առաջարկվեց ընտրել նաև կուսակցության խորհուրդ՝ բաղկացած խմբագրության և ԿԿ երկուական ներկայացուցիչներից և համագումարի կողմից ընտրված հինգերորդ անդամից: Սակայն այն կազմվեց առաջին և վերջին անգամ և ցուցաբերեց օպորտունիստական դիրքավորում, որը պայմանավորված էր խորհրդի նախագահ Գ. Պլեխանովի վարքագծով:

Մարտովը համաձայն չէր եռյակներ ընտրելու մասին Լենինի կարծիքին և պնդում էր խմբագրական հին կազմը

թողնելու առաջարկը: Իր առաջարկը պաշտպանելիս նա հեն-  
վում էր նաև համագումարի կողմից «Իսկրա»-ն կենտրոնա-  
կան օրգան ճանաչելու որոշման վրա:

Այս պայմաններում Լենինի և նրա կողմնակիցների նա-  
խաձեռնութունից, հաստատակամութունից և սկզբունքայ-  
նութունից էր կախված մեծամասնության հաղթանակը:

«Սվ պահա համագումարում ընկ. Ռուսովն առաջարկեց  
ամենից առաջ ընտրել երկու եռյակ»<sup>1</sup>:

Կատարելով Լենինի հանձնարարութունը, իր ելույթում  
Ռուսովն ասաց. «Մենք, ընկերներ, այժմ կանգնած ենք հա-  
մակուսակցական կյանքի կարևոր խնդիրների լուծման՝ կու-  
սակցության կենտրոնների ստեղծման առջև:

Համագումարում մեր հսկայական ամբողջ աշխատանքը,  
մեր մշակած ծրագիրն ու կանոնադրութունը ոչնչի կհանգեն,  
եթե մենք չընտրենք գործունակ կոլեգիաներ: Բայց նախքան  
ընտրութուններին անցնելը, մենք պետք է որոշենք ընտրու-  
թյան կերպը: Լավագույնը ես կհամարեի երկու եռյակի ընտ-  
րութունը թե՛ Կենտրոնական կոմիտեում և թե՛ կենտրոնա-  
կան օրգանի խմբագրության մեջ: Այս ընտրութունը, ինչպես  
նաև բոլոր պաշտոնական անձանց ընտրութունը պետք է  
կատարվի տոմսակները գաղտնի հանձնելու միջոցով: Ավելի  
լավ կոնսպիրացիայի համար ԿԿ-ի հարցում անհրաժեշտ եմ  
համարում ընտրութունների արդյունքները որոշելը թողնել  
նախագահին, ընդ որում ընտրվածներից միայն մեկի անունն  
է հայտարարվում համագումարին»<sup>2</sup>:

Ըստ Լենինի բնորոշման, խոսքն այն մասին էր, թե ո՞ւմ

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 371:

2 Протоколы էջ 357—358.

պետք է հանձնենք «գիրիժորի փայտիկը» կուսակցութեան ղեկավարման գործում:

Ահա այդ «գիրիժորի փայտիկի» շուրջը պայքարն ավելի սրվեց, և այդ հարցին նվիրված նիստերը, թերևս, ամենաբուռն ու կրքոտ ձևով էին ընթանում: Խմբագրութեան հարցը քննարկելիս հին խմբագիրները նիստից հեռացան, որպեսզի պատգամավորներին ազատ արտահայտվելու հնարավորութիւն տան:

Լենինի կողմնակիցներ Կրասիկովը (Պավլովիչ), Լանգեն և Ռուսովը գտնում էին, որ նրանք պետք է վերադառնան դահլիճ, որովհետև առանց այդ հեղինակավոր գործիչների ընտրութիւններ կատարելը նպատակահարմար չէ: Սակայն նրանց մասնակցութիւնը շմեղմացրեց դրութիւնը, քանի որ Մարտովը և նրա կողմնակիցները անցան հին կազմի պաշտպանութեանը, պատճառաբանելով, որ իբր թերթի խմբագրութիւնը եղել է «մի միասնական ամբողջութիւն» և հարկ չկա այդ ամբողջութեան մեջ «ներխուժել», որովհետև կարող ենք սխալմամբ հեռացնել «ամենաարժեքավորը»: Նրանք էթիկային դեմ էին համարում վիրավորել հին խմբագրութեան անդամներից որևէ մեկին:

Ահա այդպիսի մթնոլորտում հնչեց Ռուսովի կրակոտ ու մարտական ճառը: Բերում ենք այդ ճառի կարևոր մասերը.

«Հիմնական փաստարկը, որի վրա հենվում են եռյակների ընտրութեան հակառակորդները, կուսակցական գործի նկատմամբ նրանց զուտ քաղքենիական հայացքի արտահայտութիւնն է:

Եթե Դուք շքնարեք կուսակցութեան ականավոր գործիչ իվան Իվանովիչին, դուք նրա նկատմամբ անվատահուժիւն ենք ցուցաբերում և վիրավորանք հասցնում: Նրանք պնդում

են՝ ախր դուք չգիտեք, թե կարո՞ղ է, արդյոք, այսինչը կամ այնինչը կատարել այս կամ այն կուսակցական հիմնարկության ֆունկցիան, ախր դուք չեք կարող գլուխ հանել այն կազմակերպությունների ներքին կյանքից, որտեղ նախկինում աշխատել է տվյալ անձնավորությունը, այս դեպքում դուք ինչպե՞ս կարող եք ընտրություն կատարել: Այսպիսի պայմաններում այդ մարդկանց հեռացումը նրանց նկատմամբ համազումարի կողմից անվստահություն է նշանակում, մի բան, որ անհիմն է, դրա համար էլ՝ անթույլատրելի: Եվ այդ ասում են ոչ միայն Երիտասարդ հեղափոխականները, այլև այնպիսի փորձառու հեղափոխականը, ինչպիսին ընկ. Դեյչն է (ընդհանուր շարժում, բողոքներ, սպառնալից կանչեր): Ընդունելով այդ ոչ-կուսակցական, քաղքենիական տեսակետը, յուրաքանչյուր ընտրության ժամանակ կկանգնենք նույն հարցի առջև. իսկ արդյոք Պետրովը չի՞ վիրավորվի, որ ոչ թե իրեն, այլ Իվանովին ընտրեցինք, չի՞ վիրավորվի, արդյոք, նախկին Կազմակերպական կոմիտեի այսինչ անդամը, որ ոչ թե իրեն, այլ ուրիշին ընտրեցին Կենտրոնական կոմիտեի մեջ: Իսկ դա ո՞ւր կհասցնի մեզ, ընկերներ: Եթե մենք այստեղ հավաքվել ենք ոչ թե փոխադարձաբար հաճոյական ճառեր ասելու, ոչ թե քաղքենիական քնքրությունների, այլ կուսակցություն ստեղծելու համար, ապա մենք ոչ մի կերպ չենք կարող համաձայնել այդ տեսակետի հետ: Մենք պաշտոնատար անձնավորությունների ընտրության հարցի առջև ենք կանգնած, և այստեղ չի կարող հարց լինել այս կամ այն չընտրված ընկերոջ հանդեպ անվստահություն ցուցաբերելու մասին, այլ միայն գործի մասին և այն մասին, թե ընտրվող անձը համապատասխանո՞ւմ է այն պաշտոնին, որի համար ընտրվում է: Ահա թե ինչու ես ընկերներին եռանդագին կոչ

եմ անում՝ շնորհովել շքնարվածների նկատմամբ անվստահու-  
թյան մասին քաղքենիական քննուշ ճառերով, այլ բոլոր ընտ-  
րությունների ժամանակ, ինչպես և բոլոր դեպքերում կանգ-  
նել կուսակցության շահերի, ընդհանուր գործի շահերի տեսա-  
կետի վրա»<sup>1</sup>։

Վ. Ի. Լենինը Բ. Կնունյանցի այս ելույթին տվել է հետևյալ  
բարձր գնահատականը․

«Մենք խորհուրդ կտալինք բոլորին, ովքեր ուզում են ինք-  
նուրույնաբար վերլուծել կուսակցական պառակտման պատ-  
ճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ  
և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը, որի փաստարկում-  
ները փոքրամասնությունը ոչ միայն չհերքեց, այլև նույնիսկ  
չվիճարկեց։ Ասենք, չի էլ կարելի վիճարկել այնպիսի տար-  
րական այբբենական ճշմարտություններ, որոնց մոռացումն  
արդեն ինքն ընկ. Ռուսովը արդարացի կերպով բացատրում էր  
միայն «ենեւվայի՛ն գրգիռով»<sup>2</sup>։

Լենինյան առաջարկը պաշտպանում են Գուսևը, Լանգեն,  
Պավլովիչը, Սորոկինը։ Մարտովականներին մեղադրելով, թե  
նրանք քաղքենիներ են և ոչ թե կուսակցական գործիչներ,  
Գուսևն ասաց. «Ընկեր Ցարևն այսօր իր ճառում զայրանում էր  
ընկ. Ռուսովի եռյակն ընտրելու վերաբերյալ նախագծի վրա,  
սակայն մի քիչ ժամանակ առաջ նրան բոլորովին շէր վրդ-  
վում Լենինի նախագիծը, շնայած ընկ. Ռուսովի նախագիծը  
բառացիորեն ընկ. Լենինի նախագծի կրկնությունն է»<sup>3</sup>։

Համագումարը քվեարկում է հօգուտ Լենինյան առաջարկ-

1 Նույն տեղը, էջ 363—364։

2 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 376։

3 Протоколы, стр. 365.



ների: Ի պատասխան այդ որոշման, Մարտովը, ցուցաբերելով իսկական քաղքենիական մոտեցում, առաջարկում է փոխել հին «Իսկրա»-ի անունը, քանի որ նրա գործունեությունը ճիշտ չի գնահատվել, որը նա դիտում է իբրև վիրավորանք հին խմբագրության հասցեին: Քվեարկությունից հետո Մարտովը պաշտոնապես հրաժարվում է խմբագրության կազմում աշխատելուց: Ստեղծված վիճակից դուրս գալու նպատակով Ռուսովը և Պավլովիչն առաջարկում են՝ արդեն ընտրված խմբագրությանը իրավունք վերապահել կազմը մեկ մարդով ավելացնելու: Այս առաջարկն անցնում է 24 ձայնով:

Կենտրոնական կոմիտեի կազմի ընտրության ժամանակ Մարտովը առաջարկում է համագումարի բյուրոյին ներկայացնել ցուցակներ՝ յուրաքանչյուրի մեջ երեք հոգու ազգանուն և քվեարկության դնել ոչ թե առանձին մարդկանց թեկնածությունները, այլ՝ ցուցակները:

Այս առաջարկին առարկում են Պլեխանովը, Լյադովը և Ռուսովը: Վերջինս գտնում է, որ ընտրությունը կատարելիս պետք է ելնել Կենտրոնական կոմիտեի գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից և թեկնածուների նկատմամբ ունենալ անհատական մոտեցում: Նա առաջարկում էր, որպեսզի գաղտնի քվեարկությունից հետո նախագահը, կոնսպիրատիվ նկատառումներով, հրապարակի ընտրված եռյակից մեկի անունը: Եզրափակելով այդ հարցի առթիվ տեղի ունեցած մտքերի փոխանակությունը, Վ. Ի. Լենինն ասաց.

«Քանի որ այստեղ ստեղծվեց կոմպակտ մեծամասնություն, ապա դրանով արդեն հայտնի դարձավ, թե ընտրված ԿԿ-ը գործունակ է արդյոք, թե՞ ոչ. ընտրությունը հետաձգել չի կարելի: Շատ քիչ ժամանակ է մնացել: Ընտրությունը հե-

տաձգելու մասին ընկ. Մարտովի առաջարկը անհիմն է:  
Պաշտպանում եմ ընկ. Ռուսովի առաջարկը»<sup>1</sup>:

Ընտրության կարգի առթիվ տեղի ունեցած քվեարկության  
ժամանակ հաղթանակը շահում է մեծամասնությունը: Անց-  
նում է Ռուսովի առաջարկը:

Լենինի առաջարկը քվեարկելիս Մարտովի 20 կողմնակից-  
ները քվեարկությանը շմասնակցեցին: Եռյակի օգտին կողմ  
քվեարկեց 24 հոգի:

Լենինը հիշատակել է, որ համագումարի մեծամասնական-  
ների մասնավոր զրույցների ժամանակ Կենտրոնական կոմի-  
տեի անդամության համար առաջադրվեց նաև Ռուսովի թեկ-  
նածությունը<sup>2</sup>:

Այսպիսով, կենտրոնական օրգանի, Կենտկոմի ու կուսակ-  
ցության խորհրդի կազմի ընտրությունների ժամանակ մեծա-  
մասնության հաղթանակը և փոքրամասնության պարտու-  
թյունը «հենց ցույց է տալիս վերջնական բաժանումը մեծա-  
մասնության և փոքրամասնության» (Լենին):

Փոքրամասնությունը պարտություն կրելով, Լենինի ար-  
տահայտությամբ, հանգեց լիակատար միաձուլման «ամբողջ  
կենտրոնի» և հակախակրայականների մնացորդների հետ»<sup>3</sup>:

Չնայած նշված բացասական երևույթներին, համագումարը  
կատարեց իր հիմնական խնդիրը՝ պրոլետարիատի միասնա-  
կան հեղափոխական կուսակցություն ստեղծելու խնդիրը:  
Վ. Ի. Լենինը այն արտահայտեց հետևյալ ձևակերպումով.

1 Նույն տեղը, էջ 379:

2 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկրի լիակատար ժողովածու, հ. 8, էջ 518:

3 Նույն տեղը, էջ 414:

«Իսկրայական ծրագիրը և ուղղությունը պետք է դառնա-  
յին կուսակցության ծրագիրն ու ուղղությունը, իսկրայական  
կազմակերպական պլանները պետք է հաստատում գտնեին  
կուսակցության կազմակերպական կանոնադրության մեջ»<sup>1</sup>։

ՌՍԴԲԿ 2-րդ համագումարում Վ. Ի. Լենինի կողմնակից-  
ների պայքարը ավարտվեց հաղթանակով։ Այդ համագումարում  
մարմնավորվեց բոլշևիզմը որպես ֆաղաֆական մտփ  
ուղղություն, որպես ինֆնուրույն կուսակցություն։

Դրանով իսկ բանվորական շարժման մեջ առաջին անգամ  
հանդես եկավ իսկական պրոլետարական, մարքսիստական  
հեղափոխական կուսակցություն, որը դեմոկրատիայի, սո-  
ցիալիզմի ու խաղաղության, մարդկային բարօրության հա-  
մար մղվող պայքարի ներշնչողն ու կազմակերպիչն է։

Հանուն պրոլետարիատի կուսակցության մղվող պայքարի  
այդ վճռական շրջանում Վ. Ի. Լենինի զինակիցների թվում  
նշանակալից դեր կատարեց Բ. Մ. Կնունյանցը։

Համագումարից հետո, որպես Բաքվի կոմիտեի պատգա-  
մավոր, նա գրավոր հաշվետվություն ներկայացրեց այդ կո-  
միտեին 2-րդ համագումարի արդյունքների մասին։ Նամակի  
ձևով շարադրված փաստաթղթում նա պարզաբանում էր հա-  
մագումարի քննարկած բոլոր հիմնական խնդիրները և բա-  
ցատրում դրանց լուծման ասպեկտները։ Նա ընդգծում էր, որ  
«Իսկրա»-ին հարեցին պատգամավորներից շատերը, որոնք  
այդ կազմակերպության անդամը չեն եղել, և այդ կերպ էր  
ձևավորվել համագումարի «մեծամասնությունը», որի «հիշա-  
տակումն անգամ մարտովականների մոտ դող է առաջաց-  
նում... Փոքրոգի շատ մարդիկ այդ բացատրում են Լենինի

1 Նույն տեղը, էջ 239։

ազդեցությամբ: Իհարկե, մենք շենք կարող անտարբեր լինել  
այնպիսի մի նշանավոր կուսակցական գործչի, ինչպիսին ընկ-  
լենինն է, հայացքների նկատմամբ: Սակայն, հարցը միայն  
այդ չէ՞<sup>1</sup>: Վ. Ի. Լենինի տեսակետների պաշտպանությունը,  
մասնավորապես կենտրոնական օրգանների ընտրության գոր-  
ծում, նա համարում է սկզբունքային, քանի որ այդ տեսա-  
կետներն ելնում էին կուսակցության ստեղծման, նրա ապա-  
գա մարքսիստական ուղղության և գործունեության շահերից:  
«Մեզ բոլորիս համար պարզ էր,— գրում է այնուհետև Կուն-  
յանցը,— որ միասնական կազմակերպված կուսակցության  
առաջին անգամ քաղաքական ասպարեզ իջնելու դժվարին  
մոմենտին, կուսակցական ղեկավարությունը այնպիսի խա-  
խուտ, օպորտունիստական տարրերի,— ինչպիսին էր, օրի-  
նակ, Եգորովը\*,— ձեռքը հանձնելը... նշանակում էր առաջին  
իսկ քայլերից օրինականացնել տատանումը կուսակցության  
քաղաքականության մեջ»<sup>2</sup>:

Թե ինչքան խորը և հիմնավորապես էր հասկանում դեռևս  
երիտասարդ հեղափոխականը կուսակցության և նրա ղեկա-  
վար օրգանների դերն ու նշանակությունը, կարելի է եզրա-  
կացնել նաև Կունյանցի դեպի կենտրոնական օրգանը և նրա  
խմբագիրներն ունեցած վերաբերմունքից:

Նա գտնում էր, որ Ռուսաստանի պայմաններում ԿՕ-ի խում-  
բագիրները պետք է լինեին հեղինակավոր, ազդեցիկ, տեսա-  
կանորեն և քաղաքականապես պատրաստված և փորձվա՛ծ  
մարդիկ:

1 Б. М. Кнунянц, Избр. произв., էջ 60:

\* «Յուժնի ուբոլչի» խմբի պատգամավոր և համագումարի կազմկոմի-  
տեի անդամ:

2 Նույն տեղը, էջ 61:

«ԿՉ-ի խմբագրութիւնը, — գրում էր նա, — որը ուսական պայմաններում հատկապես կարևոր դեր ունի կատարելու կուսակցական աշխատանքում, մեզանից շատերի կարծիքով, սովորական գրական կուլեգիա չէ, որի անդամներից, գրական տաղանդից բացի, ուրիշ ոչինչ չի պահանջում: ԿՉ-ի խմբագիրը և՛ վարչական աշխատող է, և՛ կազմակերպիչ, և՛ ԿԿ-ի անդամներից ոչ պակաս պետք է աջակցի կուսակցական գաղափարական կենտրոնը դարձնելու ղեկավար մարտական կորիզ: Ահա թե ինչու նրանից փոքր-ինչ ավելին է պահանջվում, քան հասարակ գրողից»<sup>1</sup>:

Համագումարում ամփոփելով հանուն մարքսիստական կուսակցութեան մղած պայքարը, նա խստորեն քննադատում է մարտովականներին, որոնք շմասնակցեցին կենտրոնական օրգանների քվեարկութեանը, «ցանկանալով կուսակցութեան առաջ վարկաբեկել մեր ապագա կենտրոնները»: Բացի դրանից, երբ բունդականները և էկոնոմիստները հեռացան համագումարից, «Մենք, — գրել է Կնունյանցը, — մեծամասնութիւն կազմեցինք և հասկանալի է, որ անցկացրինք այնպիսի կազմ, ինչպիսին համարեցինք ամենալավը»<sup>2</sup>:

\* \* \*

Համագումարից հետո պատգամավորների մեծ մասը վերադարձավ տեղերը, որպեսզի մասսայականացնի համագու-

1 Նույն տեղը, էջ 63: Հնդգծումները Կնունյանցինն են:

2 Նույն տեղը, էջ 65:

մարի որոշումները և կազմակերպի նրանց կենսագործումը: Մակայն նրանցից մի քանիսը, որոնք պետք է օգնեին կենտրոնական մարմինների գործունեությունը սկսելուն, նրանց կապերը ընդլայնելուն և ամրապնդելուն, ուղևորվեցին ժնև՝ Ռուսաստանի հեղափոխական էմիգրացիայի գլխավոր կենտրոնը: Այդ քչերի թվում էր նաև Բոգդան Կնունյանցը:

Ժնևում նա լծվեց ակտիվ կուսակցական աշխատանքի: Գործելով հեղափոխական տրամադրություններով համակլած, մասնավորապես հայ երիտասարդության շրջանում, նա աշխատակցում էր Լենինի ու Պլեխանովի խմբագրությամբ լույս տեսնող բոլշևիկյան «Իսկրա»-ի վերջին՝ 46—51 համարներին:

Վ. Ի. Լենինը 1903 թ. նոյեմբերի 6-ին Պլեխանովին ուղղրված նամակում, խոսելով «Իսկրա»-ի խմբագրությունից իր հեռանալու մասին, գրել է.

«Այդ իսկ պատճառով ես հարկադրված եմ Ձեզ հանձնել ԿՕ-ի խմբագրության բոլոր պաշտոնական գրագրությունները և բոլոր նյութերը, որպիսիք և ուղարկում եմ Ձեզ առանձին կապոցով: Եթե նյութերի վերաբերյալ կպահանջվի որևէ պարզաբանում, ապա ես, իհարկե, հաճույքով կտամ այդպիսին: Որոշ նյութեր տրված են աշխատակիցներին (Լեբեդևին, Շվարցին, Ռուբենին)\*, որոնց հարկավոր է ասել բոլորը Ձեզ հանձնելու մասին»<sup>1</sup>:

«էջեր բոլշևիկյան մամուլից» իր հիշողություններում Մ. էսսենը, որ ժամանակին կուսակցության նշանավոր գործիչներից և Լենինի կողմնակիցներից մեկն էր, Կենտրոնական կոմիտեի գործակալը Ռուսաստանում, այդ մասին գրել է.

\* Գուսև, Վառվակի, Կնունյանց:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 209:

«Նոր խմբագրութեամբ լույս տեսան «Իսկրա»-ի վեց համար (№ № 46—51) Բ. Կնունյանցի և Վորովսկու (Օրլովսկու) աշխատակցութեամբ»<sup>1</sup>։

Հենց այդ շրջանին էին վերաբերում Կնունյանցի այն նշանավոր հոդվածները, որոնք լույս էին տեսել «Իսկրա»-ում «Կավկազեց» ստորագրութեամբ։

Ավելի քան երեք ամիս մնալով արտասահմանում և աշխատելով Վ. Ի. Լենինի ու նրա զինակիցների հետ, Բ. Կնունյանցը ցուցաբերեց իրեն որպես պատրաստված մարքսիստ, հասուն կուսակցական ղեկավար գործիչ։ Նա ակտիվորեն մասնակցում էր կուսակցության հրատարակչական գործունեութեանը, կարևոր ժողովներին, սոցիալ-դեմոկրատական արտասահմանյան լիգայի հոկտեմբերի 13—18-ը կայացած ժողովին, որտեղ, որպես լիգայի պատգամավոր, 2-րդ համագումարի մասին զեկուցումով հանդես եկավ Վ. Ի. Լենինը։ Սակայն ՌՍԴԲԿ արտասահմանի այդ միակ կազմակերպությունը անցավ մենշևիկների կողմը։ Վ. Ի. Լենինը և նրա կողմնակիցները, այդ թվում նաև Բ. Կնունյանցն ու նրա կիներ՝ Ծ. Գոլիկովան, հեռացան հենց նիստերից։ Այնուհետև նրանք մասնակցեցին բոլշևիկների՝ 1903 թ. հոկտեմբերի 24—25 կայացած ժողովին, որտեղ քննարկվում էր կուսակցության մեջ ստեղծված իրավիճակը։ Այդ ժողովում «Պլեխանովը հայտարարեց, թե պետք է զիջումներ անել։ Լինում են պահեր,— ասաց նա,— երբ միապետությունն էլ ստիպված է զիջումներ անել։ «Այդպիսի դեպքում կասեն, թե նա երբևէ չէ»,— խոսք է նետում Լիգա Կնունյանցը։ Պլեխանովը զայրալից նայեց նրան»<sup>1</sup>։

<sup>1</sup> «Заря Востока», март, 1923.

<sup>2</sup> Н. К. Крупская, Воспоминания о Ленине, 1957, стр. 81.

Բացի վերոհիշյալ ընթացիկ աշխատանքներից, Բ. Կնուն-  
յանցը, գտնվելով Վ. Ի. Լենինի ղեկավարութեամբ գործող սո-  
ցիալ-դեմոկրատների շարքերում, կատարել է նաև կոնկրետ  
ու պրակտիկ հանձնարարություններ:

Այսպես, երբ Իսահակ Լալայանցը 1903 թ. հոկտեմբերին  
պետք է մեկնեի Ռուսաստան, նրա համար «անձնագիր ձեռք  
բերեց Բոգդան Կնունյանցը»<sup>1</sup>:

Նա «Իսկրա»-ում կատարում էր հեղինակային ու խմբա-  
գրական աշխատանքներ, ելույթներ էր ունենում ժնևում և  
այլուր, որպես Կենտկոմի գործակալ, մշտական կապեր էր  
պահպանում Ռուսաստանի ու հատկապես Կովկասի կուսակ-  
ցական կազմակերպությունների հետ և լավատեղյակ էր այն-  
տեղ կատարվող իրադարձությունների: Վ. Ի. Լենինը իր մի-  
քանի նամակներում հիշատակում է Բ. Կնունյանցի անունը՝  
կապված ժնևի նրա գործունեության հետ: Այսպես, Կենտկոմի  
անդամներ Կրժիժանովսկուն և Նոսկովին՝ ուղղած 1903 թ.  
հոկտեմբերի 5-ի նամակում Լենինը գրում է Ռուբենի ժնևում  
գտնվելու մասին<sup>2</sup>, իսկ կովկասյան կոմիտեին հասցեագրած  
հոկտեմբերի 20-ի նամակում հաղորդում է. «Թանկագին ըն-  
կերներ: Մենք ձեր գործերի մասին տեղեկություն ստացանք  
թե՛ Ռուբենից անձնապես և թե՛ Ռաշիդ-Բեկից՝ գրավոր»<sup>3</sup>:

Այդ շրջանում մենչևիկների ու Պլեխանովի վարքագիծը,  
նրանց պառակտողական գործունեությունը հանգեցին կու-  
սակցության լուրջ ճգնաժամին: Ստեղծված իրավիճակից

1 Պատմարանասիրական հանդես, 1966 թ. № 4, էջ 12:

2 Տե՛ս В. И. Ленин, ПСС, т. 46, էջ 305:

\* Արշակ Զուրբյան:

Ձ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 198:



միակ ելքը Վ. Ի. Լենինը գտնում էր կուսակցության 3-րդ համագումար հրավիրելու մեջ: Նրա կողմնակիցների մեծ մասը, որոնց մեջ նաև Բ. Կնունյանցը, պաշտպանում էին Լենինի առաջարկը՝ նոր համագումարի մասին: Այս առթիվ Լենինը բազմաթիվ դիմումներ ու նամակներ է գրում տեղական կազմակերպություններին և մարդիկ է ուղարկում տեղերում նոր պլանի հետ ծանոթացնելու նպատակով:

1904 թ. հունվարի 13-ին Լ. Բ. Կրասինին ուղղած նամակում Ն. Կ. Կրուպսկայան գրում էր. «Մերոնցից այժմ Ռուսաստանում են Պոլետաևը, Ռուբենը, Ինսարովը\*, Կովալևսկին: Առաջինից բացի բոլորը մարտականորեն են տրամադրված»<sup>1</sup>:

Այսպիսով, կուսակցական ուրիշ ղեկավար աշխատողների հետ, 1903 թ. դեկտեմբերին, Կնունյանցը վերադարձավ Ռուսաստան:

Որպես Կենտրոնական կոմիտեի գործակալ և 2-րդ համագումարի պատգամավոր, նա հարավային Ռուսաստանի և Անդրկովկասի մի շարք կազմակերպություններում զեկուցեց 2-րդ համագումարի արդյունքների և կուսակցական կազմակերպությունների խնդիրների մասին: Բաքվում նա հատկապես հանդիպեց Կրասինի հետ և նրան շարադրեց Լենինի փաստարկները արտակարգ համագումար հրավիրելու անհրաժեշտության մասին: Կրասինը այդ շրջանում հաշտվողական դիրքորոշում ուներ և նրա հետ չհամաձայնեց: Այդ առթիվ 1904 թ. հունվարի 1(14)-ին Լենինին ուղարկած նամակում նա գրում է. «Ծրեք օր առաջ այստեղ էր Բոգդանը: Նրա

\* Ն. Բաուման, Բ. Կնունյանց, Ի. Լալայանց:

<sup>1</sup> Ленинский сборник, т. 10, стр. 150.

հաղորդած փաստարկները ինձ քիչ են համոզում: Ինձ դարձյալ թվում է, որ համագումարը, եթե նկատի չունենանք զուտ նյութական տեսակետից այն հրավիրելու դժվարությունը, ես կասեի՝ նույնիսկ անհնարինությունը, որոշակիորեն գործին ոչնչով չի օգնի, այլ միայն կիսճճի: Կարծում եմ, որ կոմիտեներին այցելելուց հետո նա (Կնունյանցը—Ղ. Ի.) կզու նույն եզրակացություն<sup>1</sup>:

Սակայն Կնունյանցը, ինչպես և մյուս լենինյանները, այդ եզրակացությունը չեկան: Նրանք տեղերում ուսումնասիրելով իրագրությունը, լիովին համոզվեցին, որ լենինը կուսակցության ճակատագրի համար վճռական նշանակություն ունեցող այդ հարցում միանգամայն իրավացի է, և ակտիվ կերպով սկսեցին համագումարի նախապատրաստական աշխատանքները:

Բազմիցս հանդես գալով ՌՍԴԲԿ 2-րդ համագումարի արդյունքների մասին, Բոգդանը միաժամանակ բացատրում էր լենինի նոր ծրագրերի իրագործման անհրաժեշտությունը, որպես կուսակցական ճգնաժամին վերջ տալու միակ միջոցի: Սակայն գործի հաջողությունը կապված էր նաև մեմշեկիկների վարքագիծը բացահայտելու և կուսակցական կազմակերպություններում նրանց ազդեցությունը թուլացնելու կամ չեզոքացնելու հետ: Այս հարցի նկատմամբ Բաքվի կազմակերպության վերաբերմունքի մասին բավական հստակ գաղափար է տալիս 2-րդ համագումարի 30-ամյակին նվիրված Ադրբեյջանի ԿԿ Կենտկոմին կից Ստ. Շահումյանի անվան կուսակցության պատմության ինստիտուտի պատմական տեղեկանքը՝ «Բաքվի կոմիտեն»,— ասված է այդ տեղեկանքում,— միաձայն

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 152:

և ամբողջութեամբ կանգնեց բոլշևիզմի դիրքերի վրա: Ինքը՝  
Բաքվի կազմակերպութիւնը, ընկ. ընկ. Կնունյանցի և Կրասի-  
նի զեկուցումների հիման վրա քննարկելով համագումարի  
արդյունքները, ճնշող մեծամասնութեամբ արտահայտվեց հո-  
գուտ բոլշևիկյան գծի և մենշևիկ-ազդեցատուր Նոյ Ռամիշվի-  
լուն, որ փորձում էր Բաքվի կազմակերպութիւնը թեքել դեպի  
մենշևիկները, ետ ուղարկեց թիֆլիս»<sup>1</sup>:

1903 թ. վերջին կայացած Կովկասյան կոմիտեի երկրորդ  
համագումարը Իսարի Թոփուրիձեին պառակտիչ վարքագծի  
համար ազատեց ղեկավար բոլոր պոստերից: Բ. Կնունյանցը  
նորից ընտրվեց կոմիտեի անդամ: Որպես այդպիսին նա,  
Բաքվից բացի, աշխույժ գործունեութիւն ծավալեց թիֆլի-  
սում և Կովկասի ուրիշ կենտրոններում:

Ինչպես նշել էր Լ. Բ. Կրասինը 1904 թ. հունվարի 1-ի  
վ. Ի. Լենինին ուղղված նամակում, Բոգդանը դրանից երեք օր  
առաջ, իրեն տեսնելուց հետո մեկնել էր կոմիտեներին այցի:  
Կովկասյան միութեան հին և ալանավոր գործիչներից մեկը՝  
Ն. Ալաջալովան, իր հուշերում գրում է, որ նա հունվարի  
սկզբներին արդեն մասնակցում էր կովկասյան նորընտիր  
կոմիտեի նիստին: «Խորհրդակցութիւնը, — կարդում ենք հու-  
շերում, — կայացավ թիֆլիսում Ա. Զուրաբյանի բնակարա-  
նում, ծննդյան տոնի նախօրյակին: Ներկա էին Մ. Յխակա-  
յան, Բ. Կնունյանցը, Դ. Պոստոլովսկին, Մ. Բոչորիշվիլին և  
ուրիշներ: Պետք է լսվեր զեկուցում կուսակցութեան 2-րդ հա-  
մագումարի մասին...»<sup>2</sup>:

1 «Бакинский рабочий», 30 հուլիսի 1933, № 174:

2 ՄՄԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական ֆիլիալ,  
ֆ. 34, գործ 422(3), 422(4), Թ. 2:

Համագումարի որոշումների կապակցությամբ իրենց խընդիրները քննարկելիս կովկասյան կոմիտեի անդամները ենթարկվում են ոստիկանական խուզարկության և ձերբակալվում են: Բ. Կնունյանցը հայտարարում է, որ ինքը այսինչ բարձրաստիճան չինովնիկի հյուրն է ու եկել է իր ծանոթի տուն մասնակցելու ծննդյան տոնին և ներկայացնում է Արամայիս Երզնկյանցի անունով կեղծ փաստաթղթեր: Նրան հաջողվում է դուրս պրծնել: Սակայն շուտով ոստիկանական վարչությունը գլխի է ընկնում, որ «Երզնկյանց ազգանվան տակ Կովկասում ապրում էր հայտնի սոցիալ-դեմոկրատ գործիչ Բոգդան Կնունյանցը, որ հիշյալ դեպքից հետո Թիֆլիսից թաքուն մեկնել է Մոսկվա»<sup>1</sup>:

Նվ իրոք, Բոգդանը, Թիֆլիսից գնում է Մոսկվա ու 1904 թ. հունվարի 20-ին, ունենալով Օզուրգեթի գավառային վարչությունից տրված համապատասխան անձնագիր, գրանցվում է Մոսկվայում ազնվական Ալեքսեյ Մոխսեևիչ Գոգոբերիձեի անունով:

Մոսկվա հասնելուն պես նրան կոոպտացման են ենթարկում ՌՄԴԲԿ-ի Մոսկվայի կոմիտեում, որի աշխատանքներն այդ ժամանակ ղեկավարում էր 2-րդ համագումարից վերադարձած Ն. է. Բաումանը: Մոսկվայի կազմակերպության մեջ Կնունյանցը ակտիվ գործունեություն ծավալեց: Սակայն նա հնարավորություն չունեցավ երկար աշխատել Մոսկվայում, քանի որ նրան շուտով ձերբակալեցին:

Ռոզենբերգ-էսսենի Բաումանին գրած 1904 թ. փետրվարի 3-ի նամակից տեղեկանում ենք, որ Կենտկոմի կարգադրությամբ Կնունյանցը պետք է մեկնեի Պետերբուրգ, եթե չձեր-

<sup>1</sup> ЦГИА Гruz. ССР, ф. ІС, д. 17, л. 200.

բակալվելու: «Առանց հապաղելու, — ասված է նամակում, — պետք է որեւէ մեկին ուղարկել Պիտեր, այլապես այնտեղ կարող ենք կորցնել մեր դիրքերը: Լավ կլիներ այնտեղ ուղարկել Ռուբենին: Եթե գիտեք, թե նա որտեղ է, ապա նրան գրեցեք, որը անհապաղ գնա այնտեղ և մտնի Կոմիտեի մեջ»<sup>1</sup>:

Բայց Ռուբենը չկարողացավ իրագործել Կենտկոմի հիշյալ հանձնարարությունը, որովհետև նամակը դեռևս հասցեատիրոջը չհասած՝ փետրվարի 15-ին ձերբակալվեց: Այդ օրերին Մոսկվայի կոմիտեն լայն աշխատանք էր ծավալել բանվորների ու երիտասարդության մեջ և պատրաստվում էր փետրվարի 19-ին կազմակերպել քաղաքական բնույթի մասսայական ցույց: Այդ կապակցությամբ տեղի ունեցան խուզարկություններ, և ոստիկանությունը ձերբակալեց մի շարք ղեկավարների, ի թիվս որոնց «ազնվական Ալեքսեյ Մոխսեևիչ Գոգոբերիձեի անվան տակ ապրող Բոգդան Միրզաջանովիչ Կնունյանցին...»<sup>2</sup>:

Նրան հայտնաբերել էին դեռևս փետրվարի 10-ին, և ոստիկանական լրտեսը գրանցել էր, որ նա շահագանց ակտիվ կապեր էր հաստատել հեղափոխական բանվորների, մասնավորապես երկաթուղայինների և երիտասարդության հետ: Փաստը հաստատվել էր նաև խուզարկության ժամանակ հայտնաբերված «Մոսկվայի տարբեր գործարանների երկսեռ բանվորների վերաբերյալ» չորս թերթ վիճակագրական տրվյալներին: Հարցաքննության ժամանակ նա հայտնեց միայն իր անունը և շցանկացավ տալ ցուցմունք ու շտորագրեց ոչ մի փաստաթուղթ: Ձերբակալելուց մեկ շաբաթ հետո, փետրը-

<sup>1</sup> Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվ, № 1249:

<sup>2</sup> ЦГИА, ф. 63, д. 209, л. 39.

վարի 21-ին, նրան տեղափոխեցին Տազանսկի բանտը, որտեղ նա նստեց մեկ տարուց ավելի: Շուտով նրա գործին կցվեց «Ո՞վ է մեղավոր» խորագրով և «ՌՍԴԲԿ Մոսկվայի կոմիտե» ստորագրությամբ հրատարակված կոչը, որի մատիտով գրած սևագիր օրինակը հայտնաբերվել էր Բ. Կնունյանցի թղթերում՝ նրա ձերբակալման ժամանակ:

Կոչում խստորեն քննադատվում էր ցարիզմի քաղաքակա- նությունը ռուս-ճապոնական 1904—1905 թթ. պատերազ- մում, մերկացվում էին նրա պատճառները և սոցիալ-դասա- կարգային նպատակները:

Բոգդանի ձերբակալման մասին Ֆարո Կնունյանցը Պետեր- բուրգից «Ժնև Իլինային» հասցեագրած ապրիլի 9-ի նամակով հայտնում է Բոգդանի կնոջը՝ Լիզային. «Ինչպես երևում է, Մոսկվայում հետապնդել են այն մարդկանց, որոնց հետ նա գնում զալիս էր, խուզարկել են և բռնել՝ պատերազմի մասին մի կուլյտ թոռուցիկների, երկու անձնագրի հետ միասին...

Դրությունը վտանգավոր է, նա ասել է իր ազգանունը և մտադիր չէ այլևս որևէ ցուցմունք տալ... Պաշտոնապես թույլ չեն տալիս նրան ոչ նամակ գրել և ոչ էլ ստանալ: Սակայն անլեզալ ճանապարհով նա ամեն քան իմանում է: Մոսկվա- յում այդ հաջողվում է»<sup>1</sup>: Նամակի վերջում, արտաքին աշ- խարհի հետ կապի մասին հայտնած լուրը, իսկապես, համա- պատասխանում էր իրականությանը:

Բացի Բ. Կնունյանցից, Տազանսկի բանտում էին գտնվում Կենտկոմի հյուսիսային բյուրոյի և Մոսկվայի կոմիտեի այլ ղեկավար գործիչներ՝ Ն. է. Բաումանը, Ե. Դ. Ստասովան, Ֆ. Վ. Լենգնիկը, Ս. Չերնոմորդիկը և ուրիշներ: Բանտարկյալ-

<sup>1</sup> Նույն տեղը, թերթ 56:

ները ապրում էին ակտիվ քաղաքական կյանքով, մշտական կապեր ունեին ընդհատակի հետ և ղեկավարում էին տեղական կուսակցական կազմակերպությունների գործունեությունը: Դրանով էր պայմանավորված այն բարձր տրամադրությունը, պայքարը, շարունակելու ցանկությունը և բոլոր կուսակցական ու քաղաքական անցուդարձերի հանդեպ շափազանց արագ ու անմիջական ռեակցիան, որը բնորոշ էր բանտարկյալ ղեկավար գործիչների համար:

Բանտից ուղարկած և բանտարկյալներին ուղղված ու մեզ հասած նամակները ակներևորեն հաստատում են վերևում բերված միտքը:

Այսպես, կնոջն ուղղած մի նամակում, որը գրված է ձերբակալվելուց մեկ-երկու ամիս հետո, Բոգդանը հայտնում է. «Առայժմ փողի և գրքերի կարիք չունեմ, մեր կյանքի պայմանները բոլորովին էլ վատ չեն: Եղանակը Մոսկվայում հրաշալի է, նույնիսկ բանտախցում զգացվում է գարնան ջերմությունը, որը, իմ կարծիքով, բանտարկյալի համար տարվա ամենաանտանելի եղանակն է»<sup>1</sup>:

Բանտարկյալների նամակագրությունը իրենց հարազատների հետ ցույց է տալիս, որ անձնական կյանքը հեղափոխականներին քիչ է զբաղեցրել: Կենցաղի և առողջության մասին տրված հպանցիկ տեղեկություններով բավարարվելով, նրանք մեծ հետաքրքրությամբ հարցուփորձ էին անում քաղաքական և կուսակցական դեպքերի մասին, պահանջելով շմոռանալ տեղեկացնել մանրամասնությունները: Այսպես, օրինակ, Ելիզավետա Վասիլենայի 1904 թ. ապրիլի 24-ին ժնկից գրած նամակում, հասցեներին և ծանոթներին վերաբերող երկու

<sup>1</sup> ЦГИА Груз. ССР, ф. 7, д. 552, л. л. 60—61.

պարբերութիւնից հետո, կարդում ենք. «Իլլիշն այժմ շատ է գբաղված իր գրքուկով. այս քանի օրս լույս կտեսնի: Ես կարծում եմ, որ այդ գրքուկը նրանց (այսինքն՝ մենշևիկներին— 2. Ի.) բռնորովին կգովապնի: Նրանք այժմ կենտկոմին անգործունակութեան, և ոչ սոցիալ-դեմոկրատականութեան մեջ մեղադրելու տակտիկայից անցել են նեղանալու տակտիկային. դանգատվում են, որ իրենց թույլ չեն տալիս մեծերի (այսինքն՝ մեծամասնականների-բոլշևիկների) հետ համատեղ աշխատելու, և այդպե՛ս է գրում Մար(տովը), որը հ(ամագումարի) հետևյալ օրը հրաժարվեց ինն(ինի) հետ աշխատելուց»<sup>1</sup>:

Անշուշտ, խոսքն այստեղ վերաբերում է իննինի «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» աշխատութեանը, որը գրվում էր փետրվար-մայիս ամիսներին և լույս տեսավ 1904 թ. մայիսին: Մյուս նամակներում նա տեղեկացնում է մենշևիկների դեմ տարվող պայքարի, երրորդ համագումարի օգտին ծավալած աշխատանքների և այլ հարցերի մասին: Մասնավորապես նա նշում է կուսակցութեան պառակտման դրական ազդեցութիւնը հվրոպական սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների վրա: 1904 թ. օգոստոսի 10-ի նամակում Ե. Գոլիկովան հաղորդում է, որ ժնկում հավաքվել են մեծ թվով կուսակցական գործիչներ: Ինչպես հայտնի է, շուտով այնտեղ իննինի ղեկավարութեամբ տեղի ունեցավ 22 բոլշևիկների խորհրդակցութիւնը, որն ընդունեց կոչ «կուսակցութեանը»՝ 3-րդ համագումար հրավիրելու անհրաժեշտութեան մասին: Որպես

<sup>1</sup> ЦГИА, ф. 63, д. 209, л. 56.



խորհրդակցութեան մասնակից<sup>1</sup>, կիզա Կնունյանցը գրում է Կենտկոմի անդամների հաշտվողական գծի մասին և հուլիս հայտնում, որ նրանք կմեկուսացվեն, և «այն ժամանակ անպայման կկազմվի մեր Կենտկոմը»<sup>2</sup>:

Կնունյանցի պատասխան նամակներում զգացվում է մենշևիկների և Պլեխանովի դեմ պայքարը շարունակելու վճռականութուն՝ հանուն լենինյան ուղղութեան հաղթանակի:

1904 թվականի օգոստոսի 8-ի առաջին նամակում (այդ օրը նա գրել է երկու նամակ և տարբեր հասցեներով ուղարկել ժնև), նա բարձր տրամադրութեամբ գրում է.

«Իմ ողջույնը լավ ընկերներին: Հուլիս ունեմ, որ նրանցից ոչ ոք վետերանի (Պլեխանովի— Հ. Ի.) պասկվիլների համար քիթը չի կախել: Հաղորդիր նրանց, որ ես մարտի եմ ձգտում, միայն թե հանգամանքները թույլ տային»<sup>3</sup>:

Երկրորդ նամակը, առաջինից ոչ պակաս, ցույց է տալիս Կնունյանցի աննկուն կամքը՝ պայքարելու կուսակցութեան և պրոլետարիատի գործի համար:

«Իու մի կարծիր, թե ես անտարբեր եմ. քնավ ոչ. իմ մեջ հոռում է կյանքը, և ես աշխատանք եմ տենչում և բոլորովին էլ զինքս ցած չեմ դնում, բայց առայժմ պետք է սպասել»<sup>4</sup>:

1904 թ. օգոստոսի 24-ի նամակում Բոգդանը գրում է.

«Քո հաղորդած տեղեկությունները հուզում են առաջ բերել մեր մրջնաբնում... Սո միայն շատ գոհ եմ, որ վերջապես հաշտվողականների երեսի դիմակը պոկված է, և այժմ մեր

<sup>1</sup> Տե՛ս Ս. Ա. Фотиева, Воспоминания о Ленине, «Вопросы истории», 1956, № 4, էջ 8:

<sup>2</sup> ЦГИА, ф. 63, д. 209, л. 61.

<sup>3</sup> Նույն տեղը, թերթ 59:

<sup>4</sup> Նույն տեղը, թերթ 66:

ձեռքերը ամեն տեսակի պաշտոնականությամբ կապված շեն լինի: Աջ ու ձախ հարվածեցեք նրանց, վճռական ոչ մի գործողության, ընդհուպ մինչև հեղաշրջման առաջ կանգ մի առեք, ես կարծում եմ, որ վաղուց արդեն ժամանակն է վերջ տալու արտասահմանյան «կոյուղու» և խորամանկող, կամազուրկ դիվանագետների իշխանությանը: Սատանան տանի, ձեռներս ինչպես քոր են գալիս»<sup>1</sup>:

Որքան դիպուկ, սուր և ուժեղ է նա խարազանում քաղաքական իր հակառակորդներին, որքան մեծ է դրանց դեմ մարտնչելու նրա եռանդը:

1905 թ. մարտին Գոլիկովայի գրած մյուս երկու նամակը վերաբերում են կուսակցության 3-րդ համագումարի նախապատրաստմանը և ցարիզմի պարտությանը՝ ռուս-ճապոնական պատերազմում:

Մարտի 1-ին Բեռլինից գրած նամակում Գոլիկովան զարմանք է արտահայտում, որ «Բեռլինից ցայտունգը» և մյուս թերթերը գրում են կուսակցության առաջիկա 3-րդ համագումարի մասին և բառացի հայտնում են օրակարգը, որ մշակված է «մեր Բյուրոյի կողմից և ուղարկված է կոմիտեներին... Դու, հավանաբար, արդեն տեսել ես Բյուրոյի հիշյալ օրակարգը, որտեղ գլխավորապես խոսվում է ապստամբության նախապատրաստման և նրա իրականացման միջոցների մասին»: Գոլիկովան այնուհետև գրում է, որ «Մեկ շաբաթից հետո կգնամ Իլլիչի մոտ... Գրի՛ ինչ է կատարվում ձեզ մոտ: Չէ՞ որ դու ավելի շուտ կիմանաս, թե ինչ է կատարվում Բյուրոյում, քան ես»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղը, թերթ 67:

<sup>2</sup> ЦГИА, ф. ДП. О. О., д. 141, 1904, л. 96.

Մարտի 3-ին նա արդեն հաղորդում է, որ մեկնում է Ժնև, որ Բեռլինում տեսել է Ստեփանին (հավանորեն՝ Շահումյանին), Քննադատում է մենշևիկյան «Իսկրա»-ին և հայտնում է, որ թերթի 89-րդ համարում տպագրված է կուսակցության խորհրդի՝ 3-րդ համագումարի հրավիրման դեմ ուղղված որոշումը: Որոշումը տեղական կազմակերպություններից պահանջում էր չմասնակցել համագումարի աշխատանքներին: Նա բավական մանրամասն տեղեկություններ է տալիս մենշևիկների ծավալած պայքարի մասին, որը համարում է միանշանակն ապարդյուն: Հանրահայտ է, որ շնայած այդ ամենին, 22 բոլշևիկների կոչը մեծ արձագանք գտավ տեղական կազմակերպություններում: Բանտում գտնվող հեղափոխականները, իմանալով կոչի մասին, սեպտեմբերի 4-ին արդեն դիմեցին Վ. Ի. Լենինին և նրա համախոհներին: «Քանկագին ընկերներ, — գրում էին նրանք, — ամեն կողմից տնտղելով, այստեղ մենք վճռեցինք շարունակել մեր պայքարը փափկամորթների և մենշևիկների դեմ: Կմասնակցեն կոլը, Ռուբենը, Պոլետակը, Սոլումոն Չերնոմորդիկը (իսկական անունը), Աբսոլյուտը»\*: Մեղադրելով մենշևիկներին, նրանց բռնած դիրքի համար, նամակի հեղինակները համոզմունք են հայտնում, որ «այժմ Ռուսաստանում կսկսվի իսկական ապոտամբություն մեր կենտրոնական կեղծ հիմնարկների դեմ: Պետք է միայն բարձրացնել ապստամբության դրոշը: Եվ մենք ուզում ենք այդ անել, այլևս համբերելու հնար չկա»:

Նրանց որոշակի կարծիքն այն էր, որ բոլոր ռեյզ թե շատ գիտակից տարրերը... խանդավառությամբ կմիանան մեզ, երբ մենք կմերկացնենք արտասահմանյան այդ կոյուղու քա-

\* Վ. Յ. Լենգեիկ, Բ. Մ. Կուսեյանց, Ն. Է. Բաուման, Ե. Գ. Ստասովա:

շաքականութիւնը, որն արդեն վարակել է շրջապատի մթնոլորտը իր նեխած խմբակայնութեամբ և ստոր ձգտումով՝ տնավարի ձեռով հարթել լուրջ կուսակցական կոնֆլիկտը: Այնուհետև նրանք գրում էին, որ շուտով հատուկ կոչով դիմելու են տեղական կոմիտեներին՝ մերկացնելով կենտրոնական մարմինների «ստոր դավաճանութիւնը», տալով հաշտվողականների «փալասութեան բնութագիրը»<sup>1</sup>: Մոսկվայի բոլշևիկների այդ կրքոտ նամակը քաղաքական ու բարոյական խոշոր օգնութիւն էր Վ. Ի. Լենինին՝ բոլշևիկյան կուսակցութեան համախմբման համար նրա մղած պայքարի ամենածանր շրջաններից մեկում:

Լենինը նրանց ջերմորեն պատասխանեց և հավանութիւն տվեց նրանց գործունեութեան ծրագրին:

«Թանկագին բարեկամներ,— գրում էր Իւլիշը 1904 թ. սեպտեմբերի 23-ի պատասխան-նամակում: Մեզ անսահմանորեն ուրախացրեց ձեր նամակը, նրանից այնպիսի առույգութեան շունչ է փչում, որ և մեզ բոլորիս եռանդ ներշնչեց. Ձեր ծրագիրը իրականացրեք անպայման: Այն հիանալի է և հսկայական նշանակութիւն կունենա»<sup>2</sup>:

Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան 1904 թ. հոկտեմբերի 14-ի նամակում կրկին գրում են. «Ամբողջ հոգով միանում ենք Ձեր ծրագրին»<sup>3</sup>:

Ե. Ստասովայի, Ֆ. Լենգիկի, Ն. Բաումանի, Բ. Կոնոնյանցի ղեկավարութեամբ կազմվում է կոչի տեքստը, որի տակ ստորագրում են 19 սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներ: Կոչը հրա-

1 Ленинский сборник, т. XV, стр. 159—160.

2 Նույն տեղը, էջ 215:

3 Նույն տեղը, էջ 223:

պարակում է Մոսկվայի կոմիտեն 1904 թ. հոկտեմբերի վերջին՝ «Կոչ ՌՍԴԲԿ-ի անդամներին» խորագրով: Այդ վավերագիրը պերճախոս վկայում է, որ հակառակ մենշևիկների զորպարտություններին և հաշտվողականների դավաճանական դիրքին, վ. Ի. Լենինը համագումարի համար իր մղած պայքարում ուժեղ պաշտպանութուն էր գտնում տեղական կազմակերպութունների կողմից:

«Կոչը» հետաքրքրական է կուսակցության մեջ ստեղծված դրության ճիշտ վերլուծության և այդ դրությունից դուրս գալու ուղիղ ճանապարհ նշելու տեսակետից:

«Կոչ»-ի հենց սկզբում Լենինի կողմնակիցները հայտարարում են իրենց համերաշխությունը նրա հետ, կուսակցության համար մղված պայքարում նրա ստրատեգիական գծի հետ:

«Մենք՝ ՌՍԴԲԿ-ի «19» անդամներս, — ասված է այդ փաստաթղթում, — գոհունակությամբ օգտվում ենք մեր կուսակցության 22 անդամի հրապարակած կոչից..., որը հրավիրում է արտահայտվել ներկայումս կուսակցությանը հուզող հարցերի շուրջը: Կանգնած լինելով այն տեսակետի վրա, որ գտնվում են այդ ընկերները և անպայման համաձայնվելով անհապաղ երոճող համագումար հրավիրելու նրանց պահանջի հետ, մենք վճռեցինք ձևակերպել մեր սեփական վերաբերմունքը կուսակցության մեջ գոյութուն ունեցող այժմյան իրավիճակի նկատմամբ»<sup>1</sup>:

Կոչի հեղինակները գտնում էին, որ այդ իրավիճակը սպառնում է կուսակցությանը դեռևս նրա գոյության առաջին տարում, նրա ոչ միայն փաստական, այլև ձևական միասնությանը: Այնուհետև նրանք ջախջախիչ քննադատության էին

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 162—163:

Կենթարկում մենշևիկների գործունեությունը, Պլեխանովի վարքագիծը և հաշտվողական-մեծամասնականների բռնած դիրքը երկրորդ համագումարից հետո: «Կոչ»-ի հեղինակները նոր «Իսկրա»-ի հարձակումներից պաշտպանելով Լենինին և նրա երկերը, նշում էին, որ ուշացած այդ հարձակումները դրանց հեղինակներին դարձնում են ծիծաղելի, քանի որ Լենինի աշխատությունները, և մասնավորապես նրա «Ի՞նչ անել» երկը արդեն կատարել է իր արտակարգ դերը. այն բանից հետո, երբ մոտ երեք տարվա ընթացքում նրանով է դաստիարակվել ռուս ամբողջ սոցիալ դեմոկրատիան...»<sup>1</sup>:

Կուսակցական այդ փաստաթուղթը մատնանշում է ճշգնաժամը վերացնելու ուղիները՝ Վ. Ի. Լենինի ցուցումներին համապատասխան:

«Տեղական բոլոր կոմիտեները, — ասված է «Կոչ»-ի մեջ, — սոցիալ-դեմոկրատիայի բոլոր առանձին խմբերը պետք է վճռականորեն դեմ արտահայտվեն կուսակցության մեջ զանազան «խմբակների» իշխանությունը և պահանջեն Յ-րդ համագումարի անհապաղ հրավիրումը, ոչ միայն պահանջեն, այլև՝ անձամբ ձեռնարկեն համագումարի նախապատրաստմանը և կազմակերպմանը... Յ-րդ համագումարի շուտափույթ հրավիրումը այժմ պետք է դառնա «մեծամասնության» և կուսակցությանը հարգող բոլոր ընկերների նշանաբանը<sup>2</sup>:

Տեղական բոլշևիկյան կոմիտեների՝ հարավային, կովկասյան և հյուսիսային, կոնֆերանսների որոշումների հետ միասին բերված փաստաթուղթը վկայում է այն մասին, որ համագումարի հրավիրման հարցում Վ. Ի. Լենինը լիակատար

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 163:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 167:

պաշտպանութիւնն էր գտնում տեղական կազմակերպութիւններում: 1904 թ. վերջերին գրած իր հոդվածներում և նամակներում Լենինը շատ բարձր է գնահատել «19-ի կոչը», դնելով այն 22 բուլճերիկների ժնեյան խորհրդակցութեան փաստաթղթի կողքին<sup>1</sup>:

Տազանկայի բանտարկյալների մյուս խնդիրը ցարիզմի դեմ շարունակվող պայքարն էր, որի համար օգտագործվում էր ամեն առիթ՝ ցարիզմի պարտութիւնը ուսու-ճապոնական պատերազմում, գործադուլները և նրանց դեմ կիրառվող պատժիչ միջոցները, դատավարութիւնները, բանտում տիրող կարգերը և այլն:

Այսպես, 1904 թ. նոյեմբերի սկզբին, քրեական նոր օրենսգրքի կիրառման կապակցութեամբ, նրանք Մոսկվայի դատարանական պալատի դատախազից դիմումով պահանջեցին մինչև 1905 թ. փետրվարի 1-ը լսել իրենց գործերը: Դրական պատասխան չստանալու դեպքում նրանք սպառնում էին հացադուլով: Մերժում ստանալուց հետո նոյեմբերի 10-ին ութ կալանավորներ հացադուլ հայտարարեցին: Նույն ամսի 14-ին նրանցից չորսին գրավով ազատեցին: Բայց մնացած հացադուլ անողներին միացան ևս 15 մարդ, դրանց մեջ նաև դեկավար գործիչներ: Այդ առթիվ Մոսկվայի կոմիտեն հրապարակեց «հացադուլը բանտում» թռուցիկը որպես առաջիկա բողոքի ցույցի նախապատրաստական քայլ: Ցարական կառավարութիւնը տեղի տվեց: 1904 թ. դեկտեմբերից մինչև հաջորդ տարվա մարտը մեկը մյուսի հետևից ազատվում էին քաղաքական բանտարկյալները: Միաժամանակ սկսվում էր քաղաքական պրոցեսների մի շարք, քանի որ նոր օրենսգիրքը

<sup>1</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկերի լրակատար ժողովածու, հ. 9, էջ 78 և 123:

պահանջում էր «քաղաքական հանցագործությունները ենթարկել դատական քննության՝ արտադատական կարգով վարչական պատիժ կիրառելու փոխարեն»։ Այս կապակցությամբ բանտում լուրջ վեճ էր ծագել, թե ինչպես պետք է հեղափոխականը իրեն պահի ցարական դատարանում։ Ե. Ստասովան հարցում է անում Վ. Ի. Լենինին։ Վ. Ի. Լենինը 1905 թ. հունվարի 19-ին գրում է մի ծրագրային «նամակ Ե. Դ. Ստասովային ու Մոսկվայի բանտի ընկերներին», որտեղ խորհուրդ է տալիս դատարանի տրիբունը օգտագործել կուսակցության տեսակետները պրոպագանդելու և ցարական կարգերը, նրա հիմնարկներն ու օրենքները քննադատելու նպատակով։

Դատական պրոցեսում մեղադրյալների վարքագծի մասին Լենինը գրում էր, որ ամենալավը այն կլինի, որ անմիջապես, մինչև դատաքննությունը, նախագահի առաջին իսկ հարցին մեղադրյալը հայտնի իր սոցիալ-դեմոկրատ լինելը և իր ճառում շարադրի սոցիալ-դեմոկրատների գաղափարախոսությունն էությունը։

Լենինը հատուկ նշանակություն էր տալիս մեղադրյալի սկզբունքային ճառին, որը առաջարկում էր նախապատրաստել և նշում էր այդ ճառի հիմնական կետերը. սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքների, ծրագրի և տակտիկայի մասին, բանվորական շարժման, սոցիալիզմի նպատակների, ապրստամբության մասին։ Իսկ մնացածը կախված կլինի «կոնկրետ հանգամանքներից և հեղափոխականի ձեռներեցությունից»։

Իլյիչի նամակն ավարտվում էր հետևյալ ջերմ և ոգեշնչող բառերով.

«Մեծ, մեծ ողջույն կուրցին, Ռուբենին, Բաումանին և բոլոր բարեկամներին։ Մի վհատվեք։ Այժմ մեր գործերը լավ



նն գնում: Սկանդալիստներից մենք վերջապես ազատվեցինք: Նահանջի տակտիկայի հետ կապը խզեցինք: Այժմ մենք հարձակվում ենք... Մեր լրագրի գործը կենտրոնացված է: Ունենք մեր գործնական կենտրոնը (բյուրոն)... Ցանկանում եմ առողջութուն և առույգութուն: Մենք դեռ կտեսնվենք հավանորեն, ու կկռվենք ավելի լավ պայմաններում...»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինի ցուցումներն ունեցան անմիջական, պրակտիկ նշանակություն հեղափոխության գործիչների դեմ հարուցած դատական բազմաթիվ պրոցեսների ընթացքում:

Դրանցից մեկը Բոգդան Կնունյանցի դատավարությունն էր, որ կայացավ 1905 թ. մարտի 30—31-ը, դռնփակ:

Մոտ 14 ամսվա բանտարկությունից հետո նա կանգնեց ցարական դատարանի առաջ: Բարեկամներից ներկա էր միայն նրա քույրը՝ Յարո Կնունյանցը:

Դատավարությունն սկսելիս Բոգդանը մնաց նստած և նախագահի հարցումներին պատասխանեց, որ նա չի հաղորդում ցարական դատարանը և նրա օրենքները և այդ պատճառով չի ենթարկվում դրանց: Նախագահի՝ դատարանից իրեն դուրս հանելու սպառնալիքին նա հանգիստ պատասխանում է, որ ինքը իր կամքով չի եկել, այլ բռնությամբ և կարող է հեռանալ առանց վարանելու: Նախագահը նրան դիտողություն է անում, որ եթե օրենքը չի հարգում, գոնե քաղաքավարությունից դրդված դատավորի հետ խոսելիս կանգնի: Կնունյանցը պատասխանում է, որ կարող է կանգնել միայն հարգելով դատարանի նախագահի տարիքը:

Դատը դռնփակ վարելու մասին արդարադատության միևնիստրի վճիռը կարդալուց հետո Կնունյանցը հայտարարեց.

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, էջ 208—209:

որ այն պայմաններում, երբ բացակայում է հասարակական, կարծիքի հսկողությունը՝ հեղափոխականների և կառավարության վեճի միակ դատավորը, ինքը չի մասնակցի դատաքննությունը և հարցերին չի պատասխանի: Նա իրեն վերապահում է վերջին խոսքի իրավունքը, որովհետև իր հեղափոխական պարտքն է համարում օգտագործել յուրաքանչյուր առիթ՝ սոցիալ-դեմոկրատական գաղափարների ազդեցության համար: Դատախազի և դատապաշտպանների ելույթներից հետո խոսք է վերցնում Բոգդան Կնունյանցը: Հեղափոխական կրթով լի ճառում նա մերկացնում է միապետությունը և նրա օրգանները, քննադատում ցարական կարգերը, նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը: Նա համոզիչ կերպով հիմնավորում է սոցիալ-դեմոկրատների ծրագիրն ու տակտիկան՝ ժողովրդական մասսաների և մասնավորապես բանվոր դասակարգի իրավացի պայքարը տիրապետող կարգերի դեմ գլխավորելու գործում, խոսում է կուսակցական ծրագրի հիմնական դրույթների և սոցիալիզմի կառուցման անխուսափելիության, այդ հասարակարգը բնութագրող հիմնական գծերի մասին:

Իր փայլուն ելույթը, որ ըստ էության մեղադրական ճառ էր, Կնունյանցն ավարտում է պրոլետարիատի գործի համար մղվող պայքարի աննկուն մարտիկի լավատեսությունն արտահայտող հետևյալ խոսքերով. «Դուք ուզում եք դատել մի հեղափոխականի այնպիսի ժամանակ, երբ դրսում հեղափոխություն է. դուք ուզում եք պաշտպանել այն իրավակարգը, որին պատմությունը մահվան է դատապարտել:

Դատեցեք, պարոնայք դատավորներ, իսկ մեզ ձեզ հետ  
կդատի հեղափոխութիւնը»<sup>1</sup>։

Դատարանի փակ դռների ետևում արտասանած այս պատ-  
մական ճառը Վ. Ի. Լենինի և բոլշևիկների կուսակցութեան  
ցանկութեամբ դուրս եկավ չորս պատերից և հնչեց ամբողջ  
երկրով մեկ։ Լենինի ցուցումով նախ այն տպագրվեց «Դատ  
դատի դեմ» խորագրով որպես առանձնատիպ, բոլշևիկյան  
«Վսլերիոզ» օրաթերթի № 16-ում և տարածվեց բոլոր կուսակ-  
ցական կազմակերպութիւններում։ Ապա Բաքվի կոմիտեն  
առանձին գրքուկով հրատարակեց ռուսերեն, հայերեն և վրա-  
ցերեն, ուղարկեց այն Ռուսաստանի և արտասահմանի կու-  
սակցական կոմիտեներին և կազմակերպութիւններին։

Անվիճելի է Կնունյանցի ճառի ազդեցիկուն մեծ նշանակու-  
թիւնը ցարիզմի դեմ պրոլետարական հեղափոխութեան հաղ-  
թանակի համար մղված պայքարում։

Մեղադրական եզրակացութեան համաձայն և ըստ քրեա-  
կան օրենսգրքի համապատասխան հոդվածների, Բ. Կնուն-  
յանցը ՌՍԴԲ կուսակցութեան Մոսկվայի կոմիտեում և այլուր  
ծավալած հեղափոխական գործունեութեան համար պետք է  
դատապարտվեր մինչև 8 տարվա տաժանակիր աշխատանքի  
կամ ցմահ աքսորի։ Բայց դատարանը կայացրեց այլ դատա-  
վճիռ՝ չորս ամսվա բանտարկութիւն։

Կնունյանցը դատից հետո մեկ շաբաթ էլ չմնաց բանտում։  
Չնայած նյութական մեծ կարիքին, նրա կուսակցական ըն-  
կերները վճարեցին անհրաժեշտ գումարը և նրան դուրս կոր-  
զեցին ցարական իշխանութեան ճանկերից։ Բոնչ-Բրուկելի  
1905 թ. ապրիլի 5-ին Մոսկվայից ուղարկած երկտողում գրը-

<sup>1</sup> Б. М. Кнунянц, Избр. произв., стр. 84.

ված է. «Այսօր 300 ուրբի գրավով բանտից ազատվեց Բոգդան Կնունյանցը»<sup>1</sup>:

Ե. Վ. Գոլիկովան նույն ամսի 11-ին գրած նամակում խորհուրդ է տալիս ամուսնուն անմիջապես ուղևորվել արտասահման, համարելով «դա հնարավոր, քանի որ դու մանդատ կարող ես ստանալ»<sup>2</sup>:

Մեզ հայտնի չէ, թե Կնունյանցը մանդատ ստացավ կուսակցության 3-րդ համագումարի համար, որը տեղի ունեցավ Լոնդոնում 1905 թ. ապրիլի 12(25)—27-ը (մայիսի 10): Սակայն նա 3-րդ համագումարին չի մասնակցել:

1905 թ. ապրիլի 22-ին անցնելով սահմանը, նա Գերմանիայի վրայով նույն ամսի վերջին հասավ Ժնև: Այս անգամ նա երկար շմնաց արտասահմանում: Վ. Ի. Լենինի ու համագումարի պատգամավորների հետ հանդիպելուց, համապատասխան ցուցումներ ստանալուց հետո նա կնոջ հետ վերադառնում է Ռուսաստան, որտեղ հեղափոխական շարժումը բուռն վերելք էր ապրում:

Այս պայմաններում, աշխատանքների համապատասխան բաժանում կատարելու նպատակով, դեռևս համագումարի նիստերին, Վ. Ի. Լենինը հատուկ նշումներ էր արել: Այսպես, ազիտատորների ցուցակում նա մտցրել էր հետևյալ ընկերներին.

«1. Ռուբեն (Կնունյանց)»,

2. Լյադով,

3. Բելսկի (Կրասիկով)»<sup>3</sup>:

<sup>1</sup> Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվ, № 37323:

<sup>2</sup> ЦГИА, ф. 63, д. 209, л. 77.

<sup>3</sup> Ленинский сборник, т. V, стр. 235.

Կուսակցական ղեկավար աշխատողների միջև ֆունկցիաների բաշխման փաստը հաստատվում է նաև Լենինի Կենտկոմի Ռուսական Բյուրոյի քարտուղար Ե. Դ. Ստասովային ուղղած 1905 թվականի հունիսի 16-ի (29-ի) նամակով, որտեղ նշվում էր, որ ուղարկվում են Կենտկոմի որոշումները՝ Կենտկոմի կազմը նոր անդամներով և թեկնածուներով համալրելու մասին: Նամակում այնուհետև ասված էր.

«3) Առաջիկա քաղաքական կամպանիայի պլանը կատարելու համար որպես Կ(ենտրոնական) Կ(ոմիտեի) գործակալներ նշանակեցինք ը(նկերներ) 1) Իգորին (Բ. Ի. Գորև), 2) Ռուբենին (Բ. Մ. Կնունյանց), 3) Լյադովին...:

4) Հանձնարարել բյուրոյին՝ ընդունված որոշման մասին տեղյակ պահել այդ ընկերներին և որքան հնարավոր է շտապ կազմակերպել նրանց մեկնումը»<sup>1</sup>:

Որպես Կենտկոմի գործակալ, քիչ ուշ նաև Կենտկոմի անդամ<sup>2</sup>, Բ. Կնունյանցը Ռուսաստան վերադառնալուց հետո եղել էր հարավի խոշորագույն կենտրոններում, օգնել տեղական կազմակերպություններին՝ կենսագործելու համագումարի որոշումները: Սկզբում նա մեկնում է Պիտեր, իսկ օգոստոսին գալիս է Կովկաս: Նրա գործունեությունը չի վրիպում տեղական ոստիկանության աչքից: Օգոստոսի 25-ով թվագրված մի փաստաթղթում նշվում էր, որ նա «այժմ այստեղ ակտիվ կերպով մասնակցում է «մեծամասնության» տեղա-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 471:

<sup>2</sup> См. Е. Д. Стасова, Страницы жизни и борьбы, М., 1957, էջ 52:

կան (այսինքն՝ Թիֆլիսի— Հ. Ի.) կոմիտեի աշխատանքներին»<sup>1</sup>:

Հետապնդումներից խուսափելու և Կենտկոմի հանձնարարությունները կատարելու համար Բ. Կնունյանցը սեպտեմբերին վերադառնում է Պետերբուրգ: Այստեղ նա մտնում է Պետերբուրգի Բոլշևիկյան կոմիտեի մեջ և ղեկավարում է Կենտկոմի ագիտատորների կոլեգիան:

\* \* \*

Հեղափոխության վերելքի պայմաններում կուսակցության Կենտրոնական կոմիտեն Պիտերում ստեղծում է իր գործադիր բյուրոն: Մ. Լիտվինովի՝ Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային ուղղած սեպտեմբերի 20-ի նամակից տեղեկանում ենք բյուրոյի անդամների կազմի և աշխատանքի նախատեսվող բաժանման մասին. Կենտկոմի «գործակալներից՝ պրոպագանդիստը (Ինսարով-Լալայանցը), ագիտատորը (Ռուբենը), կազմակերպիչը (Բուր-էսսենը) և քարտուղարը (հավանորեն ևս)...»<sup>2</sup>:

Հոկտեմբերի 3-ին էսսենը արդեն ղեկուցում է Վ. Ի. Լենինին. «Կազմակերպված է ագիտացիոն խումբ 10—12 հոգուց: Յուրաքանչյուր ագիտատորի հանձնարարված է որոշակի շրջան, որտեղ նա պետք է նպաստի.

1. Կոմիտեները մարտական ագիտացիոն ոգով վերակազմելուն:

2. Ամենալայն ագիտացիայի ուժեղացմանը՝ քաղաքում և գյուղում,

<sup>1</sup> ЦГИА, Грүз. ССР, ф. 4С, д. 38, л. 111.

<sup>2</sup> Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվ, № 1002:

3. Այդ նպատակով, բանվորներից ագիտատորների «թըռ-  
շող» ջոկատներ կազմելուն...

Այդ խումբը գլխավորում է Ռուբենը.

Նա արդեն մեկնել է և սկսել է իրականացնել կամպանիայի  
պլանը<sup>1</sup>:

Այս նամակները ցույց են տալիս, որ ԿԿ-ի և Պետերբուրգի  
կոմիտեի անդամները լուրջ աշխատանք էին ծավալել ամբողջ  
երկրով մեկ ցարիզմի դեմ մասսաների գրոհը կազմակերպե-  
լու ուղղութեամբ:

Գլխավորելով ագիտացիոն խմբի աշխատանքը, Բ. Կնուն-  
յանցը այդ ամիսներին շրջում էր Ռուսաստանում, կազմա-  
կերպում ագիտացիոն աշխատանքը և վերադառնում Պետեր-  
բուրգ: Մայրաքաղաքում ծավալած նրա հեղափոխական գոր-  
ծունեութեան շրջանը ամենացայտուն և բովանդակութեամբ  
հարուստ շրջանն է: Այն ընդգրկում է 1905 թ. աշունը և ձմե-  
ռան սկիզբը: Այդ ժամանակաշրջանում Բ. Կնունյանցը գտնը-  
վում էր հեղափոխական թոհ ու բոհի կենտրոնում և կատա-  
րում էր Լենինի և Կենտկոմի կարևորագույն հանձնարարու-  
թյունները: Նա ողջ խորութեամբ էր հասկանում թե՛ ղեկավար  
օրգանների կատարած դերն ու նշանակութունը և թե՛ հե-  
ղափոխութեան վերելքի հետ կապված խնդիրների կենսական  
անհրաժեշտութունը: Լինելով մայրաքաղաքի բանվորական  
շարժման ղեկավարներից մեկը, նա շատ լավ պատկերացում  
էր նաև, թե ինչպիսի կարևոր դեր է վիճակված խաղալու Պե-  
տերբուրգի պրոլետարիատին ժողովրդական հեղափոխութեան  
մեջ:

«Եթե Ռուսաստանի պրոլետարիատը, — գրել է նա, — ամ-

<sup>1</sup> Նույն տեղը, № 20021:

բողջ ազգաբնակչության նկատմամբ հանդիսանում է հեղափոխության առաջնորդը, ապա Պետերբուրգի բանվորները, շնորհիվ իրենց բացառիկ դրուսթյան, նույնիսկ անկախ իրենց կազմակերպական կապերի աստիճանից, հանդիսանում են երկրի բանվոր դասակարգի ղեկավարները՝ արսուլյուտիզմի դեմ նրա մղած պայքարում»<sup>1</sup>։

Պետերբուրգի պրոլետարիատը 1905 թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին հանդիսացավ Ռուսաստանի հեղափոխական շարժման ղեկավարն ու կենտրոնական ուժերից մեկը։ Դա պայմանավորված էր ոչ միայն Պետերբուրգի մայրաքաղաք լինելու հանգամանքով, այլև նրա բանվոր դասակարգի շարժման խորությամբ ու թափով, համապատասխան հիմնարկների և հատկապես կառավարության գործունեության վրա նրա ազդեցությամբ։ Գտնվելով կուսակցական ղեկավար օրգանների և Վ. Ի. Լենինի ուշադրության կենտրոնում՝ Պիտերը դարձել էր նաև քաղաքական և մասսայական աշխատանքների կազմակերպման լավագույն օջախը երկրում։

Մայրաքաղաքի յուրաքանչյուր շրջանում գոյություն ունեին ագիտատորների խմբակներ։ Ձեռնարկություններում կային առանձին ագիտատորներ։ Վերջիններիս ամբողջ աշխատանքը ղեկավարում էին շրջանային կոմիտեները և Պետերբուրգի կոմիտեն, որի անդամներից յուրաքանչյուրը կցված էր որևէ շրջանի։

Բորիս Պերեսը պատմում է, որ այդ շրջանում ագիտատորների կոլեգիան յուրաքանչյուր օր հավաքվում էր Պետերբուր-

<sup>1</sup> Б. М. Кнунянц, Избр. произв., стр. 173.



զի կոմիտեի որոշումները քննարկելու, թեմաները, ագիտացիայի տեղերն ու կոլեկտիվները որոշելու նպատակով: Օրվա պատասխանատու ագիտատորը պարտավոր էր հետևել ագիտացիոն կետերի վրա ուժերի համաշափ բաշխմանը: Այդ աշխատանքի մեջ էր ներգրավվում երիտասարդությունը, գլխավորապես՝ ուսանողությունը: «Ամենանպատակային և պատասխանատու էին, անշուշտ, մեր կոլեգիայի ոչ թե երիտասարդների, այլ ավելի հասուն կոմիտեականների ելույթները: Այլուաներից ավելի հաճախ ելույթ էին ունենում Ռուբեն-Կնունյանցը, Անտոն-Կրասիկովը, տողերիս գրողը...»<sup>1</sup>:

Ինչպես նշվում է ժամանակակիցների հուշերում, Կնունյանցը հաճախ էր լինում «Վիբորգսկայա ստորոնա» և «Նարվսկայա զաստավա» շրջաններում:

Հոկտեմբերյան ընդհանուր գործադուլի նախօրյակին և գործադուլի ընթացքում Պետերբուրգի կոմիտեն ծավալում էր լայն գործունեություն: Ձեռնարկություններում, շրջաններում տեղի էին ունենում ժողովներ, միտինգներ, խորհրդակցություններ:

«Բանվորների դեպուտատների առաջին Սովետը» գրքույկում Կնունյանցը, որպես մասնակից և ականատես, նկարագրում է 1905 թվականի աշնան այդ բուռն օրերը: Նա պատմում է, թե Պիտերում ինչպիսի մասսայական միտինգներ և ժողովներ էին տեղի ունենում, որոնք, համարյա, ամենուրեք կազմակերպում և ղեկավարում էին կուսակցական ագիտատորները: Դրանք ընթանում էին շափազանց աշխույժ,

<sup>1</sup> Борис Перес, На партийной работе в Петербурге осенью 1905 г. Сборник, «Первая русская революция в Петербурге 1905 г.», стр. 62—63.

բուռն վեճերի և ելույթների առկայութեամբ: Քննարկվում էին այսպիսի հրատապ հարցեր. գործադուլները և նրանց նշանակութունը, բանվորների վերաբերմունքը և պահանջները, բանվորագյուղացիական դիկտատուրայի նվաճման հնարավորութիւնները, Բուլիգինյան դուման և նրա բոյկոտի խնդիրը և այլն:

«Վիճաբանութիւնների գլխավոր առարկան,— գրել է Բ. Կնունյանցը,— կազմում էին բոյկոտի, կուսակցութեան ընթացիկ տակտիկական լոզունգների, դումայի ընտրութիւնների առթիվ տեղի ունենալիք ելույթի հարցերը»<sup>1</sup>:

Այնուհետև նա նշում է, որ հոկտեմբերի 4-ից հետո, երբ սկսվեց ընդհանուր գործադուլը, հիշյալ վեճերը կորցրին իրենց սրութիւնը: Գործադուլը տրամադրեց ազատ ժամանակ: Բանվորները, ուսանողները, արհեստավորները, ծառայողները, բոլորը դարձան բազմաթիվ ժողովների և միտինգների ակտիվ մասնակիցներ: Նրանք զբաղեցնում էին մայրաքաղաքի բոլոր դահլիճները՝ առավոտից մինչև երեկո: Մի խմբին փոխարինում էր մեկ ուրիշը, մի կուլեկտիվին՝ հաջորդը և այսպես տասնյակ հազարավոր մարդիկ ներգրավվել էին ակտիվ քաղաքական գործունեութեան մեջ: Այս մասսայական բուռն վերելքը ղեկավարելու համար ընդհատակյա կուսակցական կազմակերպութիւնների, նրանց հարող հեղափոխական ու դեմոկրատական տարրերի ուժերը միանգամայն անբավարար էին: Այդ օրերին աշխատանքի հիմնական ձևը ագիտացիան էր, մասսայական միջոցառումները, որոնք պահանջում էին ընդգրկել նորանոր մարդկանց, ստեղծել ազատ գործելու պայմաններ ու, ինչպես նշում է Բոգդանը, «ավելի

<sup>1</sup> Б. М. Кнунянц, Избр. произ., стр. 210.

լայն ու հարմար ապարատ, քան կուսակցական կազմակերպություններն էին: Այդ անհրաժեշտության արդյունքն էլ հանդիսացավ բանվորների դեպուտատների սովետը...»<sup>1</sup>։ Սկզբնական շրջանում այն ստեղծվեց որպես մայրաքաղաքի գործադուլավոր բանվորների ընդհանուր կոմիտե:

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ այդ կոմիտեի առաջին նիստը, որին մասնակցում էին միտինգներում և ժողովներում ընտրված փոքր թվով դեպուտատներ և մինչև հոկտեմբերի 13-ը ընտրված ավագների և գործադուլային կոմիտեիների դեպուտատների մի մասը:

Այդ նիստում ընդունված կոչի մեջ ասվում էր, որ հեղափոխական շարժման ղեկավարութունը կենտրոնանում է բանվորական կոմիտեի ձեռքում: Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների կոլեկտիվներին առաջարկվում էր յուրաքանչյուր 500 հոգուց ընտրել մեկ դեպուտատ, որոնք և կկազմեն «Պետերբուրգի ընդհանուր բանվորական կոմիտե»:

Առաջին օրերին մայրաքաղաքի բանվորների ընտրած աշտօրգանը կոչվում էր նաև «Գործադուլային հանձնաժողով», «Գործադուլային կոմիտե», «Բանվորական կոմիտե»:

Հոկտեմբերի 15-ի երրորդ նիստում, որտեղ քննվում էին կազմակերպական հարցեր, «Կոմիտեն» վերջնականապես վերանվանվեց «Բանվորների դեպուտատների Սովետ» (ԲԴՍ): Այսպես ստեղծվեց խոշոր սովետներից մեկը՝ Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետը:

Վ. Ի. Լենինը, ամփոփելով դեպքերի այս ընթացքը մայրաքաղաքում և այլուր, գրում էր, որ սովետները «ստեղծվում էին բացառապես բնակչության հեղափոխական խավերի ձեռ-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 214:

քով, դրանք ստեղծվում էին ամեն տեսակ օրենքներից ու նորմաներից դուրս, ամբողջովին հեղափոխական ճանապարհով, իբրև յուրօրինակ ժողովրդական ստեղծագործության արդյունք, իբրև հին ոստիկանական կապանքներից ազատված կամ ազատվող ժողովրդի ինքնագործունեության արտահայտություն<sup>1</sup>:

Մայրաքաղաքի հեղափոխական մասսայական այդ կազմակերպությունը իր գոյությունը առաջին ամսվա ավարտին ունեւր արդեն 562 դեպուտատ, որը ներկայացնում էր 147 գործարանների, 34 արհեստանոցների աշխատավորության և 16 նորաստեղծ արհմիությունների շահերը: Որոշվեց նաև, որ կուսակցությունները ևս պետք է ունենան իրենց ներկայացուցիչները: Դա հնարավորություն տվեց, որ Սովետի աշխատանքներին մասնակցեն նաև երեքական բոլշևիկներ, մենշևիկներ և էսէներ:

Դժբախտաբար, մենշևիկներին հաջողվեց Սովետում ունենալ մեծամասնություն, որ և անդրադարձավ թե՛ Սովետի ղեկավար օրգանների ընտրության և թե՛ նրա ամբողջ գործունեության վրա: Այդ բանին նպաստեց նաև անկուսակցական փաստաբան Գ. Խրուստալև-Նոսարի ընտրությունը որպես նախագահի: Իր աշխարհայացքով նա հարում էր մենշևիկներին և օգնում նրանց: Բոլշևիկների համար ստեղծվեցին անբարենպաստ պայմաններ: Նոյեմբերի 9-ին Պետերբուրգ վերադարձած Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ նրանք լարված պայքար էին մղում Սովետի գործունեությանը ճիշտ ուղղություն տալու համար: Հանրահայտ է, որ Սովետի գործկոմում բոլշևիկների ներկայացուցիչներն էին Բ. Կնունյանցը և Պ. Կրա-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 12, էջ 380:

սիկովը: Վերջինս ավելի շատ ծանրաբեռնված էր կուսակ-  
ցական-կազմակերպական աշխատանքներով, հետևապես  
Բոգդանը այն հիմնական դեմքն էր, որի միջոցով «Վ. Ի.  
Լենինը կապ էր պահպանում գործադիր կոմիտեի հետ»<sup>1</sup>:

1905 թ. Պետերբուրգի սովետի բոլշևիկ դեպուտատներից  
մեկը իր հուշերում կյսպես է բնութագրել նրա գործունեու-  
թյունը. «Երիտասարդ ու եռանդուն ընկեր Կնունյանցը միշտ  
պայքար էր մղում հրուստալեի և մենշևիկների դեմ՝ առաջա-  
դրելով հեղափոխական պահանջներ և մարտական լոզունգ-  
ներ»<sup>2</sup>:

Ինքը՝ Բոգդանը, Սովետի գործունեության սկզբունքային  
նշանակությունը համարել է այն, որ Սովետի միջոցով միայն  
բանվորների շրջանում կարելի էր ապահովել բոլշևիկյան կու-  
սակցության ազդեցությունը: Անկասկած է, որ կուսակցական  
դեկավար մարմինները, լավ հասկանալով այդ հանգամանքը,  
ամեն կերպ օգնում էին Սովետի ստեղծման և ամրապնդման  
գործին:

Կնունյանցը միանգամայն իրավացի է, նշելով, թե՛ «եթե  
Սովետը չլիներ Պետերբուրգի պրոլետարիատի մեջ սոցիալ-  
դեմոկրատիայի երկարատև աշխատանքի արդյունքը, եթե կու-  
սակցական կազմակերպությունները չպաշտպանեին նրան  
նրա ամբողջ գործունեության ընթացքում, Սովետը երբեք այդ  
ուժն ու ազդեցությունը չէր ունենա»<sup>3</sup>:

1 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ար-  
խիվ, ֆ. 1, գործ 5:

2 Նույն տեղը, ֆ. 1, կապոց 9, գործ 92:

3 Б. М. Кнунянц, Избр. произ., стр. 216.

Պետերբուրգի 300000 բանվորների օգնությունն ունենալով, Սովետը գործում էր վստահ, իր ուժի և նշանակության գիտակցությամբ: Մասսաների հետ նա կապված էր իր դեպուտատների միջոցով: Չնայած Սովետի նիստերը դոնրաց էին և տեղի էին ունենում մայրաքաղաքի մեծ դահլիճներում, այնուամենայնիվ, ցանկացողներից շատերը հնարավորություն չունեին ներկա գտնվել՝ տեղ չլինելու պատճառով:

Կարգապահության համար Սովետի նիստերի օրերի մասին նախօրոք հայտարարվում էր «Ռուսկայա զագետա» թերթում և բաժանվում էին զանազան գույնի տոմսեր՝ յուրաքանչյուր նիստի համար առանձին: Տեղեկություններ ստանալու և կապ պահպանելու համար որոշակի նշանակություն ունեին շրջանային սովետները, որոնք գոյություն ունեին մայրաքաղաքի 7 շրջաններում: Նրանք որոշումներ չէին հանում, այլ կազմակերպում էին Սովետի որոշումների կատարումը և կապված էին Սովետի գործադիր կոմիտեի հետ: Յուրաքանչյուր շրջանային Սովետ ղեկավարում էր գործադիր կոմիտեի անդամներից մեկը: Սովետի մասսաճական հիմքը ընտրողների ժողովներն էին. այդ ժողովներում ընտրողները ոչ միայն հաշվետվություն էին լսում Սովետի նիստերի մասին, այլև իրենց առաջարկություններն էին անում և երբեմն էլ իրենց կամքն էին թելադրում բանվորների դեպուտատների Սովետին: Եվ դա իր արտահայտությունն էր գտնում Սովետի գործունեության մեջ:

Սովետը նիստեր էր գումարում շաբաթական մեկ անգամ, իսկ գործադրիչների շրջանում՝ ամեն օր:

Կազմակերպական այս կառուցվածքը և աշխատանքը ցույց են տալիս, թե կազմակերպման նոր ձևը որքան դեմոկրատական և գործնական էր հեղափոխական շարժման ղեկավար-

ման տեսակետից: Բանվորների դեպուտատների Սովետը աշխատում էր կիրառել և իրականում կիրառում էր դեմոկրատական ազատությունները: Սակայն նրա հիմնական խնդիրն էր ղեկավարել գործադուլային շարժումը, ամեն աջակցություն ցույց տալ կռվի ելած բանվորական կռիվատիվներին, որպեսզի նրանք կարողանան իրագործել պայքարում հետապընդվող նպատակները: Գործադուլների շրջանում Սովետը հոգ էր տանում բանվորների մասին, կազմակերպում էր դրամական ֆոնդերի ստեղծում՝ պայքարող բանվորների նյութական կարիքները հոգալու համար: Պայքարը յուրաքանչյուր կռիվի, դրամական միջոցների լավագույն գործադրման համար, անբասիր, իդեալական վերաբերմունքը դեպի այդ միջոցները բնութագրում էին Սովետի դեպուտատներին, «որոնք լիակատար հնարավորություն ունենալով դրամարկղից ճանապարհածախս վերցնելու...», գերադասում էին տասնյակ վերստեր անցնել ոտքով, քան հասարակական գումարներից մի ավելորդ կռպեկ ծախսել ձիաքարշի համար: Եվ չէ՞ որ հաջորդառավոտյան, լույսը հազիվ բացված, նրանք պետք է վեր կենային՝ աշխատանքի գնալու համար»<sup>1</sup>:

Աշխատանքի այսպիսի ձևերն ու մեթոդները բացարձակապես բարձրացրին Սովետի հեղինակությունը բանվորների շրջանում, որոնք Սովետի ցուցումներով սկսում և ավարտում էին գործադուլները, մասնակցում էին բողոքի ցույցերին և միտինգներին, հերոսության և անձնազոհության հիանալի օրինակներ էին ցույց տալիս:

Հեղափոխական շարժման վերելքի արդյունքն էր հոկտեմբերի 17-ի մանիֆեստը «ազատությունների» մասին: Ցարա-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 291:

կան մանիֆեստին Սովետը անդրադարձավ հաջորդ օրը, իր հերթական նիստում, գնահատելով այն որպես ընդհանուր քաղաքական գործադուլի երկաթե մամլիչի մեջ սեղմված ցարիզմի զիջում:

«Սակայն մարտնչող հեղափոխական պրոլետարիատը, — ասված է այնուհետև բանաձևում, — զենքը ցած դնել չի կարող, մինչև որ ռուս ժողովրդի քաղաքական իրավունքները չդրվեն հաստատուն հիմքերի վրա, մինչև որ հաստատվի դեմոկրատական հանրապետություն, որը սոցիալիզմի համար պրոլետարիատի հետագա պայքարի լավագույն ուղին է»<sup>1</sup>:

Տվյալ դեպքում Սովետի ճիշտ դիրքորոշումը հեղափոխությունից և բոլշևիկների կատարած հսկայական աշխատանքի ուղղակի արդյունքն էր: Կնունյանցը նշել է, որ բոլոր կուսակցություններից բոլշևիկներն էին միայն ճիշտ հասկանում, որ Եանհրաժեշտ էր շարունակել զինված ապստամբությունից կազմակերպման և նախապատրաստման արդեն սկսած գործը»<sup>2</sup>:

Սակայն մասսայական շարժման թափը, ժողովրդի հետըզհետե աճող ակտիվությունը ցարական մանիֆեստի հրապարակման հաջորդ օրերին անհանգստացնում էր լիբերալներին և Սովետում նրանց հարող տարրերին: Մանիֆեստի գոյությունը նրանք համարում էին կարգերի հետագա դեմոկրատացման որոշակի գրավական և հեղափոխական ելույթների շարունակումը գտնում էին ավելորդ: Այդ հարցը քննարկման առարկա դարձավ Սովետի հոկտեմբերի 18-ի նիստում: Իսկ փողոցներում տեղի էին ունենում բազմաթիվ և

1 «Известия Совета рабочих депутатов», 20 X 1905, № 3.

2 Б. М. Кнунянц, Избр. произ., стр. 235.



բաղմամարդ միտինգներ, ժողովներ, երթեր: Ժողովրդական  
այդ ելույթների մասնակիցները Սովետի նիստերին հաճախ  
ուղարկում էին ներկայացուցիչներ, պահանջելով նրանցից  
ղեկավարել փողոցում մղվող պայքարը: Մենշևիկները և  
նրանց համախոհները դեմ արտահայտվեցին դրան: Հոկ-  
տեմբերի 18-ի երեկոյան ժամը 9-ին, ինչպես պատմում է  
Կնունյանցը, «Մարսելիոզի» հնչյունների տակ Սովետի շեն-  
քին մոտեցավ մի քանի հազարի հասնող մարդկանց մի բազ-  
մություն: Ցուցարարները Սովետի դեպուտատներին կանչեցին  
փողոց: Կնունյանցը Սովետի անունից պատուհանից հավաք-  
վածներին հայտնեց, որ շուտով դեպուտատները դուրս կգան:  
Բազմությունը ղեկավարելու համար անմիջապես ընտրվում  
են երեք հոգի, որից մեկը Կնունյանցն էր: Մոտ 80 հազա-  
րանոց թափորն սկսում է ընթանալ Պետերբուրգի փողոց-  
ներով:

«Թափորը, որ սկզբում խառնիխուռն էր, շուտով զարմա-  
նալի կերպով կանոնավոր բնույթ ստացավ,— դրում է  
Կնունյանցը:— Առջևից ընթանում էր երկու շարք՝ շղթա  
կազմած: Շղթայի հետևից մի քանի շարք դրոշմեր, նրանց  
հետևից՝ արդեն մասսան, որ նույնպես ըստ հնարավորին  
շարքեր էր կազմել փողոցի լայնությամբ<sup>1</sup>: Ղեկավարներուի  
գլխավորությամբ, որոնց գլխարկների վրա սպիտակ ժապա-  
վեն էր ամրացված, լապտերներով և դրոշակներով ընթացող  
թափորը վեր է ածվում բողոքի բազմահազարանոց ցույցի:  
Շուտով ցույցին միացան Կազանսկի հրապարակում տեղի  
ունեցող միտինգի, համալսարանում կայացած ժողովի և այլ  
հավաքույթների մասնակիցները: Հսկայական թափորը մի քա-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 257—258:

նի ժամ շարունակ հեղափոխական երգերով ընթանում էր մայրաքաղաքի փողոցներով: Բարդություններից զգուշանալով իշխանութունը չդիմեց ոչ մի ռեպրեսիվ միջոցի: Թափորը ցրվեց Սովետի ընտրած ղեկավարների պահանջով: Այնուհետև կնունյանցը նկարագրում է մի շարք դեպքեր, երբ Սովետի պահանջով սկսվում կամ վերջանում էին գործադուլներ, ժողովներ, միտինգներ և մասսայական այլ միջոցառումներ:

Բայց զինված ապստամբության հարցը, որ բարձրացվում է պայքարող բանվորների կողմից, միշտ չէ, որ հավանության էր արժանանում Սովետում: Հոկտեմբերյան գործադուլի օրերին Սովետը նույնիսկ սխալ որոշում կայացրեց՝ պահանջելով Պետերբուրգից դուրս հանել զորքը:

«Բանակը չի կարող և չպետք է շեզոք լինի,— գրում էր այդ օրերին Վ. Ի. Լենինը:— Բանակը քաղաքականության մեջ չքաշելը դա բուրժուազիայի և ցարիզմի կեղծավոր ծառաների լողունգն է...»<sup>1</sup>: Բանակը պետք է լինի ժողովրդի հետ, սովորեցնի նրան զենք օգտագործելու և զենքի ուժով հասնելու իր նշած նպատակներին: Բոլշևիկների ջանքերով Սովետը նոյեմբերի 1-ին քննարկեց բանակի հետ կոնտակտների հարցը՝ հոկտեմբերի 20—28-ին Կրոնշտադտում տեղի ունեցած ապստամբության կապակցությամբ, որը գազանաբար ճնշվեց: Որոշվեց մայրաքաղաքում բողոքի ցույց կազմակերպել: Ընդունվեց նաև «Պետերբուրգի կայազորի զինվորներին» ուղղված կոչ, որ նրանք միանան բանվորներին և ապստամբած նավաստիներին:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու հ. 12, էջ 134:

Այդ ամենը, գրում է Կնուենյանցը, պետք է ցույց տար զին-  
վորներին և նավաստիներին, որ «բանվոր դասակարգը պայ-  
քար է մղում նրանց ազատութեան համար, որ նա նրանց  
համար պատրաստ է կրելու ամեն զրկանք, եթե միայն  
նրանք կանգնեն ժողովրդի կողմը»<sup>1</sup>:

Սովետի նիստերին քննարկվեցին նաև բանվոր դասակար-  
դի, գյուղացիների, ազգային փոքրամասնութիւնների և քա-  
ղաքի մանր բուրժուական տարրերի հետ առնչվող հար-  
ցեր:

1905 թվականի դեկտեմբերի 1-ին Սովետի գործադիր կո-  
միտեն ընդունում է հինգ խոշոր կազմակերպութիւնների և  
կուսակցութիւնների անունից ներկայացված մի կարևորա-  
գույն փաստաթուղթ: Դա Ֆինանսական հայտնի մանի-  
ֆեստն էր:

Մանիֆեստը մերկացնում էր ցարիզմը, նրա ֆինանսական  
քաղաքականութիւնը, ցույց էր տալիս, որ Ռուսաստանում իշ-  
խում են օտարերկրյա կապիտալը և օտարերկրյա փոխառու-  
թիւնները, նշում էր ֆինանսական ճգնաժամը, շինովնիկների  
կամայականութիւններն ու կողոպուտները:

«Կա մի հլք, — ասված է մանիֆեստում, — տապալել կա-  
ռավարութիւնը, խլել նրա վերջին ուժերը: Պետք է կտրել նրա  
գոյութեան վերջին աղբյուրը՝ ֆինանսական եկամուտները: Այդ  
անհրաժեշտ է ոչ միայն երկրի քաղաքական և տնտեսական  
ազատութեան, այլև, մասնավորապես, պետութեան ֆինան-  
սական տնտեսութիւնը կարգավորելու համար»:

Այնուհետև մանիֆեստը կոչ էր անում.

«Հրաժարվել հոգնման և պետական բոլոր մյուս վճա-

<sup>1</sup> Б. М. Кнуляц, Избр. произ., стр. 271.

րոմաներից: Բոլոր գործարքների ժամանակ, աշխատավարձ և ոտճիկ ստանալիս պահանջել, որ վճարեն ոսկով, իսկ հինգ ոտբլուց փոքր գումարի դեպքում՝ լիարժեք մետաղյա դրամով: Պետական խնայողական դրամարկղներից և պետական բանկից ավանդներն ստանալիս պահանջել, որ ամբողջ գումարը վճարեն ոսկով»:

Մանիֆեստը պահանջում է՝ թույլ շտալ օտարերկրյա փոխառությունների գծով ցարական պարտքերի վճարումը, փոխառություններ, որ ծախսվեցին հեղափոխությունը ճնշելու, «ամբողջ ժողովրդի դեմ պատերազմելու համար»<sup>1</sup>:

Պետերբուրգի Սովետի կոչին արձագանքեցին ամբողջ երկրի աշխատավորները: Իրենց համերաշխությունը հայտնեցին Մոսկվայի, Կիևի, Ռոստովի սովետները, Ռիգայի, Նարվայի, Ռևելի, Խարկովի բանվորների ուղարկած պատվիրակությունները, բազմաթիվ այլ քաղաքներից և կազմակերպություններից եկած հեռագրերը: Այնուհետև պետական բանկերից և խնայողական դրամարկղներից մասսայաբար վերցվում էին ավանդները, և մանիֆեստում նշված ձևով կատարում մյուս գործարքները: Արդյունքը հղավ այն, որ միայն Պետերբուրգում 1905 թ. դեկտեմբեր ամսին դրված ավանդներից ևս վերցվեց 4 միլիոն ոտբլի, իսկ գավառում՝ 89 միլ. ոտբլի:

Լենինը մանիֆեստը գնահատեց որպես հեղափոխական ակտ: Մանիֆեստը տպագրվեց դեկտեմբերի 2-ին ութ թերթերում, որոնց բոլոր խմբագրություններն էլ փակվեցին, իսկ մանիֆեստը պարոնեակող համարները բռնագրավվեցին: Այդ թերթերի թվում էր նաև բուլշևիկյան «Նովայա ժիզն»-ը:

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 299—300:

Մինչ այդ, նշված բոլոր թերթերը լույս էին տեսնում ազատորեն, բուրժուական մամուլի տպագրական բազայի հաջող օգտագործմամբ և շատ հաճախ՝ Պետերբուրգի բանվորական Սովետի անունից, որը դեռևս հոկտեմբերի 19-ին դեկրետ ընդունեց մամուլի ազատության մասին: Սակայն, նա թույլ տվեց նաև շատ կոպիտ սխալ: Երկու շաբաթ հետո, մենշևիկների առաջարկով, Սովետը որոշեց դադարեցնել բոլոր թերթերի հրատարակումը, բացի Սովետի «Իզվեստիա»-ից՝ իբր թե ընդհանուր գործադուլը չխախտելու համար:

Բուլշևիկները դուրս եկան այդ որոշման դեմ, պահանջեցին, որ ազատ լույս տեսնեն սոցիալ-դեմոկրատական բոլոր թերթերը, առանց որոնց դժվարանում էր կուսակցության քաղաքական աշխատանքը: Բայց նրանց առաջարկը շանցավ, և որոշման քվեարկության ժամանակ դեպուտատ-բուլշևիկները մնացին ձեռնպահ:

«Մի այնպիսի պահի, երբ պրոլետարիատը հատկապես ուժեղ պայքար էր մղում, մարտական մամուլից հրաժարվել, նշանակում է կամոլին թուլացնել իր ուժերը»<sup>1</sup>, — գրում էր Կնունյանցը:

Մամուլը՝ կուսակցության, ժողովրդի և հեղափոխության թշնամիների դեմ մղված պայքարում այդ սուր զենքը գործադրելու բուլշևիկյան ավանդույթը, դեկավար սկզբունք էր Կնունյանցի և նրա ընկերների համար: Նա գտնում էր, որ մամուլը զուտ կուսակցական գործ է, և այն պետք է դեկավարեն կուսակցական կազմակերպությունները: Երբ առաջարկ եղավ բանվորների դեպուտատների բյուլետենի փոխարեն «Իզվեստիա»-ն դարձնել մշտական օրգան, բուլշևիկները

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 243—244:

դրան դեմ դուրս եկան, նշելով, որ անհնար է «քաղաքական լուրջ օրգան հրատարակել, երբ Սովետի ծրագրային հայացքներում այսպիսի անորոշումներն է տիրում»<sup>1</sup>։

Կնունյանցը ոչ միայն աշխատակցում էր, այլև, մինչև իր ձեռքբեկավելը, ակտիվ կերպով մասնակցում էր բոլշևիկյան «Նովայա ժիզն» թերթի խմբագրության աշխատանքներին։

Թերթի առաջին համարում տպագրված հայտարարության մեջ աշխատակիցների մասին ասված է. «Նովայա ժիզն»-ը հրատարակվում է Մաֆսիմ Գուրու անմիջական և մշտական աշխատակցությամբ։ Թերթին աշխատակցում են՝ Ա. Բոգդանովը, Մ. Գորկին, Ն. Լենինը, Ա. Լոնաչարսկին, Բ. Ռադիկոնը (Ռուսով), Ա. Սերաֆիմովիչը...»<sup>2</sup>։ Թերթի ամենամոտ աշխատակիցներից էին նաև Վ. Վորոպսկին և Ս. Օլմինսկին։

«Նովայա ժիզն»-ը առաջին լեգալ բոլշևիկյան թերթն էր Ռուսաստանում և 1905 թ. հոկտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 3-ը լույս էր տեսնում ամեն օր։

Լենինի արտասահմանից Պետերբուրգ վերադառնալուց հետո թերթը լույս էր տեսնում նրա անմիջական ղեկավարությամբ և փաստորեն ՌՍԴԲԿ-ի կենտրոնական օրգանն էր։ Դա ամենաժողովրդական, մասսայական բանվորական թերթն էր, որ հրապարակվում էր օրը 80 հազար օրինակով։

Թերթի հինգ համարներում տպագրվել են Կնունյանցի հոդվածները հեղափոխական շարժման էական հարցերի վերաբերյալ։

Վ. Ի. Լենինի ղեկավարությունը զգալիորեն աշխուժացրեց կուսակցական աշխատանքները մայրաքաղաքում և ունեցավ

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 254։

<sup>2</sup> «Новая жизнь», 27 X 1905, № 1.

իր ազդեցութիւնը Սովետի գործունեութեան որոշ կողմերի վրա: Վ. Ի. Լենինը ներկա է լինում Սովետի նոյեմբերի 13-ի նիստին: Նա 3 կամ 4 անգամ մասնակցել է Սովետի պլենումներին և գործկոմի նիստերին<sup>1</sup>: Հիշյալ նիստի հիմնական ձեռնարկատերերի լոկաուտի դեմ պայքարի հարցը քննարկելիս Լենինը հիւսիսային ունեցավ և առաջարկեց որոշման իր նախագիծը «Լոկաուտի դեմ պայքարելու միջոցների մասին», որը ընդունվեց միաձայն: Որոշումը զգուշացնում է, որ կապիտալիստների լոկաուտը նպատակ ունի բանվորներին կռվի դուրս բերել վերջիններիս համար աննպաստ պայմաններում և ճնշել սկզբում մայրաքաղաքի ու պրոլետարիատի ալլ կենտրոնների, ապա՝ գյուղացիական շարժումները: Լենինը կոչ էր անում միավորել բանվորների, գյուղացիների, բանակի ու նավատորմի հեղափոխական ուժերը:

Որոշումը պահանջում էր բաց անել փակված գործարանները, հակառակ դեպքում՝ գավառների աշխատավորութեան հետ համատեղ պատրաստվել ընդհանուր քաղաքական գործադուլի: Նշվում էր գործազուրկ բանվորներին նյութական օգնութիւն ցույց տալու անհրաժեշտութիւնը:

Կնունյանցը ընդգծում է, որ Սովետի որոշման նպատակը «գլխավորապէս այն էր, որ բանվորներին մատնացույց անելով կառավարութեան պրոպոկացիայի վրա, նրանց նախազգուշացնել մասնակի ելույթներ ունենալուց»<sup>2</sup>: Բոլշևիկները քվեարկել էին Սովետի այդ որոշման օգտին:

Ամբողջովին միանալով քաղաքական իրադրութեանը Լենինի տված գնահատակին, նա «Պայքար ութժամյա բանվո-

<sup>1</sup> Տե՛ս «Борьба классов», 1935, № 7—8, էջ 242—243:

<sup>2</sup> Б. М. Кнунянц, Избр. произв., стр. 287.

շական օրվա համար» իր հողվածում մեջ է բերում «Նովայա Ժիզն» թերթում տպված Վ. Ի. Լենինի «Չհաջողված պրովոկացիա» հողվածի հետևյալ տողերը.

«Ջոկ-ջոկ կովելու կոչին Սովետը պատասխանեց կոիվն ամբողջ Ռուսաստանում միացնելու կոչով, նա պատասխանեց այն անհապաղ միջոցներով, որոնց նպատակն է ամրացնել հեղափոխական բանվորների դաշինքը հեղափոխական գյուղացիության հետ, բանակի ու նավատորմի այն մասերի հետ, որոնք ապստամբություն են սկսում Ռուսաստանի բոլոր ծայրերում»: «Ինքնակալության ու բուրժուազիայի դաշինքին մենք պետք է հակադրենք սոցիալ-դեմոկրատիայի ու ամբողջ հեղափոխական բուրժուական դեմոկրատիայի դաշինքը: Սոցիալիստական պրովետարիատը ձեռք է մեկնում ազատության համար կովող գյուղացիությունը, կոչ է անում նրան ընդհանուր, համաձայնեցված գրոհի ամբողջ երկրում: Ահա որն է բանվորների դեպուտատների Սովետի որոշման հսկայական նշանակությունը»<sup>1</sup>:

Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետի կարևորագույն գործերից մեկը եղավ նրա որոշումը՝ միանալ Ց. Ժամյա բանվորական օր հայտարարած բոլոր գործարանների, ֆաբրիկաների, ձեռնարկությունների կոլեկտիվներին և օգնել նրանց պրակտիկայում կենսագործելու պրովետարիատի պայքարի հիմնական նպատակներից մեկը: Այդ քայլը հաջողություն մտնեց պսակվեց հոկտեմբերյան ընդհանուր գործադուլի պայմաններում: Սովետը իրապես դարձավ կառավարական օրգան, և իզուր չէ, որ մամուլը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «երկիրշխանության» վիճակ էր արձանագրել երկրում: Սո-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 191.



վետր իրական օգնութիւնն էր ցույց տալիս այլ քաղաքների ժողովրդական շարժումներին, կասեցնում դատավճիռները, հայտարարված ռազմական վիճակը համարում էր շեղյալ, կապ էր պահպանում արտասահմանի հեղափոխական կազմակերպութիւններին հետ և այլն:

Ցարական կառավարութիւնը ստիպված էր ճանաչել Սովետի գոյութիւնը և միառժամանակ թուլլատրել նրա լեզալ և պաշտոնական գործունեութիւնը: Սովետի նիստերի օրերը և տեղը միշտ հայտնի էին ոստիկանութեանը: Վերջինս չէր խանգարում և չէր միջամտում Սովետի գործերին: Ցարական կառավարութեան օրգանները, ինչպես տեսանք, նույնիսկ կատարում էին Սովետի առանձին պահանջները:

Կնունյանցը մեջ է բերում «Նովոյե վրեմյա» ռեակցիոն թերթի հրատարակիչ Ա. Սովլորինի խոսքերը այն մասին, որ Ռուսաստանը ենթարկվում էր ոչ թե «օրինական», այլ միութիւնների կողմից ընտրված «ինքնակոչ» կառավարութեանը: Դրա համար էլ Սովլորինը Սովետն անվանում է «միութենական ռուսական կառավարութիւն», որն իր հիմնարկներն ունի ամբողջ Ռուսաստանում, «իր կապը չի կորցնում ոչ քաղաքական, ոչ փոստ-հեռագրական և ոչ մի այլ գործադուլի դեպքում: Այն ժամանակ, երբ օրինական կառավարութիւնը մնում է առանց երկաթուղու, փոստ-հեռագրատան, միութենական կառավարութիւնը այդ բոլորով օգտվում է: Այն ժամանակ, երբ օրինական կառավարութիւնը չի իմանում, թե ինչ է կատարվում Ռուսաստանում, միութենական կառավարութիւնը ամեն ինչ լզիտե և իր բոլոր կարգադրութիւնները հրապարակում է: Երբ օրինական կառավարութիւնը ուղարկում է գաղտնի շրջաբերականներ կամ տպագրում է գաղտնի փաստաթղթեր, միութենական կառավարութիւնը դրանք հրա-

պարակում է իր հեղափոխական օրգաններում»։ Սովորինը, իրադարձությունները դիտելով կողմնակի մարդու աչքերով, իր խոսքն ավարտում է այսպես. «Ես նայում եմ, թե որտեղ են կենդանի մարդիկ. ես նրանց պարզ տեսնում եմ ապօրինի կառավարության մեջ, և մշուշի մեջ նրանք տեսանելի են ինձ օրինական կառավարության մոտ»<sup>1</sup>։

Հեղափոխական իրադարձությունների և ժողովրդական շարժման վերելքի տպավորության տակ միթագնել էին լիբերալ բուրժուազիայի ներկայացուցչի՝ «հին կառավարության հին բարեկամի» աչքերը և շատ բան թե նրա և թե նրա դասակարգի աչքին պարզ չէր երևում։

Իր այսպիսի հեղինակությամբ և աշխատանքի թափով Սովետը պարտական էր բոլշևիկներին, որոնք, հաճախ խորտակելով մենշևիկյան ղեկավարության դիմադրությունը, հենվելով ժողովրդական մասսաների վրա, կենսագործում էին իրենց հեղափոխական միջոցառումները։

Պետերբուրգի Սովետի գործկոմի անդամ Ն. Նեմցովը իր հիշողություններում պատմում է, թե շնայած մենշևիկների և էսէռների հարուցած արգելքներին, «Սովետի քաղաքական աշխատանքը ընթանում էր բոլշևիկների գերակշռող ազդեցության տակ։ Սովետի մարտական բանաձևերը, ինչպես զինված ապստամբության, բանվորներին ուղղված կոչերը, սառը զենք կոփելու, պատրաստելու, մարտական ջոկատներ կազմակերպելու մասին կոչը, մի խոսքով, այն ամենը, ինչ բնորոշում է բարձրացող հեղափոխական դասակարգի պայքարը, այդ ամենը բոլշևիկների գործն էր»<sup>2</sup>։

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 233։

<sup>2</sup> «Ленинградская правда», 29 XII 1930.

Մեզ թվում է, որ Պետերբուրգի Սովետի աշխատանքի ընդհանուր գնահատականը տալիս պետք է հաշվի առնել այդ հանգամանքը և ելնել նաև հենց իրենց՝ Սովետի բոլշևիկ գործիչների, այդ թվում նաև Կնունյանցի վերլուծումներից և գնահատականներից: Խոսելով Բ. Կնունյանցի անցած ուղու մասին, Ալ. Մյասնիկյանը հատուկ ուշադրություն է դարձրել նրա հենց այդ շրջանի վրա: «1905 թ. Պետերբուրգի բանվորների դեպուտատների Սովետի առաջնորդները» հոդվածում արժանին մատուցելով Սովետի գործունեությանը, նա նշում է. «Բոգդան Կնունյանցը հանդիսացել է Սովետի ամենաակա-նավոր ներկայացուցիչներից և ղեկավարներից մեկը»<sup>1</sup>:

Սովետների հսկայածավալ գործունեության գնահատակա-նը տալիս, անհրաժեշտ է նաև պարզաբանել բոլշևիկների և մենշևիկների դիրքորոշումը:

Մենշևիկները Սովետները համարում էին տեղական ինքնավարության օրգաններ և այդ պատճառով էլ նրանց ֆունկցիաները սահմանափակում էին տեղական նշանակություն ունեցող հարցերով: Դրանով իսկ նրանք աշխատում էին Սովետները հեռու պահել կուսակցության ազդեցությունից, նրանց գործունեության մեջ անցկացնել անկուսակցականու-թյան դադափարը:

Իսկ բոլշևիկները Սովետները դիտում էին որպես հեղա-փոխական շարժման ղեկավար օրգաններ և հատկապես ընդ-դժում էին «նրանց նշանակությունը որպես հեղափոխական իշխանության օրգանների սաղմերի»<sup>2</sup>: Պետերբուրգի Սովե-

<sup>1</sup> «Буревестник», орган Северо-западного областного и Минского комитетов РКП(б), 22 X 1917 г., № 13.

<sup>2</sup> Б. М. Княуняц, Избр. произв., стр. 206.

տի գոյութեան մինչև վերջին օրերը, նրանք իրենց համար  
անբարենպաստ պայմաններում շարունակում էին պայքարը  
հանուն պրոլետարական հեղափոխութեան հաղթանակի՝ օգ-  
տագործելով այդ նպատակի համար պրոլետարական պայ-  
քարի հնարավոր բոլոր միջոցները:

Արտահայտելով բոլշևիկյան քաղաքականութեան այդ գի-  
ծը, Կնունյանցը գրում էր.

«Ընդհանուր գործադուլի հզոր զենքը մեր ձեռքին է, և եթե  
մենք ժամանակավորապես դադարեցնենք այն, ապա նրա  
համար, որ ավելի մեծ ուժով, ավելի մեծ թափով խփենք  
թշնամուն և համաժողովրդական զինված ապստամբութեան  
ուժգին պայթյունով սրբենք բռնակալութեան վերջին հետքերը,  
բանվոր դասակարգի և գյուղացիութեան վրայից՝ ստրկութեան  
վերջին կապանքները»<sup>1</sup>:

Դեկտեմբերի 3-ի առավոտյան տեղի ունեցավ ՌՍԴԲԿ-ի  
Կենտկոմի, Պետերբուրգի կոմիտեի և բանվորների դեպու-  
տատների Սովետի համատեղ խորհրդակցությունը Վ. Ի.  
Լենինի մասնակցությամբ: Խորհրդակցությունը քննարկեց  
թերթերի և, մասնավորապես, բոլշևիկյան «Նովայա ժիզն»  
թերթի փակման, ինչպես նաև զինված ապստամբութեան  
հարցը:

Քննարկվող հարցերի վերաբերյալ Լենինյան դրույթներով  
բոլշևիկները գնացին Սովետի գործադիր կոմիտեի նիստին,  
որը բացվեց նույն օրը, ցերեկվա ժամը 4-ին:

Նշելով ստեղծված իրադրությունից, երբ կառավարությու-  
նը պատրաստվում էր հարձակվել հեղափոխութեան վրա, ձեռ-  
բակալել Սովետը, ոչնչացնել հեղափոխական կազմակերպու-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 92:

թյունները, բռնաբարությունները դնում են անհավասար զինված ապստամբություն նախապատրաստելու և անցկացնելու հարցը:

«Նոր հրապարակված փաստաթղթերից, մասնավորապես Պետերբուրգի Սովետի գործադիր կոմիտեի 1905 թ. դեկտեմբերի 3-ի նիստի արձանագրությունից երևում է, որ այդ նիստում ընդհանուր գործադուլի և զինված ապստամբության օգտին ելույթ են ունեցել միայն բռնակցության կուսակցության ներկայացուցիչներ Բ. Կնունյանցը, Պ. Կրասիկովը և Պետերբուրգի մի քանի շրջանների. ու փոստ-հեռագրատների միության ներկայացուցիչները: Բռնակցությունը նշում էին, որ ներկայումս ներքինում միայն գործադուլով մենք չենք կարող դիմանալ, որ գործադուլը կապված է զինված ելույթի հետ»<sup>1</sup>: Մենշևիկները, էսէռները և նրանց կողմնակիցները դիմադրեցին այդ առաջարկին: Գործկոմը որոշում կայացնելու հնարավորություն չունեցավ, որովհետև շուտով ձերբակալվեց: Մայրաքաղաքում սկսվեցին կառավարության պատժիչ միջոցառումները: Վ. Ի. Լենինը ստիպված էր անցնել ընդհատակ և շուտով մեկնեց Ֆինլանդիա: Պետերբուրգի նորընտիր Սովետի մեջ մենշևիկները բացարձակ մեծամասնություն կազմեցին, և նախագահ ընտրվեց Պարվուսը: Սովետը իր նոր կազմով գնաց ավելի աջ և անգործության մատնվեց: Նա ոչնչով չարձագանքեց նույնիսկ Մոսկվայի պրոլետարիատի զինված ապստամբությանը:

Այսպիսով, մենշևիկյան ղեկավարության հանցանքով, չնայած բռնակցությունների հետևողական անձնազոհ պայքարին, մայրաքաղաքի Սովետը չկարողացավ կատարել Ռուսական առաջին հեղափոխության մեջ իրեն կանխորոշած դերը: Եվ

<sup>1</sup> «КОММУНИСТ» ամսագիր, 1955, № 17, էջ 57:

այնուամենայնիվ, որպես Պետերբուրգի հեղափոխական սրու-  
լետարիատի ծնունդ, նա նշանակալից դեր խաղաց բանվոր  
դասակարգի հետագա մարտերը նախապատրաստելու գոր-  
ծում:

Պետերբուրգի Սովետի և՛ դրական փորձը, և՛ սխալները  
անկասկած օգտակար եղան:

Ինչպես ճիշտ կերպով նշել է Բ. Կնունյանցը, «առաջին  
բանվորական «պառլամենտի» գործունեության հետ մոտիկից  
ծանոթանալը այնուամենայնիվ օգտակար է բոլոր նրանց, ով-  
քեր ուզում են, որ անցյալի փորձը իզուր չանցնի, անցյալի  
սխալները չկրկնվեն, և նախկին հաջողութունները օգտա-  
գործվեն»<sup>1</sup>:

\* \* \*

1905 թ. դեկտեմբերի 3-ի նիստի ժամանակ ձերբակալվեց  
բանվորների դեպուտատների առաջին Սովետը: Դիմադրու-  
թյուն ցույց տալն անիմաստ էր, գրում է Կնունյանցը, քանի  
որ շենքը, որտեղ հավաքվել էր Սովետը, շրջապատված էր  
զորքով և ոստիկաններով: Սովետի ղեկավարների պա-  
հանջով ոչնչացվեցին կարևոր փաստաթղթերը, և հարցաքնն-  
նության ժամանակ ձերբակալվածները շասացին փրհնց անուն-  
ները: Տեղի ունեցավ չափազանց կոպիտ խուզարկություն, և  
հարցաքննություն, որը նկարագրել է «Սեվերնի գոլոս»  
թերթը<sup>2</sup>:

<sup>1</sup> Б. М. Кнунянц, Избр. произ., стр. 207.

<sup>2</sup> «Северный голос», № 1: Լույս է տեսել 1905 թ. դեկտեմբերի  
6-ից, «Новая жизнь» թերթի փոխարեն:

— «Ինչպե՞ս է ձեր ազգանունը:

— Չեմ ասի:

— Դուք սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ եք:

— Այո՛:

— Իսկ ինչո՞ւ ձեր ազգանունը չեք ասում:

— Ավելորդ եմ համարում»:

Այս պատճառով էլ ձերբակալվածների ցուցակում, համարի տակ, ազգանվան փոխարեն նկարագրվել է արտաքինը.

«Անհայտ անձնավորություն, թուխ, հասակն այսքան, այսինչ բնանշաններով»:

Երկար հարցուփորձից հետո 257 ձերբակալվածներից կարողացան միայն 52-ի անձնավորությունը որոշել: Մնացածները պահվեցին մի քանի օր և ազատ արձակվեցին:

Որպես ցարական կառավարության քաղաքականությունը բնորոշող փաստ, նշենք, որ ձերբակալվածների մի մասից, որոնք գործի հետ առնչություն չունեին, Սովետի կամ գործկոմի անդամ չէին, բայց այդ օրը պատահաբար ներկա էին եղել Սովետի նիստին, առանձնացվեցին որոշ թվով ոչ-ուսանողներ, որ ցույց տրվի, թե, իբր, պայքարը ինքնակալության դեմ կրում է ոչ թե դասակարգային, այլ ազգային բնույթ:

Կնունյանցը այսպես է նկարագրում Սովետի ձերբակալությունը այն բանից հետո, երբ արդեն բոլոր փաստաթղթերը ոչնչացված էին.

«Իսկ այնուհետև... սկսվեցին ուս հեղափոխականի համար այնքան սովորական տեսարանները. գրպանները շուռումուռ տալը, ուստիկանների զոռզոռոցները, քանտային կառ-

քեր, մեկուսացրած բանտարկութիւն...: Լիբերալների գոված հոկտեմբերի 17-ի «Սահմանադրութիւնը» այդ տեսարաններէ մեջ ոչինչ չէր փոխել»<sup>1</sup>: Ռուս հեղափոխականը պայքարը միապետութեան դեմ շարունակում է բանտում: Նրան ուժ և վստահութիւն է ներշնչում այն պայքարը, որ նրա հղբայրները մղում են դրսում: Մայրաքաղաքի պրոլետարիատը և Ռուսաստանի արդյունաբերական մյուս կենտրոնների բանվորները, կուսակցական կազմակերպութիւնների ղեկավարութեամբ, բողոքում էին ցարական կառավարութեան կամայականութիւնների դեմ: Ընդունվում էին հատուկ բանաձևեր և կոչեր: Բանվորական ժողովներն իրենց բանաձևերում դատաստանական պալատից պահանջում էին Սովետի դեպուտատների հետ միասին դատական պատասխանատւութեան ենթարկել նաև բոլոր նրանց, ովքեր իրենց ստորագրութիւնն են դրել հիշյալ բանաձևերի տակ: Իսկ մինչև դատավարութիւնը, այս ստորագրութիւնների թիվը հասավ 120000-ի: Այդ նշանակում էր, որ պայքարը շարունակվում էր, բանվոր դասակարգը հանդես էր բերում իր համախմբվածութիւնը:

Ինչպես վերն ասված է, պրոլետարական հեղափոխականի համար պայքարի ձևերից մեկը ցարական օրենքներն ու ստիկանութեանը արհամարհելն էր, ցուցմունքներ տալուց հրաժարվելը:

Կնունյանցը, որ հետաքննութեան կարճ ժամանակամիջոցում դարձավ Սարգսյանց Նիկոլայ, Պետրով, Իվանովիչ, գործի մասին ցուցմունք տալուց հրաժարվեց:

Սակայն մյուսների հարցաքննութեամբ հաստատված էր և մեղադրական ակտում արձանագրված, որ ինժեներ Նիկոլայ

1 Б. М. Кнузяня, Избр. произ., стр. 321.



Սարգսյանցը «եղել է ոչ միայն գործադիր կոմիտեի գործունեության մասնակիցներից մեկը, այլև մի քանի դեպուտատների կողմից մատնացույց էր արվել որպես նախագահության անդամի թեկնածու»<sup>1</sup>։ և որ նա «...Սովետի նիստերում հեղափոխական բովանդակությամբ ճառեր էր ասել և, որպես ձախ կուսակցությունների ներկայացուցիչներից մեկը, մտել է Սովետի կազմի մեջ, ընդ որում իր ճառերում Սարգսյանցը Սովետի անդամներին համոզում էր պատրաստվել զինված ապստամբության։ և ճառեր էր ասում ոչ միայն բանվորների դեպուտատների Սովետում, այլև՝ գործարանային բանվորների միտինգներում»<sup>1</sup>։

Կնունյանցին և մյուս դեպուտատներին մեղադրանք էր ներկայացվում, որ նրանք գործել են մի այնպիսի կազմակերպության մեջ, որը նպատակ է ունեցել «բռնի կերպով տապալել Ռուսաստանում գոյություն ունեցող քաղաքական կարգերը», և դրա համար նախապատրաստվել է զինված ապստամբության։

Գործի քննությունը տևեց հինգ ամիս։ Այդ ժամանակամիջոցում Պետերբուրգի նահանգական ոստիկանական վարչությունը Թիֆլիսի վարչությանը հարցապնդում արեց Կնունյանցի և նրա ծննդավայրի մասին, թե «արդյոք Շուշիում ապրո՞ւմ է Միրզաջան Կնունյանցի ընտանիքը, ովքե՞ր են ընտանիքի անդամները, նա ունի՞ արդյոք Բոգդան անունով որդի, որտե՞ղ է այժմ գտնվում և ինչով զբաղվում»<sup>2</sup>։

<sup>1</sup> Обвинительный акт о членах сообщества, присвоившего себе наименование: С. Петербургский «Совет рабочих депутатов», СПб, 1906, стр. 22.

<sup>2</sup> ЦГИА Груз. ССР, ф. 7С, д. 799, л. л. 166—168.

Բոգդանի ծնողները պատասխանում են, որ նրանք ունենալու էին այդպիսի տղա, բայց չգիտեն, թե նա այժմ որտեղ է և ինչով է զբաղվում:

Ստանալով Բոգդանի և նրա ծնողների լուսանկարները, ոստիկանությունը միայն կես տարի հետո է հաստատում կնունյանցի ինքնությունը, որից հետո, դատավարության ընթացքում, նա հանդես էր գալիս իր իսկական ազգանունով:

Ռուսաստանի հեղափոխական շարժումը 1906 թվականին, շնայած մի շարք խոշոր պարտություններին, դեռևս վերելք էր ապրում: Դրա մասին է վկայում նաև Սովետի դեպուտատների դատավարության հետաձգումը հունիսից մինչև սեպտեմբեր: Երբ հայտնի դարձավ, որ այն սկսվելու է սեպտեմբերի 19-ին, կուսակցության Պետերբուրգի կոմիտեն հրապարակեց մի քանի թռուցիկներ, որոնք ցրվեցին դատավարության նախօրյակին և նրա օրերին: Դրանցից մեկում ասվում էր. «Ի դեմս մեր ընտրյալների, մեղադրյալի աթոռին է նստած Պետերբուրգի ողջ պրոլետարիատը, ավելին, ի դեմս նրանց, ցարական կառավարությունը դատում է բռնության և կամայականության դեմ պայքարի ելած Ռուսաստանի ողջ բանվոր դասակարգին...

Այն, ինչ որ արել է բանվորների դեպուտատների Սովետը, արել է բանվորների անունից, բանվորների համար, բանվորների շահերի օգտին: Նրա գործը Պետերբուրգի պրոլետարիատի գործն է: Նրա հանցանքը Պետերբուրգի պրոլետարիատի հանցանքն է»<sup>1</sup>:

<sup>1</sup> Листовки Петербургских большевиков 1902—1907, т. I, 1939, стр. 427.

Բողոքները, վստահ իրենց հաղթանակի նկատմամբ, մարտակոչ նետեցին ցարական կարգերին և նրանց սպասավորներին՝ «Դուք արեք ձեր գործը, իսկ մենք՝ կանենք մերը»<sup>1</sup>։

Մեղադրյալները իրենց կոլեկտիվ դիմումով հայտարարեցին, որ իրենք որոշել են մասնակցել դատավարությանը միայն նրա համար, որ քաղաքական նպատակներով գտնուեն անհրաժեշտ՝ լայն հասարակությանը բացատրել կենսական ճշմարտությունը բանվորների դեպուտատների Սովետի գործունեության և նշանակության մասին»<sup>2</sup>։

Այս դատավարության ժամանակ Բ. Կնունյանցի և մյուս բողոքիկներին ելույթները կառավարության և գոյություն ունեցող քաղաքական կարգերի դեմ ուղղված մեղադրանքների բնույթ էին կրում, որոնց մեջ միաժամանակ բացատրվում էին մեր կուսակցության քաղաքականությունն ու տակտիկան։

Այսպես, Կնունյանցը սեպտեմբերի 28-ին Պետերբուրգի դատաստանական պալատում իր հակիրճ, բայց կրակոտ ճառում նշեց, որ կուսակցությունը պայքարի գլխավոր միջոցը համարում է պրոլետարիատի մասսայական շարժումը՝ զինված ապստամբությամբ ինքնակալությունը տապալելու և սոցիալիստական հասարակարգ հաստատելու համար։

Դատավորի հարցին, թե արդյոք իրեն հանցավոր ճանաչում է, նա հայտարարեց, որ եղել է Սովետի և նրա գործադիր կոմիտեի անդամ, և իրեն, որպես պատգամավոր, այնտեղ է ուղարկել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը։ Այնուհետև թերթի հաշվետվու-

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 431։

<sup>2</sup> В. А. Бальц, Суд над первым Советом рабочих депутатов (воспоминания прокурора), 1939, стр. 59.

թյան մեջ ասված է. «Մեղավոր է արդյոք ինքը՝ չի կարող պատասխանել, քանի որ հանցանքի մասին իր պատկերացումը և ոստիկանական պետութեան քրեական օրենսգրքի պատկերացումը խիստ տարբերվում են: Քրեական օրենսգրքի 101 և 102 հոդվածներով նախատեսված արարքները նա հանցանք չհամարում, ընդհակառակն, Սովետի գործունեությունն այդ ուղղութեամբ նա համարում է արժանի ամբողջ Ռուսաստանի քրախտագիտության»<sup>1</sup>:

Որպեսզի մեղադրյալների հանցանքը հաստատվի, իշխանությունները թույլ տվեցին մի շարք կամայականություններ՝ հրավիրեցին սուտ վկաներ, թույլ չտվեցին արտահայտվելու իսկական վկաներին կամ կամովին դատարան ներկայացած հեղափոխականներին:

Ոստիկանական պետության դատարանը, ինչպես արտահայտվում էր Կնունյանցը, իսկական դատարան չէր: Բանը հասավ այնտեղ, որ դատապաշտպանները հրաժարվեցին դատավարությանը մասնակցելուց և հոկտեմբերի 14-ին դատարանից հեռացան: Հաջորդ նիստից հեռացան նաև մեղադրյալները՝ հրաժարվելով վերջին խոսքերից: Հոկտեմբերի 18-ին դատախազն իր մեղադրական ճառն ասաց մեղադրյալների և պաշտպանների բացակայությամբ: Մեղադրյալների բացակայությամբ հրապարակվեց նաև դատավճիռը:

1906 թ. նոյեմբերի 2-ի այդ դատավճռի համաձայն 52 մեղադրյալներից 15 հոգի դատապարտվեցին ցմահ աքսորի՝ գուլթի բռնագրավումով և իրավունքների զրկումով, բանտարկության՝ երկու հոգի, մնացածներն արդարացվեցին:

Բ. Կնունյանցը գտնվում էր առաջին խմբում: Նոյեմբերի

<sup>1</sup> ЦГИА, ф. 102, оп. 143, ед. хр. 876409, т. II, пресса, 1905, л. 29.

24-ին, նախնական կալանքի տանը, նրան հայտնեցին դատավճիռը:

Կնունյանցը դատավճիռն ընդունեց շատ հանգիստ, և դրա արագ գործադրման մեջ նա տեսավ (աքսորից փախչելու միջոցով) ակտիվ հեղափոխական գործունեության վերադառնալու ուղին: Դրա համար էլ նա համարձակ կերպով պահանջեց դատավճիռը ի կատար ածել անմիջապես:

Նոյեմբերի 24-ին, դատավճիռը հայտարարելու օրը, նա դիմեց դատաստանական պալատին.

«Արդեն մեկ շաբաթից ավելի է, որ մեր գործի վերաբերյալ դատավճիռը մտել է «օրինական ուժի» մեջ, սակայն նա, ինչ-որ պատճառով, մինչև հիմա չի ուղարկվել ի կատարումն»: Եվ նա գրում էր, որ մի քանի ընկերների օրինակով, որոնք ինչ-որ չափով հավատում էին ցարական արդարադատությանը, ինքը բնավ էլ մտադիր չէ ճեղհանման խնդիրք տալու և, ստույգ կերպով հենվելով օրենքի վրա, խնդրում է դատավճիռն անհապաղ ուղարկել կատարման, քանի որ կալանքի տակ պահելը պալատի աջակցությամբ պատժի ուժեղացումն է, որ ոչնչով չի կարելի քացատրել<sup>1</sup>:

Սակայն Բ. Կնունյանցին և նրա ընկերներին բանտով պահեցին մինչև հաջորդ տարվա փետրվարը, երբ ցմահ աքսորի դատապարտվածներին էտապով ուղարկեցին Տոբոլսկի նահանգը: Այն խումբը, որտեղ գտնվում էր Բ. Կնունյանցը իր կնոջ հետ, մարտին հասավ Բերեզովսկի գավառի Օբդորսկ (ներկայումս Սալիհարդ) գյուղը, որտեղ նրանք, որպես աք-

<sup>1</sup> Ленингр. обл. истор. архив, ф. 356, д. 23871, связка 642, л. 525.

սորականներ, բնակութիւն պետք է հաստատեին երկար ժամանակով:

Տեղավորվելով Օրդորսկում, աքսորականները շուտով գրավում են տեղական բնակիչների համակրանքը, որոնք ամեն ինչում նրանց օգնում էին:

«Զնայած մեր բացառիկ վիճակին,— գրում է Կնունյանցը,— որպես կառավարութեան կողմից ճանաչված շարամիտ «հանցագործների»,— տեղի բնակիչները մեզ վերաբերվում էին իբրև ցանկալի հյուրերի և իրենցից կախված ամեն ինչ անում էին մեր աքսորը թեթևացնելու համար»<sup>1</sup>:

Տեղի վաճառականները կենսամթերքներ և այլ ապրանքներ նրանց ավելի էժան էին վաճառում, քան մշտական բնակիչներին:

Ցարիզմի հիմքերը խարխլող հեղափոխութիւնը այդ բոլորի մեջ իրեն զգալ էր տալիս, ամեն քայլափոխում զգացվում էր օպոզիցիա ինքնակալութեան դեմ: Կնունյանցը պատմում է, որ Տորոլսկի նահանգի գյուղերում շատ տարածված էին այնպիսի հեղափոխական երգեր, ինչպիսիք են՝ «Մարսելյոզը», «Վարշավյանկան», «Դուբինուշկան» և ուրիշներ, որ տեղի երիտասարդութիւնը ազատ երգում էր:

Աքսորականների ջերմ ու մարդկային վերաբերմունքին ի պատասխան տեղացիները օգնում էին, մասնակցում նույնիսկ նրանց փախուստի կազմակերպման գործին: Այդպես պատահեց նաև Բ. Կնունյանցի հետ, որին մի քանի փորձերից հետո՝ 1907 թ. մայիսի վերջին հունիսի սկզբին հաջողվեց փախչել: Շատ բանով արկածային հիշեցնող իր կյանքի այդ ժամանակաշրջանը Բ. Կնունյանցը նկարագրել է «Ծրեք ամիս

<sup>1</sup> Б. М. Кнунянц, Избр. произ., стр. 399.

աքսորում և փախուստ» հողվածում, որը տպագրվել է մարքսիստական «Օբրազովանիե» ամսագրի 1907 թ. № 9-ում<sup>1</sup>։ Մեծ տանջանքներով, յոթ օր թաքնվելով նավի ներքնահարկում, հատուկ պատրաստած արկղում, նա իր կնոջ հետ հասնում է Տորոնթո։

«Այստեղից արդեն սկսվում էր ինձ ծանոթ «տարերքը», — ավարտում է նա իր հողվածը։— Ունենալով լավ անձնագիր և փող, դժվար չէր «անորսալի» դառնալ ոստիկանության համար։ 14 ամսվա բանտարկությունից և 3 ամսվա քսորից հետո ես նորից ընկա Ռուսաստան։ Առաջին նորությունը, որ ես իմացա դուրս գալով իմ պահարանից դեպի ազատություն, դա երկրորդ դուման ցրելու և «հեղափոխական» ճանապարհով ընտրական օրենքը փոփոխելու լուրն էր։

Այդ հանգամանքները նկատի առնելով, ամենից քիչ կարելի էր ցավել, որ այնքան աշխատանք էր թափվել, նույնպես «հեղափոխական» ճանապարհով ինձ «ամնիստիայի» ենթարկելու համար<sup>2</sup>։

Փախուստից հետո Բ. Կնունյանցն իր կնոջ՝ Ելիզավետա Գոլիկովայի հետ գնաց Պետերբուրգ, որտեղից անցավ արտասահման։ Նրանք որոշ ժամանակ ապրում էին Բեռլինում՝ Կունո և Զելդա Ստիգլուսների անձնագրերով։

Որպես ՌՍԴԲԿ ականավոր գործիչներից մեկը, Բ. Կնունյանցն ընտրվեց 1907 թ. օգոստոսի վերջին կայանալիք՝ 2-րդ ինտերնացիոնալի Շտուտգարդի 7-րդ կոնգրեսի պատգամավոր։ ՌՍԴԲԿ պատգամավորությունը բաժանվում է երկու սեկցիայի՝ բուլշևիկյան և մենշևիկյան։

1 Նույն տեղը, էջ 333—386։

2 Նույն տեղը, էջ 386։

Բոլշևիկյան սեկցիայի մեջ մտնում էին Վ. Ի. Լենինը, Ի. Գոլդենբերգը (Մեշկովսկի), Ա. Լունաչարսկին, Ա. Բոգդանովը, Վ. Բազարովը, Բ. Կնունյանցը և Մ. Ցխակայան: Խորհրդակցական ձայնի իրավունքով կոնգրեսին ներկա էին Մ. Լիտվինովը և Ն. Սեմաշկոն<sup>1</sup>:

Բոլշևիկների հետ միասին օպորտունիստական թևի դեմ դուրս եկավ լեհական պատգամավորությունը, որի կազմի մեջ էր նաև Ռ. Լյուքսեմբուրգը:

Կոնգրեսի օրակարգի բոլոր հիմնական հարցերում՝ միլիտարիզմը և միջազգային կոնֆլիկտները, գաղութները և գաղութային տերությունների քաղաքականությունը, կուսակցությունների ու պրոֆմիությունների փոխհարաբերությունները և այլ հարցերում Բ. Կնունյանցը ակտիվորեն պաշտպանում էր Լենինյան դիրքորոշումը: Իսկ դա շափազանց կարևոր էր, քանի որ Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, «Շտուտգարդի համագումարը մի շարք խոշորագույն հարցերի շուրջը, ցայտուն կերպով, համեմատության մեջ դրեց միջազգային սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական և հեղափոխական թևերը և տվեց այդ հարցերի լուծումը հեղափոխական մարքսիզմի ոգով»<sup>2</sup>:

Այդ հաջողությունն անպայմանորեն բացատրվում էր միջազգային բանվորական շարժման մեջ բոլշևիկների հեղինակության բարձրացմամբ, նրանց հեղափոխական ծառայությունների ճանաչմամբ:

Շնորհիվ Լենինի հռանդուն գործունեության, որ նա հան-

<sup>1</sup> См. Н. Крутикова, Из истории борьбы В. И. Ленина против оппортунизма на международной арене., М., 1955, т. 74—75:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 89—90:



դես բերեց հանձնաժողովների նիստերում և կուսակցութեան ներկայացուցիչների սեկցիաների ժողովներում, բոլոր կարևորագույն հարցերը վճռելիս ձեռք բերվեց լիակատար միասնութիւն:

Այդ ժամանակաշրջանում արտասահմանի կուսակցական կազմակերպութիւնների գործունեութեանը Բ. Կնունյանցունեցա՞վ ակտիվ մասնակցութիւն: Բոլշևիկների կողմից նա ընտրվեց կուսակցական հերթական կոնֆերանսի պատգամավոր (կոնֆերանսի 27 պատգամավորներից 10-ը բոլշևիկներ էին, 4-ը՝ մենշևիկներ և 13-ը՝ լեհական, լատվիական կազմակերպութիւնների և բունդականների ներկայացուցիչներ):

ՌՍԴԲԿ-ի շորթորդ կոնֆերանսը («Ծրրորդ համառուսաստանյան») կայացա՞վ Հելսինգֆորսում, 1907 թ. նոյեմբերի 18—25-ը (5—12-ը): Կոնֆերանսը քննարկեց սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի տակտիկան Պետական դումայում, տեղական կազմակերպութիւնների հետ Կենտկոմի կապի ամրապնդումը և բուրժուական մամուլին աշխատակցելու հարցերը: Կոնֆերանսը ընդունեց բոլշևիկների առաջարկած որոշումները: Որոշվեց ռեակցիայի պայմաններում մասնակցել 3-րդ դումայի ընտրութիւններին և օգտագործել նրա ամբիշնը քաղաքական նպատակներով: Անթուլյատրելի համարվեց մենշևիկների անվերապահ մերձեցումը բուրժուական կուսակցութիւնների հետ և նրանց մամուլի օգտագործումը նաև կուսակցական հարցերի քննարկման համար, յստիքն՝ պարսավանքի ենթարկվեց կուլյր համագործակցութիւնը:

Բ. Կնունյանցը ակտիվորեն մասնակցեց հիմնական հարցերի քննարկմանը:

Կոնֆերանսից անմիջապես հետո նա իր կնոջ հետ Հելսինգֆորսից մեկնեց Պետերբուրգ, իսկ 1907 թ. վերջին՝ Բա-

քու: նրան փնտրում էին, և ձերբակալելու դեպքում նրան սպառնում էր տաժանակիր աշխատանքի ուղարկելու դատավճիռը:

Չնայած նշված հանգամանքներին, նա աշխատանքի անցավ՝ ապրելով Սմբատ Ալեքսանդրովիչ Մարգարովի ազգանվան տակ: Ռեակցիայի ծանր տարիներին նա ապրեց և աշխատեց անլեգալ պայմաններում: Վատառողջ վիճակը ստիպեց նրան սահմանափակել իր մասնակցությունը ընդհատակյա պրակտիկ միջոցառումներին: Սակայն նա միշտ մնում է որպես բոցաշունչ հեղափոխական, ինքնակալության և բուրժուազիայի անհաշտ թշնամի, շարունակում է իր քաղաքական գործունեությունը՝ աշխատակցելով բոլշևիկյան մամուլին («Գրուդկ», «Սովրեմեննայա ժիզն»): Միաժամանակ նա մասնակցում էր այնպիսի լեգալ բանվորական կազմակերպությունների աշխատանքներին, ինչպիսիք էին՝ «Գիտություն» ակումբը, «Գրական-գեղարվեստական խմբակը» և այլն, ուստեղ հաճախ հանդես էր գալիս դասախոսություններով ու զեկուցումներով:

Բանվոր դասակարգի քաղաքական լուսավորության խնդիրը շարունակում էր մնալ նրա ուշադրության կենտրոնում նաև ստոլիպինյան ռեակցիայի տարիներին:

Բ. Կնունյանցը համոզված էր, որ դասակարգային կռիվը շարունակվելու է բոլոր պայմաններում, քանի որ «աշխատանքի հաշտությունը կապիտալի հետ անհուսալի բան է...: Մեր շահերը և կապիտալի շահերը այնքան հակադիր են միմյանց, որ նրանց հաշտության մասին խոսելու հարկ չկա: Անհաշտ պայքար—ահա մեր փոխհարաբերությունը: Վառեկայդ պայքարը, ղեկավարել այն՝ անա մեր գլխավոր խնդիր—

եները<sup>1</sup>։ Ինչպես տեսնում ենք, բանվոր դասակարգի պայքարում նա իրեն համարում էր ոչ սոսկ շարքային մարտիկ, այլ ղեկավար գործիչ և կոչ էր անում կազմակերպվել ոչ միայն հարձակման, այլև նահանջի ժամանակ, որպեսզի պահպանվեն ուժերը՝ հանուն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի։

Ռեակցիայի պայմաններում գործադրվող զգուշութունը շօզնեց։ Վերջին տարիների նրա ակտիվ աշխատանքը հայտնի դարձավ ոստիկանությանը։

Արդեն 1909 թ. հունիսին Բաքվի ոստիկանությունը հաղորդում է իր վերադաս օրգաններին, որ «Բոգդան Կնունյանցը ներկայումս ապրում է Բաքվում ուրիշի ազգանունով»<sup>2</sup>։

Բ. Կնունյանցին ի հայտ բերելուց հետո, պահնորդական բաժինը հին, փորձված մեթոդներով սկսեց հետևել նրա յուրաքանչյուր քայլին։ Օգոստոսին նրա պաշտոնակիցների օգնությամբ լուսանկարների միջոցով փորձեցին ճշգրտել նրա անձնավորությունը, սակայն ապարդյուն։

Բայց շուտով նրան մատնեցին։ 1910 թ. սեպտեմբերի 29-ին, ութերորդ անգամ, Բոգդան Կնունյանցը ձերբակալվեց։

Կնունյանցի ձերբակալությունը խիստ ազդեց նրա ընկերների և նրան շրջապատողների վրա։ Ձերբակալությունից 7 օր հետո, հոկտեմբերի 6-ին, Բաքվի պահնորդական բաժնի պետը իր վերադասին հաղորդում էր.

«Կնունյանցի ձերբակալության տպավորությունը կազմակերպության վրա խիստ ուժեղ է...»<sup>3</sup>։

<sup>1</sup> Б. М. Кнунянц, Избр. произв., стр. 41В: Ընդգծումը մերն է։

<sup>2</sup> Архив Груз. филиала ИМЛ, ф. 91, д. 228, л. л. 7—9.

<sup>3</sup> ЦГИА, ф. 102, оп. 15, ДПЧ, ед. хр. 113, л. 35.

Կնունյանցին պահում էին Բալիլովան բանտում և հետաքննության ընթացքում, շնայած բողոքներին, շարունակ երկարաձգվում էր բանտում մնալու ժամկետը: Արխիվային վավերագրերից պարզվում է, որ մինչև իր վերջին օրերը նա չի խոստովանել, որ ինքը իրոք Կնունյանցն է: Սմբատ Ալեքսանդրովիչ Մարգարովի ստորագրությամբ նա պետական օրգաններին հեռագրեր էր ուղարկում, որ իրեն ապօրինի կերպով են պահում բանտում: Նրա զորեղ կամքը և կայունությունը հնարավորություն չտվին ոստիկանությանը պաշտոնապես պարզելու նրա անձնավորությունը, և նույնիսկ մահվան տեղեկանքում բանտի բժիշկը արձանագրեց է. «Սրանով հաստատում եմ, որ բանտի հիվանդանոցում ս. թ. (1911—ձ. Ի.) մայիսի 14-ին որովայնային տիֆից մահացել է Սմբատ Մարկարովը»<sup>1</sup>:

Բոգդան Կնունյանցը վախճանվեց 33 տարին դեռ չբուրած, իր ուժերի ծաղկման շրջանում: Նրա մահը ծանր էր կուսակցական ընկերների և բոլոր նրանց համար, ովքեր նրան գիտեին որպես կուսակցության բոցաշունչ ագիտատորի և պրոպագանդիստի, անձնուրաց հեղափոխական գործչի, ազնիվ և նրբազգաց ընկերոջ: Հակոբ Հակոբյանը 1911 թ. մայիսի 23-ին Միխայ Յխակայային ուղղած նամակում գրում էր. «Թանկագինս... Մի ամբողջ շաբաթ է, ինչ գրիչ վերցնել չ'ի կարողանում... Մեռավ լավագույն ընկերը, մեր ամենալավ բարեկամներից մեկը՝ Կնունյանցը... Մանր է: Չեմ կարող շարունակել...»<sup>2</sup>:

<sup>1</sup> ЦГИА Аз. ССР, ф. 45, оп. 8, д. 565, л. 69.

<sup>2</sup> Архив ИМЛ, ф. 157, оп. 2, д. 57, л. 49.

Կնունյանցի վիճակով, նրա բախտով հետաքրքրվում էին մեր կուսակցության ղեկավար աշխատողները:

Ն. Կ. Կրուպսկայան 1911 թ. հուլիսի 6-ին, Բեռնից ընկերներից մեկին գրում էր. «Կնունյանցն իրոք մեռել է բանտում, տիֆից... Վերջին ժամանակներս նա անլիզալ գործունեությունից հեռացել էր, քանի որ աքսորական էր և նրան սպառնում էր տաժանակիր աշխատանք»<sup>1</sup>:

Իսկ Ստ. Շահումյանը, մահախոսականում բարձր գնահատելով Բոգդանին, նրա վերջին տարիների մասին գրել է, որ չնայած իր ռեզոլոր ջանքերին՝ զգուշության նպատակով չմոտենալ անլիզալ կազմակերպությանը, ինչ որ ամենախիտ տանջանքներ էր պատճառում նրան, — օխրանկան այնուամենայնիվ գտավ նրան...»<sup>2</sup>:

Այսպես ավարտվեց կուսակցության լենինյան գվարդիայիականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Բոգդան Կնունյանցի վառվոտուն ու բովանդակալից, վաստակաշատ ու երիտասարդ կյանքը, որը ամբողջովին, առանց մնացորդի նվիրված էր բանվոր դասակարգի մեծ գործի հաղթանակին:

1 Նույն տեղը, № 20705:

2 Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1953, էջ 141:

Ինձիկյան Հովհաննես Գրիգորի  
Եվ հեղափոխությունը դատեց

Инджикян Оганес Григорьевич  
И революция рассудила

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван — 1978

Խմբագիր՝ Լ. Ս. Պողոսյան, նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան, գեղ. խմբագիր՝ Մ. Մ. Բաղդասարյան, տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննեսյան, վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ս. Սահակյան:

ИБ 370

Հանձնված է շարվածքի 24/IV 1978 թ.:

Ստորագրված է տպագրության 14/IX 1978 թ.:

Թուղթ տպագր. № 2, 70×108<sup>1</sup>/<sub>32</sub>, տպագր. 2,13 մամ. = պայմ. 5,42 մամ.,  
հրատ. 4,37 մամ.: Պատվեր 785, ՎՖ 08595: Տպաքանակ 5000: Գինը՝  
15 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և  
գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարան, Երևան,  
Տերյան 44:

Типография № 2 Госкомитета по делам издательств,  
полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван,  
ул. Теряна, 44.

1877

1878

1879

1880

1881

ԳԻՆԸ՝ 15 ԿՈԳ.

3KΠ1(092)

7v-58

h2.

..ՀԱՅԱՍՏԱՆ..